ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԹՈՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ ԱՇՈՏԻ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԻԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ. ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա.Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2018

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........................................................................................3

**ԳԼՈՒԽ I.**
**ԱՇԽԱՐՀԻԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

1.1. Աշխարհիկ պետության ծագումը և զարգացումը. պատմաիրավական վերլուծություն ........................................................................................ 13

1.2. Հայկական պետության և կրոնի հարաբերակցությունը. զարգացման էվոլյուցիան ու պատմաիրավական շրջափուլերը ..................................................25

1.3. Աշխարհիկ պետության սկզբունքի իրացման հիմնախնդիրները պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերությունների խորապատկերում. միջազգային փորձը և համեմատական-իրավական վերլուծություն ............45

**ԳԼՈՒԽ II.**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԻԿՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

2.1. Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սահմանադրաիրավական բովանդակության հիմնահարցերը. տեսական-իրավական վերլուծություն ........................................................................................67

2.2. Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական կարգավորումները աշխարհիկ պետության սկզբունքի իրականացման համատեքստում ........................................................................85

2.3. Կրթության աշխարհիկության հիմնախնդիրները և նշանակությունը Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սկզբունքի իրականացման համատեքստում ........................................................................98

**ԳԼՈՒԽ III.**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԻԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

3.1. Աշխարհիկ պետությունը սահմանադրական կարգի հիմունքների համակարգում. հարաբերակցության հիմնախնդիրները ....................................118
3.2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների իրավական հայեցակետերը պետության աշխարհիկության սկզբունքի իրականացման համատեքստում ............................128

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........................................................................................150**
**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ ..............158**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Աշխարհիկ պետության հայեցակարգը հասարակության պատմության կարևորագույն ձեռքբերումներից է: Այն որպես քաղաքակրթական արժեք իր ուրույն տեղն ունի Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքների համակարգում և փոխկապակցված է այդ համակարգի մյուս տարրերի հետ: Առանց աշխարհիկ պետության սկզբունքի իրագործման անհնար է կառուցել լիարժեք ժողովրդավարական և իրավական պետություն: Այդ իմաստով, Հայաստանի Հանրապետության զարգացման և առաջընթացի գործում այդ սկզբունքի սահմանադրական կարգավորումների հիմնախնդիրներին և դրանց լուծումներին առնչվող հետազոտություններն ունեն առանցքային նշանակություն:

Այսօր՝ աշխարհիկ պետության վերաբերյալ առկա մոտեցումները համապարփակ չեն բնորոշում նրա էությունն ու ներկա առաքելությունը: Պետության անջատումը եկեղեցուց, նրանց գործունեության ոլորտների սահմանազատումը՝ որպես աշխարհիկ պետության կարևորագույն նախապայման, շատ հաճախ մեկնաբանվում է

պետության և կրոնի միջև միմյանցից լիակատար անկախության և մեկուսացման, ինչպես նաև փոխադարձ կապեր բացառող վիճակների առկայություն: Նման հանգամանքն իր հերթին նպաստում է աշխարհիկ պետության՝ որպես ապակրոնական կամ աստվածամերժ պետության տեսակի ընկալմանը:

Աշխարհիկ պետության հայեցակարգի համարժեք գնահատման կարևորությունը ընդգծվում է Հայաստանի Հանրապետության և կրոնական կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրների հարաբերակցության ու փոխգործակցության համատեքստում: Հարկ է նկատել, որ պետության և եկեղեցու իրավահարաբերությունների հիմնահարցը, որպես պետության աշխարհիկության սկզբունքի իրացման կարևոր գործոն, գտնվում է ոչ միայն իրավագիտության ոլորտի գիտնականների և կրոնագետների հետաքրքրության անմիջական թիրախում, այլև հասարակության լայն շերտերի քննարկման համատիրույթում:

Թեմայի արդիականությունը ավելի ընդգծված նշանակություն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) իրավակարգավորումների լույսի ներքո, երբ պետության աշխարհիկության սկզբունքի նշանակության հիմնախնդիրները հանդիսանում են առանցքային այդ սկզբունքի էության ու իրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից:

**Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը:** Հայրենական իրավագիտության մեջ աշխարհիկ պետության

սկզբունքի վերաբերյալ ուսումնասիրությունները սակավաթիվ են, իսկ պետության աշխարհիկության սահմանադրա-իրավաընկալման հիմնախնդիրները գործնականում չեն հետազոտվել, ինչը հիմք է տալիս պնդելու, որ աշխարհիկ պետության՝ որպես սոցիալ-իրավական երևույթի դերը և նշանակությունը բավարար չափով չի ենթարկվել գիտական քննության, չի արժևորվել դրա էության և բովանդակության հիմնահարցերը, որը գործուն ազդեցություն է ունեցել ներպետական իրավունքի ոլորտում մի շարք բացերի և կիսալուծումների առաջացման վրա: Աշխարհիկ պետության հայեցակարգի վերաբերյալ որոշ դիտարկումներ են արվել հայ իրավագետներ Գ.Հարությունյանի, Ռ.Պապայանի, Գ. Դանիելյանի, Ռ. Ենգիբարյանի, Վ. Սայադյանի և այլոց աշխատություններում:

Սույն ատենախոսության գիտական արժեքը կայանում է նրանում, որ հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ է արվել համալիր կերպով ուսումնասիրել աշխարհիկ պետության սկզբունքի սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտ են հանդիսացել պետության և կրոնական կազմակերպությունների իրավահարաբերությունները, միմյանցից տարանջատվածությունը՝ մարդու և քաղաքացու մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի արդյունավետ իրականացման համատեքստում:

Հետազոտության առարկան է՝ պետության աշխարհիկության սկզբունքի իրականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, կրթության աշխարհիկ բնույթը, Հայաստանի Հանրապետության և

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների առկա իրավակարգավորումները, դրանց համարժեք սահմանման և մեկնաբանման հիմնահարցերը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակը՝ աշխարհիկ պետության սահմանադրաիրավական սկզբունքի և դրա իրականացման հիմնախնդիրների տեսական-իրավական համալիր վերլուծությունն է: Որպես ածանցյալ նպատակ՝ կարող է նաև նշվել աշխարհիկ պետության հայեցակարգի համարժեք մեկնաբանումը և այդ սկզբունքի դերի պատշաճ գնահատումը:

Այս առումով ատենախոսությունում առանձնացվել են հետևյալ **խնդիրները**.

-բացահայտել պետությունից եկեղեցու առանձնացման պատմաիրավական շարժառիթները, դրանց ծագման ելակետերը և հետագա զարգացման ուղիները:

-ուսումնասիրել «աշխարհիկ պետության» հասկացության էությունը, ներկայացնել «աշխարհիկ պետության» սահմանման հեղինակային դիրքորոշումը:

-ուսումնասիրել և համակարգել պետության և կրոնական կազմակերպությունների իրավահարաբերություններին վերաբերող իրավական ակտերը:

-վերլուծել միջազգային իրավունքի և ներպետական սահմանադրաիրավական նորմերի հարաբերակցության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում պետության աշխարհիկության սկզբունքի իրացման համատեքստում:

-բացահայտել արտասահմանյան առանձին երկրների իրավական փորձը պետության և

կրոնական կազմակերպությունների հարաբերակցության համատեքստում, վեր հանել աշխարհիկ պետությունների նմանությունները, պետության աշխարհիկության սկզբունքի իրացման համատեքստում առկա օրինաչափությունները:

-ներկայացնել պետության,կրոնի և իրավունքի հարաբերակցության պատմաիրավական փուլային նկարագրությունը Հայաստանի Հանրապետությունում, բացահայտել աշխարհիկ պետության գաղափարի սկզբնական արմատավորումը հայ իրավական իրականության մեջ:

-ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու իրավահարաբերությունները սահմանադրական նոր կարգավորումների լույսի ներքո:

-հետազոտել կրթության աշխարհիկության սկզբունքը՝ որպես աշխարհիկ պետության հայեցակարգի կարևորագույն բաղադրատարր: Վեր հանել կրթության աշխարհիկության սկզբունքի իրացման տեղական առանձնահատկությունները, առաջադրել հիշյալ սկզբունքի անշեղ իրացման նոր կարգավորումներ:

-համակարգել կատարված ուսումնասիրությունների և գիտական վերլուծությունների արդյունքները՝ ներկայացնելով հիմնահարցերին և դրանց լուծմանը վերաբերող գիտական եզրահանգումներ:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության իրականացման համար օգտագործվել են ընդհանուր և մասնավոր գիտական ուսումնասիրման հետևյալ մեթոդները՝ դիալեկտիկական մատերիալիզմի, պատմական-

տրամաբանական, անալիզի և սինթեզի, ձևական-իրավաբանական,իրավահամեմատական մեթոդները:

**Հետազոտության տեսական հիմքը:** Ատենախոսության համար որպես տեսական հիմք ծառայել են պետության և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների կանոնակարգման իրավական ակտերը, աշխարհիկ պետության հայեցակարգին նվիրված մենագրությունները, թեմային առարկային առնչվող ատենախոսությունները, գիտական հոդվածները, և այլ գիտական աշխատություններ:

Հետազոտության մեջ օգտագործված տեսական գրականությունից ցանկանում ենք հատկապես առանձնացնել Գ.Հարությունյանի, Ռ.Պապայանի, Գ. Դանիելյանի, Ս. Ավագյանի, Ս. Հմայակյանի, Վ. Ենգիբարյանի, Ա. Զախոյանի, Գ. Տերտերյանի, Վ. Սայադյանի, Շ. վարդապետ Անանյանի, ինչպես նաև արտասահմանյան հեղինակներից՝ Ի. Պոնկինի, Ս. Մոզգովոյի, Մ. Բուլավինայի, Գ. Լուպարևի, Լ. Իվանովայի, Ս. Դենիկաևայի, Պ. Դոզորցևի, Ա. Մեշչերյակովայի, Մ. Վորոնկովայի, Ե. Ստեպանովայի, Չ. Թեյլորի, Կ. Դուրհեմի, Խ. Կազանովայի և այլ հեղինակների գիտական աշխատությունները:

**Հետազոտության իրավական հիմքը:** Ատենախոսության իրավական հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը,ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտը, ՄԱԿ-ի Կրոնի կամ համոզմունքի վրա հիմնված անհանդուրժողականության և

խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ հռչակագիրը, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին», «Կրթության մասին» և Հայաստանի Հանրապետության այլ օրենքները, «Մտադրությունների հուշագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև», «Հայաստանյայց առաքելական եկեղեցուն վանքեր և եկեղեցիներ անհատույց՝ սեփականության իրավունքով հանձնելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերը (իրավական դիրքորոշումները), արտասահմանյան երկրների սահմա-նադրությունները, օրենքները, ինչպես նաև հետազոտության առնչվող ներպետական և արտասահմանյան միշարք այլ իրավական ակտեր:

**Հետազոտության գիտական նորույթը:** Ատենախոսության մեջ առաջին անգամ համապարփակ վերլուծության է ենթարկվել Հայաստանի Հանրա-պետության՝ որպես աշխարհիկ պետության սահմանադրաիրավական բնույթը, ինչպես նաև աշխարհիկ պետության հայեցակարգի ծագման և զարգացման պատմական գործընթացը, աշխարհիկ պետության հասկացության էությունը և հատկանիշները, կրոնի ինստիտուտի հանդեպ որդեգրած քաղաքականության տեսանկյունից առաջադրվել է պետության ձևի որակապես այլ տիպաբանություն, տրվել է «աշխարհիկ պետություն» եզրույթի սահմանման միանգամայն

նորովի մոտեցում, Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու իրավահարաբերությունների քննարկման համատեքստում տրվել է «ազգային եկեղեցի» եզրույթի սահմանումը:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները:** Ատենախոսության ընթացքում արված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. Վերլուծելով հայկական պետության և կրոնի հարաբերակցության հիմնախնդիրներն ու էվոլյուցիոն զարգացման առանձնահատկությունները, ատենախոսությամբ հիմնավորվում է այդ հարաբերությունների պատմաիրավական հետևյալ շրջափուլերն ու դրանց նշանակությունը՝ ա) Հին Հայաստանի աստվածապետական շրջան (մ.թ.ա. XXVII դ.- մ.թ.ա. VI դ.), երբ պետությունը սերտաճում էր կրոնական դասի հետ, բ) թագավորի և քրմապետի պաշտոնների առանձնացման շրջանում (սկսած՝ մ.թ.ա. VI դ.), երբ պետությունը վերահսկողության տակ էր վերցնում ամբողջ հոգևոր դաշտը սահմանելով կրոնը՝ որպես իշխանության լծակներից մեկը, պայքարում այլախոհության դեմ, գ) քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ճանաչման շրջան (մ.թ. IV-XIV դդ.), երբ պետությունը իր հովանու տակ առնելով քրիստոնեությունը, որոշ բացառություններով, իսկ եկեղեցու հետ հաստատեց գործընկերային հարաբերություններ՝ պայքարելով կրոնական բազմակարծության և այլախոհական դրսևորումների դեմ, դ) Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակաշրջան (1918-1920 թթ.), երբ պետության, կրոնի և իրավունքի հարա-

բերակցության մասով որակապես նոր իրադրություն ստեղծվեց, երբ վեցդարյա պետության բացակայությունից հետո վերստին հիմնադրվեց հայոց պետականությունը, ե)աթեիզմի խորհրդային շրջան (1920-1990 թթ.), երբ Խորհրդային Միության Սահմանադրությունը թեև երաշխավորում էր ցանկացած կրոն դավանելու կամ ոչ մի կրոն չդավանելու իրավունքը, այդուհանդերձ, պետության քաղաքականությունը, այս ոլորտում, տուրք էր տալիս աթեիստական քարոզչության ծավալմանը՝ երկրորդային նշանակություն տալով մարդկանց սահմանադրորեն ամրագրված խղճի ու կրոնի ազատության իրավունքին, զ)աշխարհիկ պետության ժամանակակից փուլ (1991 թ-ից մինչև մեր օրերը), երբ Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց աշխարհիկ պետություն, որտեղ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության, անկախ կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից և կրոնական պատկանելությունից և համոզմունքներից օրենքի առջև հավասարության իրավունք, և պետության զարգացման նման ձևաչափը համադրելի է ժողովրդավարական, ինքնիշխան, իրավական պետության կառուցման ազգային տեսլականի հետ:

2. Ատենախոսությամբ հիմնավորված է այն դիրքորոշումը, ըստ որի աշխարհիկ պետությունը պետական իշխանության կազմակերպման և գործու-նեության այնպիսի ձև է, որտեղ ճանաչվում է հոգևոր (կրոնական) կառույցների և պետական իշխանության մարմինների գործառութային առանձնացվածությունը, սեփական գործունեության տիրույթում ինքնավարության օժտվածությունը՝ միմյանց հետ հանրային խնդիրների լուծման նպատակով օրենքով սահմանված կարգով փոխգործակցության

հնարավորությամբ, ինչպես նաև երաշխավորվում է յուրաքանչյուրի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, պետական ապարատի և կրթական համակարգի աշխարհիկության սկզբունքը, պարտադիր աշխարհայացքի (գաղափարախոսության), իրավունքի աղբյուրներում կրոնական կանոնների և ուսմունքների (դոգմաների) ներառման, հոգևոր (կրոնական) կառույցներին պետական գործառույթների պատվիրակման, հոգևոր գործիչների պետական կառավարման մասնակցության անթույլատրելիությունը: Միաժամանակ աշխարհիկ պետության հասկացության բովանդակության հիմքում կարևորելով երկու տարրերի՝ պետական ծառայության աշխարհիկության և կրթության աշխարհիկության առկայությունը:

3. Միջազգային փորձի ուսումնասիրության և արտասահմանյան երկրների սահմանադրաիրավական կարգավորումների համեմատական-իրավական վերլուծության արդյունքների հիման վրա ատենախոսությամբ հիմնավորվել է պետություն-ների աշխարհիկության սկզբունքի ամրագրման որոշակի առանձնահատկությունների առանձնացումը, որպիսիք են. ա) աշխարհիկ պետության սկզբունքն իր ուղղակի ամրագրումն է ստացել պետությունների սահմա-նադրություններում, բ) աշխարհիկ պետության սկզբունքի սահմանադրական ամրագրումը կրում է միջնորդավորված բնույթ, գ) պետական կամ ավանդական կրոնի (եկեղեցու) սահմանման միջոցով է երաշխավորվում պետության աշխարհիկությունը:

4. Բացահայտելով աշխարհիկ պետության էական հատկանիշների նշանակությունը, ատենախոսությամբ հիմնավորվել են այդ

հատկանիշների հետևյալ շրջանակը՝ ա) պետական իշխանության մարմինների և հոգևոր (կրոնական) կազմակերպությունների գործառութային (ֆունկցիոնալ) բաժանումը, բ) պետական իշխանության մարմինների և հոգևոր (կրոնական) կազմակերպությունների փոխգործակցության հնարավորությունը, գ) պետության իրավական հիմքի փոխարինման անթույլատրելիությունը որևէ կրոնական ուսմունքով և դրա դոգմաներով, դ) սահմանադրական կարգավորումների մակարդակում մարդու և քաղաքացու խղճի ու կրոնի ազատության իրավունքի ամրագրումը, ե) հոգևոր (կրոնական) կազմակերպություններին պետական իշխանության գործառույթներ վերապահելու անթույլատրելիությունը, զ) պետական կառավարմանը հոգևոր գործիչների մասնակցության արգելքը: Միաժամանակ, հիմնավորվել է այն գաղափարը, ըստ որի՝ աշխարհիկ պետության հատկանիշները պայմանավորված են՝ պետական ծառայության աշխարհիկության առկայությամբ, պետական կրթության աշխարհիկ բնույթով, բարձրագույն պաշտոնատար անձանց գործողություններում կրոնական քարոզչության բացակայությամբ:

5. Կարևորելով պետությունից կրոնական կազմակերպությունների անջատվածության սահմանադրական կարգի սկզբունքի առկայության հանգամանքը, հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի աշխարհիկ պետության սահմանադրական բնութագրման էությունը պետք է բնութագրել երեք պայմանի առկայությամբ՝ 1) պետությունը չի վերահսկում քաղաքացիների վերաբերմունքը ինչպես կրոնի, այնպես էլ դրա բացակայության նկատմամբ, 2) պետությունը միջամտում է կրոնական կազմակերպությունների ներքին

գործունեությանը միայն նրանց կողմից օրենքը խախտելու դեպքում, 3) կրոնական կազմակերպությունները չեն կարող ազդել պետական մարմինների որոշումների վրա:

6. Բացահայտելով աշխարհիկ պետության սկզբունքի իրացման ու մարդու և քաղաքացու մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրականացման սահմանադրաիրավական ու միջազգային իրավական կարգավորումների վերլուծության արդյունքները, ատենախոսությամբ հիմնավորվել է այն գաղափարը, որ. ա) պետության աշխարհիկության սկզբունքն ինքնին հանդիսանում է մարդու և քաղաքացու մտքի, խղճի ու կրոնի ազատության իրացման կարևոր երաշխիք, քանի որ միայն աշխարհիկ պետության պայմաններում է մարդուն տրամադրվում խղճի ու դավանանքի ազատության հնարավորություն՝ առանց խտրականության, բ) բոլոր դեպքերում միջազգային իրավական ակտերով ամրագրված խղճի և դավանանքի ազատության վերաբերյալ իրավակարգավորումները բովանդակային առումով կարող են չհամընկնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով ամրագրված մարդու մտքի,խղճի և կրոնի ազատության իրավունքի իրավական բնորոշման հետ, սակայն, աշխարհիկ պետության սկզբունքի իրականացման համատեքստում այդ հասկացությունները օժտվում են իրավական միևնույն նշանակությամբ և բնույթով:

7. Կարևորելով սահմանադրական կարգի մյուս սկզբունքների հետ աշխարհիկ պետության հարաբերակցության հիմնախնդիրների վերաբերյալ կատարված վերլուծության արդյունքները, ատենախոսությամբ կատարվել է հետևյալ եզրահանգումը, որ. ա) Հայաստանի

Հանրապետության իրավական համակարգի արդիականացման պայմաններում դժվար է հաստատել աշխարհիկ պետության սկզբունքի ամբողջական իրացումը՝ տվյալ եզրույթի ամբողջ իմաստով, ինչը պայմանավորված է պետության և կրոնական կազմակերպությունների միջև պետական քաղաքականության հստակ ուրվագծման բացակայությամբ, բ) աշխարհիկ պետության և սահմանադրական կարգի տարբեր սկզբունքների միջև փոխգործակցությունն ու իրականացումը պահանջում է համակարգային մոտեցում,հատկապես Հայաստանի Հանրապետության սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում:

8.Բացահայտելով «ազգային եկեղեցի»իրավական հասկացության էությունն ու իրավական բովանդակությունը, ատենախոսությամբ հիմնավորվել է, որ Հայաստանի Հանրապետությունում ազգային եկեղեցին՝ Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչված և նրա պաշտպանության ներքո գտնվող Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին է, որը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում շարունակաբար ունեցած իր բացառիկ առաքելությամբ նպաստում է հայ ազգի հարատևմանը և Հայկական պետականության ամրակայմանը:

**Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:** Ատենախոսության տեսական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ համապարփակ վերլուծության է ենթարկվում աշխարհիկ պետության հայեցակարգը, որը, անշուշտ, նմանատիպ աշխատանքների զարգացման և հետագա ուսումնասիրման համար կարող է գիտական հիմնարար և կողմնորոշիչ

արժեքանական ու իմացաբանական հիմք հանդիսանալ:

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքները իրենց գործնական նշանակությունը կարող են ունենալ պետական մարմինների, կրոնագետների, իրավաբան գիտնականների՝ ոլորտին առնչվող նախաձեռնությունների ընթացքում: Բացի այդ, սույն հետազոտությունը կարող է նպաստել պետություն-եկեղեցի հարաբերությունների օրենսդրական կարգավորումների վերանայմանն ու բարեփոխմանը:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսությունը պատրաստվել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ամբիոնում: Հետազոտության հիմնական արդյունքները տեղ են գտել հեղինակի գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են տարբեր գիտական հանդեսներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են նաև տարբեր դասախոսությունների և առանձին քննարկումների շրջանակներում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ներառված ութ ենթագլուխներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկից:

## ԳԼՈՒԽ I.

## ԱՇԽԱՐՀԻԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1. Աշխարհիկ պետության ծագումը և զարգացումը. պատմաիրավական վերլուծություն

Մարդկության պատմության կարևորագույն նվաճումներից է աշխարհիկ պետության գաղափարը, որն իր մեջ ամփոփելով այնպիսի հայեցակարգային առաջնահերթություններ՝ ինչպիսիք են, օրինակ պետության և եկեղեցու առանձնացումը, մտքի, խղճի և կրոնի ազատության երաշխավորումը, կրթության աշխարհիկությունը, այսօր առավել ապես դիտարկվում է ժամանակակից աշխարհի զարգացման հիմնական ուղենիշերից մեկը:

Պետության աշխարհիկությունը՝ (state secularism)[1] աշխարհի բոլոր երկրներում ժողովրդավարական, իրավական պետության կառուցման և գործունեության հիմնական սկզբունքներից մեկն է:

Աշխարհիկ պետության գաղափարի իրավաընկալման և հետագա համապարփակ ուսումնասիրման համար հարկավոր է ամենից առաջ բացահայտել պետությունից եկեղեցու առանձնացման պատմաիրավական շարժառիթները,

---

[1] «Սեկուլյարիզմը» որպես փիլիսոփայական աշխարհայացք, մտածողության տեսակ, իր արմատներով գալիս է հնագույն ժամանակներից և կրում է անտիկ մատերիալիստական մտքի ազդեցությունը: Աշխարհիկության հիմնադիր հայր կարելի է համարել հույն մտածող Անաքսագորասին, ով ժխտում էր արևի և լուսնի վերաբերյալ աստվածային բացատրությունները և դրանց տալիս գիտական մեկնաբանում: Գաղափարի ձևավորման մեջ գործուն հետք թողեց հատկապես Էպիկուրյան փիլիսոփայական դպրոցը, որի ներկայացուցիչները մերժում էին հոգու անմահության գաղափարը, գտնում էին, որ գերբնական ուժերը ոչ մի կերպ չեն կարող ազդել մարդկանց կենսակերպի և ճակատագրի վրա: Եզրույթն առաջին անգամ գործածել է բրիտանացի գրող Ջորջ Հոլյոկը (George Holyoake) 1851 թվականին: Տե՛ս, օրինակ, **George J. Holyoake,** English Secularism: A Confession of Belief, Chicago, Open court Pub. Co., 1896, Տե՛ս, նաև **G. Smith,** A Short History of Secularism, New York, 2008, էջ՝ 21:

դրանց ծագման ելակետերը և հետագա զարգացման ուղիները:

Խրթին է միարժեքորեն տեղորոշել աշխարհիկ պետության գաղափարի ծագումը: Ակներև է այն փաստը, որ պետության աշխարհիկությունը մշտապես ուղիղ համեմատական է եղել հոգևոր իշխանության տնտեսական-քաղաքական ազդեցության սահմանափակմանը: Եկեղեցու կալվածատիրական նկրտումների դեմ ուղղված կրոնա-քաղաքական «ձեռնարկներ»[2] իրականցվել են տակավին վաղ միջնադարից, երբ հոգևոր իշխանությունը արդեն ձևավորել էր համակարգված հիերոկրատիկ կառուցվածք և ահռելի կշիռ ուներ հասարա-քաղաքական հարաբերություններում:

Պետության և հասարակության աշխարհիկացման յուրօրինակ դրսևորումներ կարելի է համարել Պապ թագավորի բարեփոխումները Մեծ Հայքում, «Պատկերամարտության շարժումը»[3]

[2] Տե՛ս, օրինակ Պավլիկյան և Թոնդրակյան շարժումները, որոնք պայմանականորեն կարելի համարել նաև հայկական ռեֆորմացիա: Պավլիկյան շարժումը ծագեց 7-րդ դարի կեսերին Արևմտյան Հայաստանում և տարածվեց Բյուզանդական կայսրության ողջ արևելքում՝ թափանցելով նաև Արևելյան Հայաստան: Պավլիկյանները մերժում էին եկեղեցին, կրոնական դասը, Հին Կտակարանը, մկրտության, և հաղորդության հոգևոր խորհուրդները: Շարժումը ճնշվել է Բյուզանդական Վասիլ 1-ին կայսրի օրոք: Թոնդրակյան շարժումը սկզբնավորվում է 9-րդ դարի 90-ական թվականներին: Այն համակարգել է գյուղացիական ըմբոստություններն ուղղված եկեղեցու, ճնշվել է 11-րդ դարում: Տե՛ս **Հ. Ներսիսյան**, Հայերի բռնագաղթն ու բավարացիների հայկական ծագումը, հայագիտական ուսումնասիրություններ, կազմ.՝ Հ. Ազիզբեկյան.-Եր.: 2011թ., էջ՝ 308-350:

[3] «Պատկերամարտությունը» («Byzantine Iconoclasm») 8-րդ դարում ծայր առած և ընդհատումներով մինչև 9-դ դարի կեսեր հասնող կրոնա-քաղաքական շարժում էր, որը արտաքինից ուղղված լինելով կռապաշտության դրսևորում դիտարկվող սրբապատկերների պաշտամունքի (պատկերապաշտության) դեմ՝ ետնախորքում եկեղեցու ազդեցության ոլորտների և քաղաքական դերի թուլացման նպատակ էր հետապնդում:

Բյուզանդիայում և այլն[4]: Սակայն, հարկ է ընդգծել, որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տարանջատման հիմնահարցերն առավելապես գտնվել են Միջնադարյան Եվրոպայի փիլիսոփաների այլախոհական մտքի ազդեցության ներքո:

Վաղ կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորմանը զուգահեռ Իտալիայում ծնունդ առավ և Եվրոպայում տարածվեց Վերածննդի դարաշրջանը: Վերջինիս գաղափարական դարբնոցում թրծվեցին այնպիսի աշխարհիկ փիլիսոփայական ուղղություններ, ինչպիսիք էին քննադատական ռեալիզմը, հումանիզմը[5], որոնք ազատագրելով մարդուն կրոնական ինքնապաշարումից՝ հռչակեցին նրան որպես բարձրագույն արժեք, բնության և տիեզերքի առանցքային տարր, կարևորեցին անկաշկանդ, նախաձեռնող մտքի և բանականության վրա հիմնված մարդակենտրոն աշխարհայեցողությունը: Այս շրջանում, երբ իրավական-քաղաքական միտքը

---

4 Տե՛ս, օրինակ Անգլիայի Հենրիխ 8-րդ թագավորի բարենորոգումները, որոնք պատմության մեջ հիշատակվում են «Թյուդորյան աշխարհիկացում» կամ «Վանքերի հիմնաքանդում» անունով («Dissolution of the Monasteries»): Տե՛ս **G.W. Bernard**, The Dissolution of the Monasteries, History Volume 96, Issue 324, October, 2011, էջ՝ 390–409:

5 Հումանիստները մարդուն դիտում էին ոչ թե դժոխային մեղքերի մեջ թաղված և ճակատագրի քմահաճույքին թողնված անգործունակ արարած, այլ ստեղծարար նախաձեռնողականությամբ օժտված և կատարելության ձգտող սոցիալապես ակտիվ էակ: Նրանց գաղափարախոսության արդյունքում աստվածային նախախնամությունը և հանդերձյալ կյանքի ձգտումը աստիճանաբար իր տեղը զիջեց երկրային երջանկությանը: Հումանիզմի առանձին միճյուղ էլ հանդիսանում է բնապաշտական (գիտական) հումանիզմը, որից սերում է աշխարհիկ հումանիստական փիլիսոփայությունը: Կրելով էվոլյուցիայի տեսության անմիջական ազդեցությունը՝ աշխարհիկ հումանիզմը ժխտում էր Աստծո գաղափարը, երկնային կյանքը, մարդուն դիտում սոցիալական էվոլյուցիայի, այլ ոչ թե արարչաստեղծության արդյունք: «Աշխարհիկ հումանիզմի հռչակագրի» սկզբունքներից մեկն էլ հանդիսանում է պետությունից եկեղեցու անջատումը: Տե՛ս աշխարհիկ հումանիզմի հռչակագիրը, ընդունվել է 1980թ., // https://www.secularhumanism.org/index.php/11:

պարուրված էր կրոնական պատկերացումների ոգով, իսկ Կաթոլիկ եկեղեցու հավատաքննության ատյանը, (ինկվիզիցիա) անողոք դատաստան էր տեսնում այլադավանության և այլակարծության ցանկացած դրսևորման նկատմամբ, հրապարակ իջան քաղաքական գործիչներ, տեսաբաններ, որոնք առաջադրեցին կրոնական հանդուրժողականության ապահովման, Կաթոլիկ եկեղեցու ներքին վերակազմավորման, պետությունից անջատման և նրա ենթակայության տակ անցնելու հիմնահարցերը:

Առաջիններից մեկը, որը սահմանազատեց աշխարհիկ և հոգևոր իշխանությունները՝ յուրաքանչյուրին վերապահելով սեփական գործունեության ոլորտը, համարվում է վաղ հումանիզմի նշանավոր ներկայացուցիչ, իտալացի բանաստեղծ Դանթե Ալիգերին: Նրա իրավաքաղաքական հայացքները ամփոփվեցին «Միապետություն» («De Monarchia») աշխատության մեջ՝ կանխորոշելով պետություն-եկեղեցի հարաբերությունների արմատական վերանայման նոր կառուցակարգեր[6]: Պապին և միապետին այլաբանորեն նույնացնելով արևի և լուսնի հետ՝ Դանթեն գրում է. «Աստված ստեղծել է երկու հսկայական լուսատուներ՝ մեծ և փոքր, որպեսզի մեկը լուսավորի առավոտյան, իսկ մյուսը՝ գիշերը: Ընդ որում, նրանք դա հասկանում են որպես այլաբանական խոսք՝ համեմատելով այն երկու՝ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հետ»[7]:

Զարգացնելով աշխարհիկ պետության մասին իր պատկերացումները, Դանթե Ալիգերին պնդում էր,

---

[6] Տե՛ս **D. Davis**, Seeds of the Secular State: Dante's Political Philosophy as Seen in the De Monarchia, Journal of Church and State, Volume 33, Issue 2, 1 March 1991, էջ՝ 327-346:

[7] Տե՛ս **H. Aurelia,** The De Monarchia of Dante Alighieri Published: Boston Houghton, Mifflin and company, 1904. էջ՝ 149:

որ՝ աշխարհիկ իշխանությունը չի կարող կախման մեջ լինել հոգևորից, ավելին նա՝ աշխարհի խաղաղության ապահովման երաշխիք տեսնում էր միասնական համաշխարհային աշխարհիկ պետության կազմավորման տեսլականի մեջ, որը կգլխավորեր Աստծո պատվիրակ միապետը (կայսրը)[8]:

Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տարանջատման սկզբունքը այլաբանորեն արտահայտվում է նաև իտալացի մտածողի «Աստվածային կատակերգություն» հանրահայտ երկում, որտեղ Դանթեն գրում է. «Հռոմ, որ աշխարհին տվել է նրա լավագույն կառուցվածքը, ուներ երկու արևներ, այնպես, որ դա տեսանելի էր, որտեղով անցնում էին աստվածային և երկրային ուղիները…»[9]:

Աշխարհիկ պետության գաղափարը իր ձևավորման ակունքներում նշմարվում է նաև իտալացի մեկ այլ մտածող, Մարսիլիուս Պադուանցու հայացքներում: Վերջինս ընդգծված կերպով հակադրվեց կրոնական վերնախավին՝ վրդովվելով պապական իշխանության հեղինակությունը[10]: Միաժամանակ, նրա կարծիքով գերագույն իշխանությունը պետք է պատկանի միայն աշխարհիկ (թագավորական) իշխանությանը, իսկ Կաթոլիկ եկեղեցին պետք է զերծ մնա աշխարհիկ իշխանության բնորոշ գործառույթներից և ապաքաղաքականացվի:

Ասվածի համատեքստում զարգացնելով իր մոտեցումները, Պադուանցին պնդում էր, որ հոգևորականը չի կարող ներկայացուցիչ հանդիսանալ աստվածային և երկրային կյանքի ճամփաբաժանում և նրա զբաղեցրած դիրքը սոսկ

---

[8] Տե՛ս **И. Н. Голенищев-Кутузов**, Данте Алигьери. Малые произведения.- М., 1968, էջ՝ 419-447:
[9] Տե՛ս **Д. Алигьери**. Божественная комедия Чистилище Песнь шестнадцатая.Перевод М. Лозинского, М.: 1982, էջ՝ 49:
[10] Տե՛ս **Patrick J. Geary,** Readings in Medieval History, 5th Edition, Canada, 2016, էջ՝ 447:

խորհրդանշական բնույթ ունի, որի արդյունքում պահանջում էր զատորոշել մարդկային օրենքները աստվածայինից: Ավելին, նա կարծում էր, որ աստվածային օրենքները հաստատվում են միայն Աստծո կողմից և արտահայտվում Սուրբ Գրքում, իսկ դրանից դուրս գործող մյուս բոլոր կանոնները և սկզբունքները կազմում են մարդկային օրենքները, որոնք ստեղծվում են մարդու կողմից[11]:

Լինելով ջատագովը մեկ միասնական օրենսդրության ձևավորման, Պադուանցին ընդգծում էր, որ բոլոր մարդիկ թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր, պարտավոր են ենթարկվել մարդու իրավունքների պարտադիր նորմերին[12]: Մարսիլիուս Պադուանցու և Յովհան Ժանդենացու համատեղ ջանքերով հեղինակած «Խաղաղության պաշտպանը» («Defensor pacis») հանրահայտ աշխատությունը, որը ոչ միայն շեշտադրում էր աշխարհիկ և կրոնական, այլ նաև օրենսդիր և գործադիր իշխանությունների առանձնացման հիմնահարցը, ըստ էության դարձավ «Ռեֆորմացիայի» տեսական-գաղափարական հիմնասյունը:

Պապական իշխանության նկատմամբ քննադատական համանման վարքագիծ է դրսևորել նաև Պադուանցու գաղափարակից, նոմինալիստ Ուիլյամ Օկկամը[13]: Նա իր «Երկխոսություն», «Ութ հարցեր պապական իշխանության մասին» աշխատություններում սուր քննադատության է ենթարկում Կաթոլիկ եկեղեցուն՝ պաշտպանելով միապետական իշխանության գերակայությունն ու ամբողջականությունը: Միաժամանակ Ուիլյամ Օկկամը առաջադիմական դատողություններ է

---

[11] Տե՛ս **Б.И. Ключко,** Законодатель в трактате Марсилия Падуанского «Защитник мира» Вестник, СПбГУ. Сер. 2. 2015, Вып. 2, էջ՝ 133-140:

[12] Տե՛ս **М. Падуанский,** Защитник мира, науч. ред., вступит, ст., примеч. Г.П. Лупарева, М.: 2014, էջ՝ 288:

[13] Տե՛ս **А.П. Курантов, Н.И. Стяжкин**, Оккам, Глава II, М., 1978, էջ՝ 34:

անում ի բնե բոլոր մարդկանց հավասարության, հավատի ազատության, պետության կողմից համընդհանուր շահի պահպանման, իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների հիմնական կարգավորչի, բնական և պոզիտիվ իրավունքի ներդաշնակության հարցերի վերաբերյալ: Հատկանշական է, որ վերոնշյալ իտալացի մտածողները լինելով հոգևոր-կրոնական դասի անխոնջ քննադատներ և աշխարհիկ պետության գաղափարի սերմանողներ, հանդես չէին գալիս Աստծո բացառման, հասարակական գիտակցությունից օտարման և աստվածխռովության դիրքերից, այլ հակառակը ընդգծում էին Աստծո՝ որպես անքննելի գերբնականության իրողությունը, իսկ միապետի իշխանությունը բխեցնում Աստծուց:

«Բարենորոգչական շարժման» սկզբնավորման գործում հիմնարար ներդրում ունեցավ նաև Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր, աստվածաբան Ջոն Ուիկլիֆը, որին երբեմն անվանում են Ռեֆորմացիայի նախահայր[14]: Նա մերժեց եկեղեցու միջնորդի դերը մարդու և Աստծո միջև, ի պաշտպանություն միապետական իշխանության ջատագովեց եկեղեցական հողերի աշխարհիկացման գործընթացը՝ հոգևոր դասի իշխանությունը ստորադասելով աշխարհիկ իշխանությանը: Ուիկլիֆի գաղափարները առավել ցայտուն արտացոլվեցին Չեխիայի ռեֆորմիստական շարժման տեսական հիմքերում՝ մեծ ազդեցություն թողնելով վերջինիս առաջնորդ Յան Հուսի գաղափարական մոտեցումների ձևավորման վրա:

[14] Տե՛ս **T. Murray,** The Life of John Wycliffe, publisher John Boyd, Edinburgh, 1829, էջ՝ 13:

16-րդ դարի վերջում Գերմանիայում, իսկ հետագայում նաև եվրոպական մյուս երկրներում ժողովրդական լայն շարժում ծավալվեց Կաթոլիկ եկեղեցու դեմ[15]: Գերմանիան ապրում էր տնտեսական և քաղաքական սուր ճգնաժամ, անկում էին ապրում առևտուրը, հողագործությունը, արհեստագործական արդյունաբերությունը, իսկ հոգևոր և աշխարհիկ կալվածատերերը և քաղաքական բուրժուազիան ժողովրդին ճնշում էին ծանր հարկերով[16]:

Այս պատմական ժամանակաշրջանում սուր բնույթ է ստանում ապակրոնականացման, աշխարհիկացման (secularization)[17] գործընթացը, որի նախաձեռնողներն էին կրոնական գործիչներ Մարտին Լյութերը, Թոմաս Մյունցերը՝ Գերմանիայում, Հանս Թաուսենը՝ Դանիայում, Ուլրիխ Ցվինգլին, Ժան Կալվինը՝ Շվեյցարիայում, Ջոն Նոքսը՝ Շոտլանդիայում, Թոմաս Կրանմերը, Հյու Լատիմերը՝ Անգլիայում և ուրիշներ:

Այդ բարեփոխումների արդյունքում աստվածակենտրոն իրավաընկալումը աստիճանաբար իր տեղը զիջեց մարդակենտրոն աշխարհայեցողությանը: Կաթոլիկ եկեղեցուց անջատված կրոնական զանազան հոսանքները այլընտրանքային մոտեցումներ առաջադրեցին, որով խարխլվեց քրիստոնեական դոգմաների աքսիոմատիկ բնույթը, իսկ Աստվածաշունչը

---

15 Տե՛ս Զրույցներ կրոնի և գիտության մասին, հանրամատչելի դասագիրք, **Ա. Բելովա և ուրիշներ**, Եր., 1965թ., էջ 254:

16 Տե՛ս **Ա. Սվասյան**, Աստվածները մեռնում են, գիտա-աթեիստական տարեգրություն, խմբ.՝ Վ.Ա. Հարությունյան, Վ.Խ. Բաղդասարյան, Եր., 1962թ., էջ 525:

17 «Աշխարհիկացումը» («սեկուլյարիզացիա») գործընթաց է, որի դեպքում կրոնը դադարում է լինել սոցիալական համախմբման առանցքային գործոն: Ֆրանսիացի քաղաքագետ, պրոֆեսոր Օլիվեր Ռոյի համաձայն՝ աշխարհիկացումը սոցիալական ֆենոմեն է, որը պահանջում է ոչ քաղաքական իմպլեմենտացիա: Տե՛ս **O. Roy**, Secularism confronts Islam, New York, 2007, էջ 7:

կորցրեց իր հեղինակությունը[18]: Անշուշտ, Կաթոլիկ եկեղեցու կրոնական դոգմատիզմի դեմ ուղղված բարենորոգչական «արշավը» ծնեց մեկ այլ ոչ պակաս դոգմատիկ ուղղություն՝ ի դեմս բողոքականության՝ նորանոր պառակտումների հեռանկար խոստանալով, սակայն արդարացված չի լինի, եթե չասենք, որ նույն շարժումը կոտրեց միջնադարյան իրավաքաղաքական և կրոնական մտքի նեղ կարծրատիպությունը՝ ճանապարհ հարթելով մարդու այնպիսի հիմնարար իրավունքներից մեկի համար, ինչպիսին է մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը:

Աշխարհիկ պետության հայեցակարգի ձևավորման շրջանում ի հայտ են գալիս աշխարհիկ գիտությունը, արվեստը, տիեզերքի վերաբերյալ աշխարհիկ ընկալումը: Կրոնական դոգմաների և պատկերացումների, ինչպես նաև կանոնական իրավունքի աստիճանական թուլացման հետ մեկտեղ ձևավորվում է աշխարհիկ իրավագիտակցությունը:

Ընդգծելով աշխարհիկ պետության գաղափարի զարգացման գործում Բարենորոգչական շարժման ժամանակ ձևավորված տեսությունների և առաջադրված սկզբունքների կարևորությունը, հարկ է հիշատակել այդ շարժման սկզբնավորման ակունքներում կանգնած ղեկավարներից մեկի՝ Մարտին Լյութերի տեսական ներդրումը: Քրիստոնյա աստվածաբան, Վիտտենբերգի համալսարանի պրոֆեսոր Մարտին Լյութերը իր «Աշխարհիկ իշխանության մասին» («On Secular authority») գիտական աշխատությունում (1523թ.) գրում է, որ «եթե ամբողջ աշխարհը կազմված լիներ իրական

[18] Տե՛ս **Ռ.Ա. Պապայան**, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, գիտ. խմբ.՝ Գ.Գ. Յարությունյան, Էջմիածին, 2002թ., էջ՝ 21-25:

քրիստոնյաներից (իրական հավատացյալներից), ապա ոչ իշխանների, ոչ թագավորների, ոչ սրի և ոչ էլ օրենքի կարիք կլիներ: Սակայն մարդկանց միայն փոքրաթիվ մասն է իրեն քրիստոնյայի պես պահում, չարերը միշտ ավելի շատ են, քան բարեպաշտները: Այդ պատճառով Աստված հաստատել է երկու կառավարման ձև՝ հոգևոր (իրական հավատացյալների համար) և աշխարհիկ (չարերին զսպող, արտաքին խաղաղությունն ու հանգիստը նրանց պահպանել ստիպող): Բայց աշխարհիկ իշխանության օրենքները տարածվում են մարմնից և ունեցվածքից ոչ հեռու: Աշխարհիկ իշխանությունը չունի ոչ իրավունք, ոչ էլ ուժ՝ մարդկանց օրենքներ թելադրելու համար: Այն ամենն ինչ կապված է հավատքի հետ, պետք է լինի ազատ: Յուրաքանչյուրի խղճի գործն է ինչպես է նա հավատում կամ չի հավատում»[19]:

Աշխարհիկ պետության հայեցակարգի նշանավոր ներկայացուցիչ իտալացի փիլիսոփա և քաղաքական գործիչ Նիկոլո Մաքիավելին քրիստոնեության՝ որպես պետական գաղափարախոսության, հակառակորդներից էր, ով որպես պատմության շարժիչ ուժ դիտարկում էր մարդկային եսասիրությունը, որի դեպքում առաջին պլան էին մղվում մարդկային բնույթի արատավոր կողմերը:

Ռուս ուղղափառ եկեղեցու արքեպիսկոպոս Ա.Վ. Մենը արդարացիորեն նկատել է, որ «Մաքիավելին արդարացնում է ամենաուժեղ մարդկային կրքերից մեկը՝ իշխանության ձգտումը»[20]: Այդ պատճառով Մաքիավելին առանձնացնում էր քաղաքականությունը ոչ միայն

[19] Տե՛ս **G.W. Forell,** Christian Social Teachings: A Reader in Christian Social Ethics from the Bible to the Present, Minneapolis, 2013, էջ՝ 108-110:

[20] Տե՛ս **А.В. Мень,** Религия, культ личности и секулярное государство (заметки историка религии): На пути к свободе совести/ Под ред. Т.Б. Рябикова., Москва, 1989, էջ՝ 99:

բարոյականությունից, այլև կրոնական կանոններից: Ընդ որում, Մաքիավելին է հանդիսանում բացարձակ, ոչնչով չսահմանափակված իշխանության հայեցակարգի հիմնադիրը, որը ձևակերպել է «Տիրակալը» հայտնի աշխատությունում[21]:

Աշխարհիկ պետության հայեցակարգի և հատկապես նրա բաղադրատարր համարվող մտքի և խղճի ազատության զարգացման գործում նշանակալի ներդրում ունի ֆրանսիացի աստվածաբան Սեբաստիան Կաստելլոն: Նա որպես անհանդուրժողականության և հալածանքի դեմ պայքարի դեղամիջոց՝ առաջադրում էր խղճի ազատության սկզբունքը, իսկ որպես թեոկրատական պետության հակակշիռ՝ առաջ էր քաշում պետության և եկեղեցու առանձնացումը[22]: Փաստորեն այլախոհական ազատամտության հենքի վրա սաղմնավորվեց այնպիսի քաղաքակրթական արժեք՝ ինչպիսին է խղճի ազատության իրավունքը:

Աշխարհիկ պետության գաղափարը վերստին արժևորվեց նաև Ռենեսանսի և Ռեֆորմացիայի գաղափարական շարունակություն համարվող Լուսավորականության դարաշրջանում[23]:

---

[21] Տե՛ս **Ն. Մաքիավելի**, Տիրակալը, թարգմ.՝ Ա. Բարսեղյան, Եր., 2010թ.:

[22] Տե՛ս **M. Hillar**, Sebastian Castellio and the struggle for freedom of conscience, Essays in the Philosophy of Humanism, Vol. 10, 2002, էջ՝ 31-56:

[23] Լուսավորականությունը՝ որպես քաղաքական և փիլիսոփայական ուղղություն, ի հայտ է եկել 17-րդ դարում՝ Անգլիայում, դասական կերպ է ստացել Ֆրանսիայում, այնուհետև լայն տարածում է գտել նաև այլ երկրներում: Հայ իրականության մեջ արտահայտվել է 18-րդ դարի երկրորդ կեսին հնդկահայ գաղթօջախում: Լուսավորականության դարաշրջանի հիմնական գծերից էր գիտելիքի և գիտության կարևորությունը, բանականության պայքարը կրոնական նախապաշարվածության նկատմամբ, սոցիալ-քաղաքական հին կարգերի քննադատությունը, պետության առաջացման պայմանագրային (հասարակական դաշինքի) տեսության առաջադրումը և այլն: Լուսավորիչները հանդես գալով ֆեոդալական դասակարգային հասարակության քննադատներ՝

Պետության և եկեղեցու առանձնացման դոկտրինը խորությամբ զարգացրեց անգլիացի լուսավորիչ, փիլիսոփա Ջոն Լոկկը: Նրա կարծիքով, եկեղեցին ազատ և կամավոր հիմունքներով միավորված մարդկանց հանրույթ է՝ Աստծո պատվին արժանանալու համար, իսկ պետությունը՝ քաղաքացիական բարիքների պահպանման և ընդլայնման նպատակով մարդկանց միավորում: Միախառնել այս երկու տարբեր ծագում, նպատակ և գործառույթ ունեցող երևույթները նույն է, թե համակցել այնպիսի անհամատեղելի երևույթներ, ինչպիսիք են երկիրն ու երկինքը[24]:

Ըստ Լոկկի, անհանդուրժողականության ծնող հիմնական պատճառը եկեղեցու իշխելու տենչն է, որին վերջ տալու համար հարկավոր է սահմանազատել աշխարհիկ և հոգևոր ոլորտները՝ մասնավորապես՝ պետությունն ու եկեղեցին, հակառակ պարագայում «եթե դա տեղի չունենա, ապա անհնար կլինի սահմանափակել այն մարդկանց միջև առկա վեճերը, որոնց համար հոգու փրկությունը և պետության շահը կամ թանկ է, կամ բնորոշվում է որպես այդպիսին»[25]:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Լոկկը ոչ միայն տարանջատում է պետությունն ու եկեղեցին, այլև կրոնական և քաղաքացիական օրենքները՝ ընդգծելով, որ «այն ինչ թույլատրվում է

---

ըստ էության հավատարիմ մնացին սեփական բուրժուական դասակարգային շահերին: «Լուսավորականություն» տերմինը առաջին անգամ գործածվել է Վոլտերի և Հերդենի կողմից: Տե՛ս **Գ.Ա. Մելքումյան**, Լուսավորականությունը որպես պատմա-մշակութային երևույթ, «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (84), Եր., 1994թ., էջ՝ 13-21:

[24] Տե՛ս **Локк Дж.** Послание о веротерпимости. Сочинения в трех томах: Т. 3.– М.: 1988, էջ՝ 103:

[25] Տե՛ս նույն տեղում, էջ՝ 94:

պետության կողմից, չի կարող արգելել եկեղեցին»[26]:

Հարկ է արձանագրել այն, որ եկեղեցին պետությունից անջատելու հետևողական գործընթացը սկիզբ դրվեց ավատատիրական հասարակական-տնտեսական հասարակարգից կապիտալիզմին անցնելու պատմափուլում: Հայտնի է, որ այդ անցումը նախանշվեց բուրժուադեմոկրատական հեղափոխություններով, որոնցից, մասնավորապես Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը գաղափարական և գործնական առաջամարտիկը դարձավ աշխարհիկ պետության ձևավորման գործընթացում[27]:

Ժողովրդավարական կարգախոսների ներքո ծավալվող հեղափոխության ալիքը նշանավորվեց քաղաքացիական պատերազմով, արյունալի տեռորով, որի թիրախ դարձան հատկապես միապետական կարգերն ու եկեղեցին: Այդ պայքարի գաղափարական, տեսական հենքը ապահովեցին ֆրանսիական մատերիալիստ-լուսավորիչները՝ Ժ. Լամետրին, Պ. Հոլբախը, Վոլտերը, Դ. Դիդրոն, Կ. Հելվեցիուսը և այլք, որոնց վրա իր հերթին հիմնարար ազդեցություն էր գործել ֆրանսիացի լուսավորիչ Պ.Բեյլի՝ «ոչ թե բանականությունը պետք է ենթարկվի հավատին, այլ հավատը պետք է ենթարկվի բանականությանը» հիմնադրույթը:

Այս տեսական մեկնակետից ելնելով՝ ֆրանսիացի «մարտնչող մատերիալիստները» կրոնը հակադրեցին բանականությանը և անողոք հարձակում սկսեցին Կաթոլիկ եկեղեցու դեմ՝ հրապարակ նետելով նրան ուղղված «Ճզմենք սողունի գլուխը» նշանաբանը: Հակակրոնական

[26] Տե՛ս նույն տեղում, էջ՝ 114:

[27] Տե՛ս **Գ. Տէրտէրեան**, Եկեղեցի-Պետութիւն յարաբերութիւններ եւ նոր աղանդաւորականներ, ներածական ակնարկ, Պէյրութ, 2003թ., էջ՝ 4:

շարժումը սուր բնույթ ընդունեց հատկապես քրիստոնեության պարագայում, որի հետևանքով ազգայնացվեցին եկեղեցական հողերը, փակվեցին մի շարք եկեղեցիներ:

Այդ շարժման ժամանակ հատկանշական էր այն, որ Ֆրանսիացի լուսավորիչների պայքարն ընդդեմ կրոնի ու եկեղեցու՝ ընդհուպ մինչև 18-րդ դարի կեսը, ծավալվում էր «դեիզմի» դրոշի ներքո, այսինքն, մի կողմից նրանք Աստծուն ընդունում էին որպես աշխարհի արարիչ, մյուս կողմից՝ պաշտպանում այն դրույթը, որ գերբնական ուժերը չեն միջամտում բնության և հասարակության զարգացմանը[28]: Սակայն հարկ է ընդգծել այն փաստը, որ իրենց հետագա նախաձեռնություններում մարտնչող մատերիալզմի տեսաբանները աստիճանաբար հաղթահարեցին «դեիզմի» սահմանափակվածությունը և բացահայտ աթեիստական կողմնորոշում որդեգրեցին:

Պետության աշխարհիկացման գործընթացի վրա էական ազդեցություն է գործել բնական իրավունքի հայեցակարգը, ինչպես նաև, քաղաքական և քաղաքացիական ազատությունների՝ հատկապես մտքի խղճի և դավանանքի ազատության արմատավորումը: Պայքարելով ֆեոդալիզմի դեմ, բուրժուազիան հանդես եկավ նաև մարդու խղճի վրա եկեղեցական-ֆեոդալական բռնության դեմ, պնդելով, որ եկեղեցին պետք է անջատվի պետությունից, և քաղաքացիներին իրավունք տրվի ինքնուրույն որոշելու իրենց կրոնական պատկանելության հարցը: Այդ իրավունքն էլ բնութագրվեց որպես խղճի ազատություն[29]:

---

[28]Տե՛ս **Վ.Ն. Կուզնեցով**, Թող չքվի խավարը, 18-րդ դարի մատերիալիստները աթեիզմի, կրոնի, եկեղեցու մասին-Եր.: 1980թ., էջ` 4:

[29]Տե՛ս **Ն.Ս. Գորդիենկո**, Գիտական աթեիզմի հիմունքներ, Եր., 1982թ., էջ` 178:

Նոր դարաշրջանում Եվրոպայի կողմից որդեգրած աշխարհիկ սկզբունքները հիմք դրեցին պետություն-եկեղեցի հարաբերությունների նոր մեկնակետին՝ կանխորոշելով աշխարհիկ պետությունների կազմավորումը: Ֆրանսիան առաջինը աշխարհում ընդունեց օրենք եկեղեցու և պետության անջատման մասին, որով ուժը կորցրած ճանաչվեց 1801 թվականի Նապոլեոն Բոնապարտի և Հռոմի Պիոս 8-րդ պապի միջև ստորագրված Կոնկորդատը[30]:

Այնուհետև, ֆրանսիական աշխարհիկ պետության մոդելը (Laïcisme) դարձավ ընդօրինակելի մի շարք եվրոպական պետությունների համար:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ը նույնպես զերծ չմնաց պետության աշխարհիկության սկզբունքի ամրագրման գործընթացից: Այս առիթով ուշագրավ է ԱՄՆ-ի Անկախության հռչակագրի հեղինակ, Թոմաս Ջեֆերսոնի պատասխան նամակը Դենբերիի բապտիստների ասոցիացիային, որը դարձավ ԱՄՆ-ի՝ որպես աշխարհիկ պետության հայեցակարգային ուղենիշը: Նամակում Թոմաս Ջեֆերսոնը մասնավորապես ընդգծում էր. «Ես համակարծիք եմ Ամերիկայի ժողովրդի այն համոզման հետ, որ օրենքը չպետք է օժանդակի որևէ կրոնի հաստատմանը կամ խոչընդոտի դրա ազատ իրացմանը, այդպիսով կառուցելով բաժանարար պատ պետության և եկեղեցու միջև[31]: Հատկանշական է, որ ԱՄՆ-ի 1787 թվականի Սահմանադրության տեքստում չկան եկեղեցին պետությունից անջատելու և կրոնական պաշտամունքներն ազատ կատարելու վերաբերյալ հոդվածներ: Դրանք մտցվեցին միայն

[30]Տե՛ս **И.В. Понкин,** Столетие французского закона о разделении церквей и государства.–М.: 2005, էջ` 21:

[31]Տե՛ս **L. Dreisbach**, Sowing Useful Truths and Principles: The Danbury Baptists. Thomas Jefferson, and the Wall of Separation, Journal of Church and State, Volume 39, Issue 3, 1 July 1997, էջ` 455–501:

1791 թվականին ընդունված «Իրավունքների մասին բիլլում»:

Միաժամանակ պատեհ է արձանագրել, որ ֆրանսիական լուսավորիչների մատերիալիստական գաղափարախոսության ներքո ռուս տեսաբանները յուրովի իմաստավորեցին պետությունը եկեղեցուց անջատելու, ապա և հասարակական կյանքից լիովին դուրս մղելու դոկտրինը՝ կանխորոշելով աստվածամերժական համակարգի ստեղծումը: Հատկանշական է, որ Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության երկրորդ համագումարում (1903թ.) որպես ծրագրային դրույթ սահմանվեց խղճի անսահման ազատությունը և եկեղեցու անջատումը պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց[32]:

Այսպիսով՝ ամբողջացնելով կատարված վերլուծության արդյունքները կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

ա) աշխարհիկ պետության գաղափարը վաղ միջնադարից հասունացած և էվոլյուցիոն զարգացման ուղի անցած քաղաքակրթական արժեք է, որի շնորհիվ մշակույթը, գիտությունը, իրավունքը, հասարակական կյանքը ձերբազատվեցին կրոնական միակողմանի մոտեցումներից և վերջինիս՝ պետական կառավարման, ինչպես նաև քաղաքականության վրա ունեցած ահռելի դերակատարությունից,

բ) թեև աշխարհիկ պետության առաջացումը, մեծ մասամբ, նախանշվեց եկեղեցու դեմ պայքարով, որոշ դեպքերում վերածվելով նույնիսկ աստվածանարգության, այդուհանդերձ, իր էությամբ, այդպիսի պետությունը չդիտարկվեց աստվածամերժական, այլ սահմանազատելով

---

[32] Տե՛ս **Ն.Մ.Լուկին**, Եկեղեցի եւ պետութիւն, Մոսկւա, 1919թ., էջ՝ 36:

պետական և կրոնական ոլորտները՝ դարձավ մտքի և խղճի ազատության իրավունքի ապահովման հուսալի պատվար,

գ) պետության և եկեղեցու առանձնացումը՝ որպես աշխարհիկ պետության գաղափարի կենսագործման հիմք, առաջին անգամ ամրագրվեց Ֆրանսիայի Հանրապետության իրավունքի նորմերում՝ կանխորոշելով դրա հետագա տարածումը աշխարհի բազմաթիվ երկրներում:

## 1.2. Հայկական պետության և կրոնի հարաբերակցությունը. զարգացման էվոլյուցիան ու պատմաիրավական շրջափուլերը

Աշխարհիկ պետության սահմանադրական ամրագրումը Հայաստանի Հանրապետությունում, անշուշտ, ժողովրդավարական հասարակարգ կառուցելու անհրաժեշտ պայման է: Բայց կրոնի և հոգևոր դասի նկատմամբ ունեցած վերաբերմունքի խորապատկերում անհրաժեշտ է Հայաստանի պատմաիրավական վերլուծության համատեքստում կարևորել աշխարհիկ պետության զարգացման էվոլյուցիան՝ պարզելով հայ իրականության մեջ աշխարհիկ պետության նախատիպի, վերջինիս բաղադրատարր հանդիսացող խղճի և դավանանքի ազատության սահմանման շրջանակները:

Ակնհայտ է, որ Հայաստանի պատմության սկզբնական շրջանից մինչև Հայաստանի երրորդ Հանրապետության միջև ընկած ժամանակահատվածում աշխարհիկ և հոգևոր իշխանությունների իրավական փոխհարաբերակցության հիմնախնդիրները տարբեր կերպ են բնութագրվել՝ հաշվի առնելով նախաքրիստոնեական և հետքրիստոնեական հայկական պետության ձևի

առանձնահատկությունները, պետություն և Հայ առաքելական եկեղեցի հարաբերակցության հիմնախնդիրների կարևորությունը:

Ասվածի համատեքստում կարելի է պայմանականորեն առանձնացնել պետության և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների և դրանց էվոլյուցիոն զարգացման հետևյալ պատմաիրավական շրջափուլերը՝ 1) աստվածապետական շրջան, 2) թագավորի և քրմապետի պաշտոնների առանձնացման շրջան, 3) քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ճանաչման շրջան, 4) Հայաստանի առաջին Հանրապետության շրջան, 5) աթեիզմի խորհրդային շրջան, 6) աշխարհիկ պետության ժամանակակից շրջան: Ընդ որում, այդ փուլերն ունեն իրենց զարգացման առանձնահատկություններն ու նշանակությունը: Մասնավորապես.

**Առաջին**, աստվածապետական շրջանում Հին Հայաստանում թագավորական իշխանության կողքին գոյություն ուներ մեկ այլ ազդեցիկ դաս՝ հանձին քրմական դասի: Քրմական դասին բնութագրական էր պետական կառավարման և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ունեցած առանցքային դերակատարությունը: Սկզբնական շրջանում թագավորական ընտանիքն իր ձեռքում էր պահում քրմապետի պաշտոնը, թագավորը հանդես էր գալիս նաև որպես քրմապետ:

Շումերական հնագույն արձանագրություններում կան վկայություններ հայոց առաջին պետական կազմավորման՝ Արատտայի մասին[33]: Արատտան, որը շումերական

[33] Արատտայի տեղադրության վերաբերյալ պատմագիտության մեջ չկա միասնական կարծիք: Տարբեր հեղինակներ այն տեղադրել են Աֆղանստանի, Իրանի և Հայաստանի տարբեր

դյուցազնավեպում հիշատակվում է որպես «սուրբ օրենքների և անմահների» երկիր, եղել է աստվածապետություն (թեոկրատիա), որում աշխարհիկ և հոգևոր իշխանությունը գտնվում էր հոգևոր դասի ձեռքում, որն էլ Աստծո անունից կառավարում էր երկիրը[34]: Արատտայի արքան, որն իրեն համարում էր պատերազմի աստվածուհի Ինաննայի կողմից նշանակված արքա, միաժամանակ նաև երկրի գերագույն քուրմն էր: Նրան կից գործում էր բարձրագույն խորհրդակցական մարմին՝ Ավագների ժողովը, որի իշխանության ներքո գտնվում էին աշխարհիկ և հոգևոր ոլորտները: Աստվածապետությունը՝ որպես պետության ձևի բնութագրիչ, բնորոշ է եղել նաև Արատտային հաջորդած հայկական մյուս պետական կազմավորումներին: Վանի թագավորությունը (Ուրարտու)ուներ իր պետական կրոնը,որը՝ որպես տերության տարբեր ժողովուրդների երկրպագած աստվածությունների և հավատալիքների մի կուռ համակարգ,Հայկական լեռնաշխարհի բնակչության միաձուլմանը նպաստող հանգամանքներից մեկն էր[35]: Արարատյան թագավորության իշխող հարստությունը կրոնապես կապված էր Խալդի պաշտամունքային կենտրոն Մուսասիրի տաճարի հետ: Թագավորը հանդիսանում էր գերագույն

---

շրջաններում: Մեր դատողություններում որպես հիմք ընդունել ենք պատմաբաններ՝ Արտակ Մովսիսյանի և Մարտիրոս Գավուքչյանի տեսակետները՝ Արատտայի տեղորոշման, պետական կառուցվածքի և այլ հարցերի վերաբերյալ: Տե՛ս **Մ.Ս. Գավուքճյան**, Ուսումնասիրություններ հայոց հնագույն պատմության, կազմող և հրատարակիչ Հ.Ազիզբեկյան, Եր., 2010թ., էջ՝ 232-242; **Ա.Ե. Մովսիսյան**, Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա (Ք.ա.28-27-րդ դարեր), Եր., 1992թ., էջ՝ 79:

[34] Տե՛ս **Ա.Ե. Մովսիսյան**, Հայոց 5000-ամյա պետականությունը, գիտահանրամատչելի պատկերագիրք (երկրորդ բարեփոխված հրատարակություն),Եր.,2016թ.,էջ՝ 9:

[35] Տե՛ս **Ս.Գ.Հմայակյան**,Վանի թագավորության պետական կրոնը, (պատ. խմբ.՝ Բ.Բ. Պիոտրովսկի) ՀԳԱ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտ-Եր.,1990թ.,էջ՝ 9:

աստված Խալդիի ներկայացուցիչը և գործում նրա անունից:

Հասարակության արտոնյալ խավերից մեկը հանդիսացող քրմական դասը վայելում էր թագավորական իշխանության հովանավորությունը: Քրմերը գործում էին ուրարտական արքաների կառուցած տաճարներում, տնօրինում տաճարական սեփականություն հանդիսացող գույքը, որը հիմնականում գոյանում էր արքաների կատարած նվիրաբերություններից: Այդ պատճառով քրմական դասը անվերապահորեն ընդունում էր միապետի բացարձակ իշխանությունը և նրա գերակայությունը պետական և հասարակական կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ:

Այս շրջանի իրավական աղբյուրները արտահայտվել են սեպագիր արձանագրությունների տեսքով[36]: Դրանք շարադրված են հիմնականում ժամանակին բնորոշ կրոնական պատկերացումների ոգով, որտեղ ամենախիստ իրավական պատասխանատվությունը համարվում էր աստվածային պատիժը:

Այսպիսով, չնայած այս շրջանում առավելապես խոսք կարող էր գնալ միայն կրոնի և պետության սերտաճման մասին, քանի որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունը գտնվում էր հենց հոգևոր դասի ձեռքում: Այնուամենայնիվ թագավորական իշխանության հովանավորությունը վայելող քրմական դասի կողմից միապետի բացարձակ իշխանության ընդունումն ինքնին վկայում է պետությունից կրոնական դասի անջատվածության մասին:

---

[36] Տե՛ս **Ռ.Հ. Ավագյան**, Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IX դ. - մ.թ. XIX դ.).- Եր.: 2001. Հ. 1. Էջ` 75-84:

Այս հանգամանքը թերևս խոսում է աշխարհիկ պետության վաղ ձևավորման շրջանի վերաբերյալ ընդհանուր պատկերացումների մասին:

**Երկրորդ**, թագավորի և քրմապետի պաշտոնների առանձնացման շրջանի վերաբերյալ.

Հայոց Երվանդունիների օրոք արմատական փոփոխություն է տեղի ունենում պետական կառավարման համակարգում՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերակցության տեսանկյունից: Եթե նախկինում հայոց թագավորը հանդես էր գալիս որպես քրմապետ-արքա, այժմ արդեն տարանջատում է մտցվում արքայի և քրմապետի պաշտոններում[37]: Պատմահայր Մովսես Խորենացին վկայում է, որ Վաղարշակ թագավորը քրմապետի պաշտոնը ժառանգաբար հանձնում է հայկական հին ազգատոհմերից մեկին՝ Վահունիներին, որոնք իրենց համարում էին Վահագն աստծո հետնորդներ[38]:

Արքաները փորձում էին իրենց մերձավոր ազգականներին քրմապետ նշանակելու միջոցով կանխատեսելի դարձնել հեղինակավոր և ազդեցիկ այդ դասը: Թագավորի ազգականներին էր վերապահված նաև քրմական ծեսերի կատարումը: Մովսես Խորենացին վկայում է Երվանդ 4-րդ Վերջին թագավորի կողմից իր եղբայր Երվազին քրմապետ նշանակելու փաստը[39]: Մեկ այլ վկայությամբ Արտաշես Ա Բարեպաշտը իր որդի Մաժանին նշանակում է Արամազդի կուռքի քրմապետ[40]:

---

[37]Տե՛ս **Ա.Ե. Մովսիսյան**. Հայոց 5000-ամյա պետականությունը, գիտահանրամատչելի պատկերագիրք (երկրորդ բարեփոխված հրատարակություն), Եր., 2016թ., էջ՝ 29:

[38]Տե՛ս **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Եր., 1991թ., Գլ., Ը:

[39]Տե՛ս Նույն տեղում, Գլ., Խ:

[40]Տե՛ս Նույն տեղում, Գլ., ԾԳ:

Վերոհիշյալ վկայությունները առհավատչյան են այն պնդման, որ քրմապետության պաշտոնի նշանակումը անմիջականորեն կախված էր թագավորի հայեցողությունից և քաղաքական դիրքի ամրապնդման նպատակ էր հետապնդում:

Քրմական դասը դատավարական գործառույթների հետ մեկտեղ, թագադրում էր նաև հայոց արքաներին: Այսպես, ավանդույթի ուժով հայոց Բագրատունիները ունեին նման պատվաբեր արտոնություն: Հաշվի առնելով «բագ» բառի ստուգաբանական նշանակությունը ենթադրվում է, որ Բագրատունիները նախկինում եղել են քրմական տաճարի սպասավորներ[41]:

Քրիստոնեության տարածումը Հայաստանում հանդիպեց պետության կտրուկ դիմադրությանը: Պետությունը վերահսկողության տակ էր վերցնում ամբողջ հոգևոր դաշտը՝ սահմանելով կրոնը որպես իշխանության լծակներից մեկը, պայքարում այլախոհության դեմ: Պատմիչ Ագաթանգեղոսը իր երկում մեջբերում է Տրդատ 3-րդ Մեծ արքայի երկու հրովարտակները, որտեղ պատիժներ էին սահմանվում նրանց նկատմամբ, ովքեր կհարեին այլ կրոնի կամ կորդեգրեին հեթանոսությունից դուրս այլ դավանանք[42]:

Այնուհետև, Տրդատ թագավորի հրապարակած հրովարտակներից, ինչպես նաև հռոմեական Դիոկղետիանոս կայսրի՝ Տրդատին ուղղված հրովարտակի բովանդակությունից հստակ երևում է, որ քրիստոնեությունը այդ շրջանում ուներ աղանդի կարգավիճակ և նրա նկատմամբ կար պետական ընդգծված դիմադրություն: Հետագայում քրիստոնեության ճանաչմամբ պարզապես մի

---

[41]Տե՛ս **Ս.Մ. Կրկյաշարյան**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա.VI-մ.թ.IVդդ.), Եր., 2005թ., էջ՝ 145:

[42]Տե՛ս **Ագաթանգեղայ**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ.Տեր-Մկրտչյանի և Ս.Կանայանցի, Եր., 1983թ., էջ՝ 83:

ամբողջատիրական հավատամքը փոխարինեց մյուսին և արգելք դրվեց այլադավան ուղղությունների վրա:

Հայ ժողովրդի իրավունքի հուշարձանների անտոլոգիայից հայտնի է, որ Տրդատ Մեծի կողմից քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու քաղաքական ակտը «նոր կրոնի կենտրոնաձիգ հիերոկրատական սիստեմին» ապավինելու միջոցով թուլացած իշխանությունը հզորացնելու մտադրություն էր, որը, սակայն, եկեղեցու հզորացմամբ այլ ընթացք ստացավ[43]:

Այսպիսով, այս շրջանում նույնպես խոսք չէր կարող գնալ աշխարհիկ պետության ժամանակակից իրավաընկալման մասին: Թեև կրոնական բազմակարծությունը և առհասարակ մտքի, խղճի ազատության իրավունքը ոչ միայն գոյություն չուներ, այլ նաև չկար դրա սաղմնավորմանը նպաստող տեսանելի հեռանկար, այնուամենայնիվ, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու քաղաքական ակտի արդյունքում էլ ավելի խորացավ պետության ազդեցությունը կրոնի նկատմամբ, ինչն իր հերթին աշխարհիկ պետության զարգացման վրա հետագայում էական նշանակություն ունեցավ:

**Երրորդ**, քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ճանաչման շրջանի վերաբերյալ.

Հայոց Արշակունիների թագավորության շրջանում քրիստոնեությունը հռչակվեց պաշտոնական կրոն և պետական մակարդակով սկսվեց քրիստոնեության տարածումը: Հարկ է նկատել, որ նախքան 4-րդ դարում պետական կրոնի հռչակումը, հայոց Աբգար թագավորի շրջանում արդեն իսկ սաղմնավորվել էր պետական մակարդակով

---

[43] Տե՛ս **Խ.Ս. Սամուելյան**, Հին հայ իրավունքի պատմությունը, հատ.1, Եր., 1939թ., էջ՝ 41:

քրիստոնեության տարածումը: Քրիստոնեաներ արքայի հրամանով դադարեցվում և արգելվում էր տաճարական հաստատությունների կրոնական գործունեությունը[44]: Եթե մինչ քրիստոնեության ընդունումը պետությունը դաժան հաշվեհարդար էր տեսնում այն դավանողների և քարոզողների նկատմամբ, ապա քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո աշխարհիկ և հոգևոր իշխանությունները միմյանց հետ դաշնակցած սկսեցին կատաղի պայքար մղել քրմական դասի և «կուռքերին պաշտողների» դեմ:

Քրիստոնեության հաղթարշավը, ապա և պաշտոնական կրոնի կարգավիճակի ամրագրումը, ըստ էության, ոչինչ չփոխեց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններում: Փոխվեց միայն հոգևոր սուբյեկտը, բայց փոխհարաբերությունների տրամաբանությունը մնաց նույնը: Եկեղեցական դասը քրմությունից ժառանգեց հոգևոր իշխանությունը: Եկեղեցուն էր տրված նաև մեծ դատավարության գործակալությունը[45]: Ընդհանրապես հոգևոր դասը իր աստիճանակարգությամբ, ներքին կուռ կառուցվածքով, հարկեր գանձելու և հարկերից ազատված լինելու առանձնաշնորհ կարգավիճակով, պետություն ներսում հոգևոր միապետություն էր: Ողջամիտ պետք է համարել փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Կ. Միրումյանի այն դիտարկումը, որ մի կողմից Եկեղեցու` որպես յուրահատուկ նախարարության «կենտրոնախույս միտվածությունը թագավորական իշխանության բացարձակության վիճարկման մեջ էր... մյուս

[44] Տե՛ս **Յ. Վարդ. Մովսիսեան**, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւն, Վաղարշապատ, 1884թ.-ՌՅԼԳ, էջ` 3-4:
[45] Տե՛ս **Հ.Հ. Մանանդյան**, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Եր., 1934թ., էջ` 60:

կողմից՝ որպես միասնական համապետական կազմակերպություն և գաղափարախոսության կրող՝ այն կենտրոնաձիգ էր»[46]:

Պետության վերաբերող կարևորագույն հարցերը քննարկվում էին աշխարհաժողովներում, որոնց մասնակցում էին բարձրաստիճան նախարարներ, զինվորականներ, դատավորներ և այլք: Հատկանշական է, որ այս ժողովներում էր քննարկվում հոգևոր առաջնորդի ընտրության հարցը[47]: Աշխարհիկ և հոգևոր դասերի հիերարխիկ համակարգերին բնորոշ էր կուռ կառուցվածքը, վասալային հարաբերությունները և սուբորդինացիան (ենթակարգությունը): Այսպես, օրինակ, Հայոց Կաթողիկոսը իրենից ցածր օղակներում գտնվող արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների նկատմամբ ուներ նույն դիրքը, ինչ որ թագավորը իր ենթակա իշխանների նկատմամբ: Կաթողիկոսը իր հեղինակությամբ շատ հաճախ գերազանցում էր թագավորին: Պատահական չէ այն փաստը, որ Հայոց Հայրապետն էր երբեմն հիշատակվում «այր մեծ և աւագ և աշխարհի միոյ գլուխ»[48]:

Շատ դիպուկ է նկատում ականավոր հայագետ, եկեղեցական գործիչ Մաղաքիա արք. Օրմանյանը. «...կաթողիկոսական իշխանութիւնը Հայոց մէջ պարզապէս եւ բացարձակապէս եկեղեցական չէր: Բոլոր հայրապետները յատուկ դիրք և յատուկ ձեռներէցութիւն կը վայելէին պետական գործերու մէջ, թե իբր Պահլաւունեաց կամ Պարթեվազանց տան նահապետ, թէ թագաւորական

---

[46]Տե՛ս **Կ. Միրումյան**, Քրիստոնեությունը Հայ ժողովրդի պատմական ճակատագրում, հայոց եկեղեցի և պետություն, 2-5.03.2000թ., էջմիածին-Օշական-Ծաղկաձոր // Միջազգային գիտաժողովի նյութեր.-Եր., 2000թ., էջ՝ 18:
[47]Տե՛ս **Փաւստոսի Բիւզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք.Պատկանյանի, Եր., 1987թ., էջ՝ 72:
[48]Տե՛ս նույն տեղում, էջ՝ 140:

տոհմին արենակից եւ խնամի իշխանազուն, եւ թէ իբր եկեղեցական իշխանութեան պետ, որ հոգեւորական, կրթական, բարեգործական եւ դատական գործերու վրայ գերագոյն ձեռնհասութիւններ»[49]:

Եկեղեցին իր ստեղծման օրվանից ստանձնեց արդարադատության իրականացման գործառույթը, որը պահպանեց նույնիսկ պետականության բացակայության պայմաններում: Եկեղեցական կանոնները՝ որպես հասարակության ամենատարբեր ոլորտները կարգավորող իրավանորմեր, ընդունվում էին եկեղեցական ժողովներում[50]:

Այդ ժողովները, ըստ էության, նաև ազգային ժողովներ էին, որովհետև շոշափում և քննարկում էին ինչպես հոգևոր-դավանաբանական, այնպես էլ աշխարհիկ-կենցաղային բնույթի հարցեր և ենթակա էին պարտադիր կատարման ամբողջ Հայաստանի բնակչության կողմից:

Խոսելով Աշտիշատի, Շահապիվանի, Աղվենի, Դվինի, Պարտավի, Սսի (1243թ.), Ջագավանի (1268թ.), Երուսաղեմի (1651թ.) ժողովների մասին և ընդգծելով դրանց ընդհանուր բնորոշիչ մի շարք հատկանիշներ, ինչպիսին է՝ հրապարակայնությունը, գերակայությունը այլ որոշումների նկատմամբ, գաղափարական հստակ ուղղվածությունը, ազգային համաձայնությամբ ընդունվելու հանգամանքը, պրոֆեսոր Գ.Գ.

---

49 Տե՛ս **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Ա, գիրք Ա Բ Գ, Պէյրութ, 1959թ., էջ՝ 93:

50 Տե՛ս **Ռ.Հ. Ավագյան**, Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IXդ.-մ.թ. XIXդ.).-Եր.: 2001. Հ.1. էջ՝ 17:

Հարությունյանը հանգում է այն եզրակացության, որ դրանք սահմանադիր ժողովներ էին[51]:

Բացի բարձրագույն հոգևոր դասի անդամներից, այդ ժողովներին մասնակցում էին նաև աշխարհիկ գործիչներ՝ նախարարական տան անդամներ, իշխաններ, երբեմն նույնիսկ արքաներ: Պատմիչ Փավստոս Բուզանդը Աշտիշատի ժողովի վերաբերյալ տալիս է հետևյալ բնորոշումը. «...կարգեցին, կազմեցին, կանոնեցին, յօրինեցին»[52], որից պարզ է դառնում, որ այս ժողովները ոչ միայն հոգևոր բնույթի կանոններ էին սահմանում, այլև ինչպես «յօրինեցին» (օրենք) բառն է հուշում, իրականացնում էին օրինաստեղծ գործունեություն: Եկեղեցու իրավակարգավորիչ դերը, մասնավորապես, դրսևորվում էր ընտանեկան իրավունքի՝ ամուսնության, որդեծնության, ազգակցության աստիճանների, ծնողների ու զավակների փոխհարաբերությունների սահմանման գործում[53]:

Հարկ է նկատել, որ Եկեղեցու դավանաբանական, վարչական, իրավական համակարգի կանոնականացումը տեղի ունեցավ 8-րդ դարի 20-ական թվականներին, երբ Հովհան Օձնեցի կաթողիկոսը մինչ այդ գոյություն ունեցող եկեղեցական 17 իրավական հուշարձաններին ավելացնում է ևս 7 կանոնախումբ[54]: Արդարացի է պրոֆեսոր Ռ.Հ. Ավագյանի այն պնդումը, ըստ որի՝ հայ կանոնական իրավունքը ոչ միայն դարձավ իրավական մտքի

[51]Տե՛ս **Գ.Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Եր., 2016թ., էջ՝ 85:

[52]Տե՛ս **Փաւստոսի Բիւզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք.Պատկանյանի, Եր., 1987թ., էջ՝ 118:

[53]Տե՛ս **Խ.Ս. Սամուելյան**, Հին հայ իրավունքի պատմությունը հատ.1, Եր., 1939թ., էջ՝ 43:

[54]Տե՛ս **Ա.Բոզոյան**, Հայոց կանոնագրքի ձևավորման սկզբնական փուլը, Քրիստոնեություն և իրավունք // Միջազգային խորհրդաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2001թ., էջ՝ 98:

կարևոր աղբյուր, այլ նաև դիտարկվեց հայոց իրավունքի պատմության գիտական արժեք[55]:

Սկզբնական շրջանում հայոց կաթողիկոսների ձեռնադրումը անմիջականորեն պայմանավորված էր հունական մետրոպոլիտի և Կեսարիայի եկեղեցական սինոդի համաձայնությամբ: Բայց Արշակ 2-րդ թագավորը խախտեց այս ավանդույթը և Ներսես Մեծին փոխարինած Չունակին այլևս չուղարկեց Կեսարիա, այլ հրահանգեց տեղական ծեսով կատարել օծումը՝ դրանով իսկ հիմք դնելով համարձակ նախադեպի ձևավորմանը: Եկեղեցու ազգայնացման գործընթացը վճռական կերպով շարունակեց Պապը՝ առանց Կեսարիայի թույլտվության Շահակ Ա Մանազկերտցուն ձեռնադրելով Հայոց կաթողիկոս: Փավստոսի վկայությունից երևում է, որ Պապի ժամանակ, թերևս առաջին անգամ Հայաստանի քրիստոնեական պատմության մեջ, ներդրվեց խղճի և դավանանքի ազատության, նախընտրած կրոնին հարելու իրավունքը: Արդյունքում՝ մարդկանց մի մասը վերադարձավ հին հավատքին, յուրաքանչյուր ոք «զինչ և կամէին գործել, համարձակութեամբ գործէին»[56]: Պապը միաժամանակ վերացրեց պտղի և տասանորդի հարկերը, հօգուտ արքունիքի բռնագրավվեց եկեղեցուն պատկանող յոթ հողերից հինգը, թողնելով ընդամենը երկուսը մեկ քահանայի և մեկ սարկավագի համար, իսկ հոգևոր սպասավորների ազգականներին ծառայության մտցրեց արքունիքում: Մազդեզական կրոնը դավանող Պարսկաստանի հետ մերձեցումը, անշուշտ, պետք է ծայրահեղորեն սրեր մի կողմից՝ թագավորի և եկեղեցու, մյուս կողմից՝ թագավորի և

---

[55] Տե՛ս **Ռ.Հ. Ավագյան**, Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IX դ.- մ.թ. XIX դ.).- Եր.: 2001. Հ.1. էջ՝ 66:

[56] Տե՛ս **Փաւստոսի Բիւզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք.Պատկանյանի, Եր., 1987թ., էջ՝ 352:

բյուզանդական վերնախավի հարաբերությունները, ինչի հետևանքով Պապը դավադրաբար սպանվեց:

Ակնհայտ էր, որ խղճի և դավանանքի ազատության իրավունքի հիման վրա նոր համարակարգ կառուցելու Պապ թագավորի մշակած մոդելը, որտեղ յուրաքանչյուր ոք դավանում էր այն ինչ ցանկանում էր, աշխարհիկ պետություն ստեղծելու համարձակ տեսլական էր: Որքան էլ եկեղեցական մատենագիրները անվանարկեն Պապին, ամեն դեպքում, մենք կարծում ենք, որ նրա ձեռնարկած ռեֆորմները աշխարհիկ և հոգևոր իշխանությունների ոլորտում այդ ժամանակների համար բավականին առաջադեմ էին և հավակնոտ: Խղճի և դավանանքի ազատությունը, որը վաղ միջնադարում, բնականաբար, չուներ իր իրավական ձևակերպումը, փաստորեն կենսագործվում էր՝ ապահովելով համընդհանուր կրոնական բազմակարծություն:

Քրիստոնեության պետական կրոնի կարգավիճակը պահպանվեց նաև Բագրատունյաց և Կիլիկյան Հայաստանում: Առանց հզոր աշխարհիկ իշխանության Եկեղեցին չէր կարող պահպանել իր տնտեսական կայունությունը, միաժամանակ հուսալիորեն ապահովեր քրիստոնյա հոտի առաջնորդությունը: Եկեղեցին հանդես էր գալիս թագավորական իշխանության հոգևոր հովանավորը՝ իրեն բնորոշ ինքնավարությամբ: Կրոնավորական դասի բազմաքանակությունը, եկեղեցական ենթակառուցվածքների զարգացումը ուղիղ համեմատական էր լուսավորչական-միաբնակության դավանանքը մերժող ուղղությունների զսպմանը, դրանց անդամների հավատափոխությանը: Արտաքին հարաբերություններում Եկեղեցին փորձում էր

անխախտ պահել սեփական դավանական ուղեգիծը, չենթարկվել բյուզանդական պատրիարքների և կայսրերի ճնշումներին: Պետք է նկատել, որ Բյուզանդիայի կողմից սեփական եկեղեցու դավանանքը հայերին պարտադրելու պահանջը միայն նեղ կրոնական խնդիր չէր: Դավանաբանական-կրոնական հարցերը, իրենց հերթին, հետապնդում էին հեռուն գնացող քաղաքական նպատակներ.այն է՝ Հայաստանը հոգևոր ինքնուրույնությունից զրկելով՝ պարարտ հող ստեղծել նրա ամբողջական նվաճման համար: Դա էր պատճառը, որ տակավին Քաղկեդոնի ժողովում «Քրիստոսի երկու բնությունների» հետ կապված կրոնական տարամետությունը նաև միջպետական հարաբերություններում ընդգծված անջրպետ մտցրեց:

Խոսելով Բագրատունյաց թագավորության իրավական համակարգի մասին, պրոֆեսոր Խ.Ս. Սամուելյանը նշում է, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» մեջ կան դրույթներ, որոնք կրում են Բագրատունյաց շրջանի իրավական համակարգի ազդեցությունը[57]: Թագավորական առանձին կարգադրագրեր իրենց ամրագրումն են գտել վիմական արձանագրություններում: Բացի դրանից պետության մեջ կիրառվել են նաև մի շարք օտար օրենքներ ու ժողովածուներ[58]:

Կիլիկյան Հայաստանում գործադիր իշխանությունը իրականացվում էր արքունի գործակալությունների միջոցով, որոնց պաշտոններում նշանակվում էին ոչ թե ժառանգականության, այլ ունեցած անհատական հմտությունների և պաշտոնի

[57] Տե՛ս **Խ.Ս. Սամուելյան**, Հին հայ իրավունքի պատմությունը, հատ. 1, Եր., 1939թ., էջ՝ 138:
[58] Տե՛ս **Х.А. Торосян,** Суд и процесс в Армении X-XIII вв. Е., 1985, էջ՝ 44:

համապատասխանելիության սկզբունքով[59]: Արքունի քարտուղարը, որը կոչվում էր նաև ատենադպիր կամ ջանցլեր, որպես կանոն, հանդիսանում էր Սսի արքեպիսկոպոսը, թեև պատահում էր նաև, որ ատենադպիր նշանակվեր այլ բարձրաստիճան հոգևորական: Ջանցլերը, նաև, պետության արտաքին հարաբերություններում ազդեցիկ դերակատար էր, քանի որ մասնակցություն էր ցուցաբերում պետական դիվանագիտական աշխատանքներին, վարում էր բանակցություններ: Կիլիկիայում հոգևոր դասը, ինչպես երևում է պատմական աղբյուրների տեղեկություններից, ակտիվորեն ներգրավված էր պետական կառավարմանը, մասնակցում էր պալատական քննարկումների, իշխանական նիստերի:

Ուշագրավ է պատմիչ Հովհան Դարդելի հայտնած տեղեկությունը վերոհիշյալի կապակցությամբ՝ «...ետ յաւուր միում գումարել ի ժողով ի դահլիճն արքունական զեպիսկոպոսունս և զվարդապետ աշխարհին զաւագանին և զասպետս և զտիկինյասն և զժողովուրդն առհասարակ ...»[60]:

Այս շրջանից Հայաստանում ներդրվեցին կաթոլիկության տարածման համառ փորձերը, որոնք 14-16-րդ դարերում վերաճեցին Ունիթորական շարժման[61]: Կրոնադավանական վեճերը վերջնականապես ջլատեցին տերության դիմադրողականությունը՝ կանխորոշելով վերջինիս տրամաբանական քայքայումը:

---

[59] Տե՛ս **Ս.Վ. Բոռնազյան**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում 12-14-րդ դարերում, Եր., 1973թ., էջ՝ 68:

[60] Տե՛ս **Յովհաննու Դարդելի** Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891թ., էջ՝ 67:

[61] Տե՛ս **Ա.Հ. Սարգսյան**, XIX դարի կեսերի հայ լուսավորական միտքը ընդդեմ կրոնական գաղափարախոսության և արդիականությունը.-Եր.: 1990թ., էջ՝ 22:

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ այս շրջանում նույնպես խոսք չէր կարող գնալ աշխարհիկ պետության ժամանակակից իրավաընկալման մասին, այնուամենայնիվ, կրոնի նկատմամբ պետության ազդեցության շրջանակներն էլ ավելի մեծացան, ինչը ենթադրում էր աշխարհիկ պետության զարգացման վրա բարենպաստ գործոնների ու պայմանների առկայություն:

**Չորրորդ**, Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակաշրջանում պետության, կրոնի և իրավունքի հարաբերակցության մասով որակապես նոր իրադրություն ստեղծվեց, երբ վեցդարյա պետության բացակայությունից հետո վերստին հիմնադրվեց հայոց պետականությունը: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ողջունեց նորանկախ հանրապետության հռչակումը, և վերջինիս գոյատևման ծանրագույն տարիներին լծվեց պետության կայացման ավանդական առաքելության իրագործմանը: Եկեղեցին, որ անիշխանության տարիներին մշտապես կրել էր հալածանքի ծանր լուծը, առաջին Հանրապետության հովանու ներքո ստանում էր անկախ գործելու լայն հնարավորություն: Հարկ է նկատել, որ պետության ղեկավար գործիչների մեջ մեծ թիվ էին կազմում Գևորգյան հոգևոր ճեմարանի շրջանավարտները և ուսուցիչները[62]: Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների անքակտելի կապը դրսևորվեց պետականաշինության տարաբնույթ ձեռնարկումներում՝ պետություն-եկեղեցի հարաբերությունների ակտիվ ծավալմամբ և

[62]Սիմոն Վրացյան, Նիկոլ Աղբալյան, Ավետիս Ահարոնյան և այլք:

փոխլրացմամբ: Գևորգ Ե Կաթողիկոսը, Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը և այլ նվիրյալ հոգևորականներ ակտիվ նախաձեռնողականություն հանդես բերեցին ներքաղաքական վիճակի կայունացման, մայիսյան ապստամբության դատապարտման, միջկուսակցական լարվածությունների հարթման, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության ճակատագրի վերաբերյալ մտահոգությունների արտահայտման, ՀՀ ճանաչման գործում ներդրած աշխատասիրության, հայ-թուրքական պատերազմի ընթացքում պայքարի ոգեկոչման և այլ հայրենանվեր գործերում և ձեռնարկումներում[63]:

Պետության և եկեղեցու իրավական հարաբերությունների կարգավորման համար մշակվեց «Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև դաշնագրի» նախագիծը, որի բովանդակային տրամաբանությունը բխում էր եկեղեցու և պետության բարեկամական հարաբերություններից: Դաշնագրի առաջին կետը սահմանում էր. «Հայ Առաքելական Մայր Եկեղեցին օրհնում է Հայաստանի Հանրապետության օրինական վեհապետական իշխանությունը, իսկ Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Մայր Աթոռի և Նորին Վեհափառության՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախամեծար ու գերիշխան իրավունքները ազգային-եկեղեցական և կրոնաբարոյական խնդիրներում»[64]: Դաշնագրի

---

[63]Տե՛ս **Ա. Հարությունյան**, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը. 1918-20-թթ. ներպետական դիվանագիտական գործունեությունը, հայոց եկեղեցի և պետություն, 2-5.03.2000թ., Էջմիածին-Օշական-Ծաղկաձոր // Միջազգային գիտաժողովի նյութեր.-Եր., 2000թ., էջ՝ 164-180:

[64]Տե՛ս **Ս.Ա. Բեհբուդյան**, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը առաջին

երկրորդ կետով ամրագրվում էր.«Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին հայտարարվում է գերիշխանությունից անկախ,որով և վավերացնում էր իր տնտեսական գործունեության կառավարումը»[65]: Բացի այդ, Դաշնագիրը լայն ազատություններ էր տալիս եկեղեցուն՝ կրթա-դաստիարակչական գործառույթը իրականացնելու համար: Եկեղեցին կարող էր բացել դպրոցներ և կրոնա-բարոյական հաստատություններ, ունենալ կառավարությանը առընթեր լիազոր ներկայացուցիչ, պետական միջամտությունից անկախ եկեղեցական պաշտոնական հրատարակություններ և այլն: Թեև Դաշնագրի կենսագործումը իրականություն չդարձավ, այնուամենայնիվ այն արժեքավոր ձեռքբերում էր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի և իրավական կարգավիճակի ճանաչման տեսանկյունից:

Այսպիսով, պատմական այս շրջանի իրադարձությունների կամ պետականաշինության ոլորտում առկա հիմնախնդիրների վերլուծության արդյունքում ևս անհրաժեշտ է կարևորել կրոնի նկատմամբ պետության ազդեցությունը աշխարհիկ պետության զարգացման վրա բարենպաստ պայմանների առկայությունը:

**Հինգերորդ**, Խորհրդային աթեիզմի ժամանակաշրջանում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Խորհրդային Միության գոյության յոթ տասնամյակների ընթացքում կրեց պետության տոտալիտար վերահսկողության բոլոր

հանրապետության տարիներին,2 դեկտեմբեր.1920թ.,Եր.,1999թ.,էջ՝ 516-517:

[65]Տե՛ս Նույն տեղում,էջ՝ 516-517:

հետևանքները՝ զրկվելով հավատացյալ անդամների կրոնական պահանջմունքներն ազատորեն բավարարելու իրավունքից: Թեև Խորհրդային Միության Սահմանադրությունը երաշխավորում էր ցանկացած կրոն դավանելու կամ ոչ մի կրոն չդավանելու իրավունքը, այդուհանդերձ, պետության վարած քաղաքականությունը, այս ոլորտում, տուրք էր տալիս աթեիստական քարոզչության ծավալմանը՝ խախտելով մարդկանց սահմանադրորեն ամրագրված խղճի ազատության իրավունքը: Սոցիալիստական հասարկարգի կառուցումը և դասակարգերի վերացման տեսլականը, անշուշտ, պետք է կոտրեր «ցարիզմի» ժամանակ արմատավորված տարատեսակ սովորույթներ և իրավանորմեր, որոնցից մեկն էլ կրոնականն էր[66]:

Հայաստանի առաջին Հանրապետության վերացումը, դրա հետևանքով, նաև, նրա խորհրդայնացումը, պատմական նոր շրջափուլի մեկնակետը հանդիսացավ: 1920 թվականի

---

[66]Ցարական Ռուսաստանը իր պաշպանության տակ էր վերցնում կրոնը: Օրենսդրությամբ սահմանված չէր նույնիսկ խղճի ձևական ազատություն, արգելվում էր աթեիզմի տարածումը, իսկ աստվածանարգությունը ենթակա էր դատական հետապնդման: Կրոնական կազմակերպությունները բաժանվում էին չորս խմբի: Առաջին խումբը ներկայացնում էր Ռուսական ուղղափառ եկեղեցին, որը տիրապետող էր (դոմինանտ) և պետական: Այն կառավարում էր պետական մարմինը՝ Սուրբ Սինոդը, իսկ ֆինանսավորումը ապահովում էր ցարական գանձարանը: Երկրորդ խումբը կազմում էին կրոնական այնպիսի կազմակերպություններ, որոնց պաշտպանում էր ինքնակալությունը, բայց դրանք պետական հոգածություն ստանալու առումով զիջում էին Ռուսական ուղղափառ եկեղեցուն: Դրանք էին կաթոլիկական, լյութերական, ռեֆորմատորական, Հայ առաքելական եկեղեցիները և այլն: Երրորդ խմբին դասվում էին կրոնական այն կառույցները, որոնց գոյությունը թույլատրվում էր, բայց նրանք պետության ոչ մի աջակցությունից չէին օգտվում ինչպես, օրինակ, բապտիստները և մենոնիստները: Վերջապես մի ամբողջ շարք կրոնական հոսանքներ, որոնք բացահայտորեն հակադրվում էին ուղղափառ եկեղեցուն, հալածվում էին կայսրության կողմից (դուխաբորներ, մոլոկաններ, անտերտերականներ և այլն):

դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հեղկոմի որոշմամբ դպրոցը անջատվեց եկեղեցուց, իսկ դեկտեմբերի 19-ին բռնագրավվեցին Էջմիածնի վանքի շենքերն ու ունեցվածքի մի մասը, այդ թվում նաև Ճեմարանի շենքը[67]: Հետագայում քանդվեցին հարյուրավոր եկեղեցիներ, որոնցից մնացին միայն 4-ը, իսկ 800-ը փակվեցին վարչական եղանակով: Ստեղծվեցին Եկեղեցու ոչնչացմանը միտված մի քանի կազմակերպություններ[68]: Արդյունքում եկեղեցին զրկվեց նախկինում ունեցած ավանդական իր գործառույթներից և սահմանափակվեց միայն ծիսական արարողությունների կատարմամբ[69]:

Սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում աթեիզմի քարոզչության բովանդակությունը, ձևերն ու մեթոդները սահմանող կարևորագույն փաստաթուղթ հանդիսացավ նշանավոր բոլշևիկ Վ.Ի. Լենինի «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» հոդվածը (1922թ.), որտեղ ասվում էր, որ անհրաժեշտ է ժողովրդական զանգվածներին տալ ամենաբազմազան նյութեր աթեիստական քարոզչության վերաբերյալ, արթնացնելու նրանց կրոնական քնից, թափահարելու նրանց ամենաբազմազան կողմերից, ամենատարբեր եղանակներով[70]: Ուշագրավ է այն փաստը, որ խղճի ազատություն հռչակած երկրում գործում էին հակակրոնական կազմակերպություններ ինչպես,

---

[67] Տե՛ս **Ա.Ս. Տերչանյան**, Հայ առաքելական եկեղեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Եր., 2001թ., էջ` 19:

[68] Տե՛ս **Վ.Գ. Ենգիբարյան, Ա.Ս. Չախոյան**, Հոգևոր իրավունքի հիմունքներ, ՀՀ դատավորների միություն, խմբ. Արթուր Սարկավագ Սարգսյան, Եր., 2011թ., էջ` 45-46:

[69] Տե՛ս **Գ. Մկրտչյան**, Պետություն Եկեղեցի հարաբերությունները խորհրդային Հայաստանում, Հայագիտական հանդես, Եր., 2016թ., էջ` 94:

[70] Տե՛ս **Ս.Կ. Խաչատրյան**, Գիտական Աթեիզմ, երկրորդ հրատարակություն, Եր., 1980թ., էջ` 220:

օրինակ «Անաստվածների միությունը», որը հետագայում վերանվանվեց «Մարտնչող անաստվածների միության»[71]:

1922 թվականին ընդունված ԽՍՀՄ առաջին Սահմանդրությունը հռչակեց եկեղեցու անջատումը պետությունից, իսկ դպրոցը եկեղեցուց: Սահմանադրության 52-րդ հոդվածով հաստատվում էր. «ԽՍՀՄ քաղաքացիների համար երաշխավորվում է խղճի ազատություն, այսինքն՝ ցանկացած կրոն դավանելու կամ ոչ մի կրոն չդավանելու, կրոնական պաշտամունքային ծեսեր կատարելու կամ աթեիստական պրոպագանդամղելու իրավունք: Կրոնական հավատալիքների առնչությամբ թշնամանք և ատելություն հրահրելն արգելվում է»[72]: Խորհրդային Միությունում քաղաքացիները կարող էին կրոն ուսուցանել ու կրոն սովորել մասնավոր կարգով: ԽՍՀՄ-ում դպրոցի եկեղեցուց անջատված լինելը նշանակում էր ժողովրդական կրթության ու դաստիարակության գործի վրա կրոնական կազմակերպությունների որևէ ազդեցության անթույլատրելիություն[73]: Բացի այդ խորհրդային օրենքները կրոնական կառույցներին և պաշտամունքի սպասավորներին արգելում էին կրոնական գործունեությունը օգտագործել պետության շահերի դեմ ուղղված քաղաքական ելույթների համար, հավատացյալներին ստիպել հրաժարվելու իրենց քաղաքացիական պարտականությունները կատարելուց և խորհրդային օրենքներով նրանց տրված

[71] Տե՛ս **Պ. Սերոբյան**, Հայ առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը, Քրիստոնեություն և իրավունք //Միջազգային խորհրդաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2001թ., էջ՝ 133:
[72] Տե՛ս **Վ.Գ. Ենգիբարյան, Ա.Ս. Չախոյան**, Եկեղեցի, պետություն և հասարակություն, Եր., 2009թ., էջ՝ 16:
[73] Տե՛ս նույն տեղում, էջ՝ 20:

իրավունքներն իրագործելուց[74]: Ինչպես երևում է, եկեղեցին պետությունից անջատելու մասին դեկրետը լուրջ անհանգստություն և, նույնիսկ, պայքարի տրամադրություն է առաջ բերել հոգևորականների շրջանում[75]:

1930-ականների բռնաճնշումներին զոհ գնացին բազմաթիվ հոգևորականներ, այդ թվում՝ Խորեն Ա. Մուրադբեկյան կաթողիկոսը (1932-1938թթ.), ով դարձավ խորհրդային գործակալների դավադրության զոհը[76]: Խորհրդային Հայաստանում հալածանքների և ճնշումների ենթարկված հոգևոր դասի անդամների գերակշիռ մասը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդներ էին[77]: Երկրորդ աշխարհամարտի տարիներին խորհրդային ղեկավարությունը մեղմացրեց իր կոշտ դիրքորոշումը եկեղեցու նկատմամբ և սիրաշահման քաղաքականություն վարեց: Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը որոշում ընդունեց «1940թ. Էջմիածնի վանքի տերիտորիայում եկեղեցական ժողով հրավիրել՝ արտասահմանյան թեմերի ներկայացուցիչների մասնակցությամբ»[78]: Եկեղեցու կողմից կազմակերպվեցին հանգանակություններ, որոնց արդյունքում ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որն օժանդակեց խորհրդային

---

[74] Տե՛ս **Վ.Գ. Ենգիբարյան, Ա.Ս. Ղախոյան**, Դավանանքի իրավունք, Եր., 2008թ., էջ՝ 37:
[75] Տե՛ս **Ն.Մ.Լուկին**, Եկեղեցի եւ պետություն, Մոսկվա-1919թ., էջ՝ 3:
[76] Տե՛ս **Վ.Գ. Ենգիբարյան, Ա.Ս. Ղախոյան**, Հոգևոր իրավունքի հիմունքներ, ՀՀ դատավորների միություն, խմբ. Արթուր սարկավագ Սարգսյան, Եր., 2011թ., էջ՝ 46:
[77] 1930-1938թթ. ընթացքում բռնադատված 160 հոգևորականներից 148-ը ներկայացնում էին Հայ առաքելական, 7-ը Հայ կաթոլիկ և 5-ը Հայ ավետարանական եկեղեցիները: Տե՛ս **Ա.Ս. Մանուկյան**, Եկեղեցին Հայաստանում 1930-ական թվերին. ԲԵՀ 2 (89), Եր., 1996թ., էջ՝ 188-199:
[78] Տե՛ս **Ա.Ս. Տերչանյան**, Հայ առաքելական եկեղեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Եր., 2001թ., էջ՝ 30-31:

բանակին՝ ֆաշիզմի ջախջախման գործում[79]: Խորհրդային աթեիզմի այս ժամանակաշրջանում պետության և եկեղեցու հարաբերություններում նկատվեցին ոչ միայն աշխարհիկ պետության վերաբերյալ բացարձակ մոտեցումներ, այլև պետական աթեիստական քաղաքականության արդյունքում եկեղեցու դերակատարումը հայ ժողովրդի հոգևոր կյանքում միտված էր նվազման:

**Վեցերորդ**, աշխարհիկ պետության ժամանակակից փուլը.

Խորհրդային Միության փլուզման տրամաբանական շարունակությունը հանդիսացող անկախության ձեռքբերումը օրակարգային դարձրեց պետության և կրոնական կազմակերպությունների միջև նոր փոխհարաբերությունների վերստեղծումը: ՀՀ Անկախության հռչակագիրը սահմանեց խղճի ազատության սկզբունքը, ինչպես նաև, ՀՀ քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից[80]: 1991 թվականին ընդունվեց «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որն ամրագրեց ՀՀ քաղաքացիների խղճի ազատության իրավունքը՝ դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն[81], սահմանեց օրենքի առջև նրանց հավասարությունը՝ անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական

---

[79] Տե՛ս Նույն տեղում, էջ՝ 45:

[80] Տե՛ս ՀՀ Անկախության հռչակագիրը (ընդունվել է՝ 1991թ. օգոստոսի 23-ին): Սկզբնաղբյուրը՝ http://www.gov.am/am/independence/:

[81] Տե՛ս «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, (ընդունվել է՝ Ն-0333-1, 17.06.1991թ.): Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ԳԽՏ 1991/12:

պատկանելությունից[82]: 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, որի տեքստում, թեև, սահմանավում էր մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը, այնուամենայնիվ բաց էր թողնված պետության և կրոնական կազմակերպությունների փոխգործակցության հիմնահարցը[83]: «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը իր նախաբանում, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն վերապահեց ազգային եկեղեցու կարգավիճակ, որը իր սահմանադրաիրավական ամրագրումը ստացավ Սահմանադրության 2005, այնուհետև 2015 թվականների փոփոխություններով՝ պետության աշխարհիկությունը դիտարկելով սահմանադրական կարգի առանցքային սկզբունքներից մեկը:

Այսպիսով, ներկայացված դիտարկումների արդյունքներով պայմանավորված, կարելի է նշել, որ Հայ ժողովուրդը պատմականորեն մեծ տեղ է հատկացրել կրոնին, կարևորել վերջինիս դերը իր հավատամքային պահանջմունքների բավարարման հարցում: Հայաստանի պատմության մեջ կրոնի և նրա ենթակառուցվածքների հանդեպ որդեգրած դիրքորոշումը խիստ բազմաբովանդակ է: Այս իմաստով հայկական պետությունը անցել է միմյանց տրամագծորեն հակադրվող շրջափուլեր՝ դրանցից յուրաքանչյուրում ունենալով իր ձեռքբերումները և կորուստները: Քրմապետության տարանջատումը արքայի

[82]Տե՛ս «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, հոդ.՝ 2-րդ (ընդունվել է՝ Ն-0333-1, 17.06.1991թ.): Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ԳԽՏ 1991/12:

[83]Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է՝ 05.07.1995թ.): Սկզբնաղբյուրը՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1:

պաշտոնից առաջին կառուցվածքային տեղաշարժը եղավ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առնչություններում, որով և ավարտվեց աստվածապետության երկարատև շրջանը:

Վերլուծելով Հայկական պետության և կրոնի հարաբերակցության հիմնախնդիրներն ու էվոլյուցիոն զարգացման առանձնահատկությունները, պայմանականորեն սահմանվում է այդ հարաբերությունների պատմաիրավական հետևյալ շրջափուլերն ու դրանց նշանակությունը՝

1) Հին Հայաստանի աստվածապետական շրջան (մ.թ.ա. XXVII դ.- մ.թ.ա. VI դ.),, երբ պետությունը սերտաճում էր կրոնական դասի հետ: Այդ շրջանը վկայում էր թագավորական իշխանության հովանավորությունը վայելող քրմական դասի կողմից միապետի բացարձակ իշխանության ընդունման մասին:

2) թագավորի և քրմապետի պաշտոնների առանձնացման շրջանում (սկսած մ.թ.ա. VI դ.), պետությունը վերահսկողության տակ էր վերցնում ամբողջ հոգևոր դաշտը սահմանելով կրոնը՝ որպես իշխանության լծակներից մեկը, պայքարում այլախոհության դեմ: Այս շրջանում խոսք չէր կարող գնալ աշխարհիկ պետության ժամանակակից իրավաընկալման մասին, սակայն քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու քաղաքական ակտի արդյունքում էլ ավելի խորացավ պետության ազդեցությունը կրոնի նկատմամբ, ինչն իր հերթին աշխարհիկ պետության զարգացման վրա հետագայում էական նշանակություն ունեցավ:

3) քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ճանաչման շրջան (մ.թ. IV-X IV դդ.) պետությունը իր հովանու տակ առնելով քրիստոնեությունը, որոշ բացառություններով, իսկ եկեղեցու հետ համատեղ գործընկերային հարաբերություններ՝

պայքարելով կրոնական բազմակարծության և այլախոհական դրսևորումների դեմ: Միաժամանակ, պետական մակարդակով սկսվեց քրիստոնեության տարածումը, եկեղեցին դարձավ տաճարական սեփականության իրավահաջորդը՝ ներպետական և արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործում տիրապետելով առանցքային դերակատարության: Սակայն, դա ոչինչ չփոխեց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններում: Այս շրջանում նույնպես խոսք չէր գնում աշխարհիկ պետության ժամանակակից իրավաընկալման մասին, քանի որ, եթե կրոնի նկատմամբ պետության ազդեցության շրջանակներն էլ ավելի էին մեծանում, ապա դա ենթադրում էր միայն աշխարհիկ պետության զարգացման վրա բարենպաստ գործոնների ու պայմանների առկայություն:

4) Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակաշրջանում (1918-1920թթ.)պետության,կրոնի և իրավունքի հարաբերակցության մասով որակապես նոր իրադրություն ստեղծվեց, երբ վեցդարյա պետության բացակայությունից հետո վերստին հիմնադրվեց հայոց պետականությունը: Միաժամանակ, այս ժամանակաշրջանում առաջին անգամ փորձ արվեց պետության և եկեղեցու իրավական հարաբերությունների կարգավորման համար մշակել «Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև դաշնագրի» նախագիծը, որի բովանդակային տրամաբանությունից էր բխում հենց եկեղեցու և պետության փոխգործակցության անհրաժեշտությունը: Միաժամանակ, այս շրջանը նախանշվեց պետաեկեղեցական փոխհարաբերությունների ակտիվ կառուցմամբ, և

այսօր՝ առավել քան երբևէ, կարևոր գործնական նշանակություն ունի այս շրջանի պետաեկեղեցական ոլորտում կուտակված փորձի և ձեռքբերումների վերարժևորումը և արտացոլումը պետություն-եկեղեցի հարաբերությունների արդի հայեցակարգում:

5) աթեիզմի խորհրդային շրջան (1920-1990 թթ.), Թեև Խորհրդային Միության Սահմանադրությունը երաշխավորում էր ցանկացած կրոն դավանելու կամ ոչ մի կրոն չդավանելու իրավունքը, այդուհանդերձ, պետության վարած քաղաքականությունը, այս ոլորտում, ամբողջովին աթեիստական ուղղվածություն ուներ, դրանով իսկ խախտելով մարդկանց սահմանադրորեն ամրագրված խղճի ազատության իրավունքը: Միաժամանակ, այս ժամանակաշրջանում պետության և եկեղեցու հարաբերություններում նկատվեցին ոչ միայն աշխարհիկ պետության վերաբերյալ բացարձակ մոտեցումներ, այլև պետական աթեիստական քաղաքականության արդյունքում եկեղեցու դերակատարումը հայ ժողովրդի հոգևոր կյանքում միտված էր անկման:

6) աշխարհիկ պետության ժամանակակից փուլում (1991 թ-ից մինչև մեր օրերը) պետության անկախության ձեռքբերումը օրակարգային դարձրեց պետության և կրոնական կազմակերությունների միջև նոր փոխհարաբերությունների վերստեղծումը: «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը իր նախաբանում, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն վերապահեց ազգային եկեղեցու կարգավիճակ, որը իր սահմանադրաիրավական ամրագրումը ստացավ Սահմանադրության 2005, այնուհետև 2015 թվականների

փոփոխություններով՝ պետության աշխարհիկությունը դիտարկելով սահմանադրական կարգի առանցքային սկզբունքներից մեկը: Միաժամանակ, այս ժամանակափուլում Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց աշխարհիկ պետություն, որտեղ յուրաքանչյուր ոք ունի մտքի խղճի, կրոնի ազատության, անկախ կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից և կրոնական պատկանելությունից և համոզմունքներից օրենքի առջև հավասարության իրավունք: Պետության զարգացման նման ձևաչափը համադրելի է ժողովրդավարական, ինքնիշխան, իրավական պետության կառուցման ազգային տեսլականի հետ:

### 1.3. Աշխարհիկ պետության սկզբունքի իրացման հիմնախնդիրները պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերությունների խորապատկերում. միջազգային փորձը և համեմատական-իրավական վերլուծություն

Ժամանակակից աշխարհում կրոնը հանդիսանում է անհատի աշխարհայացքի ձևավորման ամենաազդեցիկ երևույթներից մեկը: Ընդ որում, այն ներգործուն ազդեցություն ունի աշխարհի տարբեր ժողովուրդների հասարակական կյանքում, նրանց ազգային բնութագրի ձևավորման գործում:

Թերևս արդարացի է այն տեսակետը, ըստ որի աշխարհիկացման և ազատական գաղափարախոսությունների հետևորդներն են «քողարկել» այն իրողությունները, որ կրոնը ժամանակակից եվրոպական երկրների պատմության ընթացքում եղել և շատ դեպքերում շարունակում է մնալ էական քաղաքական գործոն[84]:

[84] Տե՛ս **Խ. Կազանովա**, Քաղաքացիական հասարակությունը և կրոնը. Կաթոլիկության հետահայաց դիտարկում և մտորումներ Իսլամի շուրջ՝ ապագայի տեսանկյունից, Կրոն և հասարակություն #1, Խմբ.՝ Ծ. Խաչատրյան, 2007թ., էջ՝ 27:

Սակայն, անհրաժեշտ է նաև ընդգծել, որ կրոնը, երբեմն դառնում է միջազգային հակամարտությունների և քաղաքական ցնցումների շարժիչ ուժը: Դա է պատճառը, որ պետությունները՝ անկախ կառավարման ձևից, իրենց պետական համընդհանուր քաղաքականության մշակման ժամանակ խիստ զգուշավորություն են դրսևորում կրոնական կազմակերպությունների հետ ունեցած փոխհարաբերություններում:

Յարկ է նկատել, որ կրոնի ինստիտուտը ոչ միայն իրավական, այլև բարոյական, փիլիսոփայական երևույթ է, և յուրաքանչյուր պետություն յուրովի է ձևավորում իր վերաբերմունքը այդ ինստիտուտի նկատմամբ, սահմանելով՝ սեփական «խաղի կանոնները»:

Այսօր՝ պետության և կրոնի իրավական հարաբերությունների ճշգրտման և կանոնակարգմանն ուղղված մոտեցումները համարժեք չեն ուրվագծում այդ հարաբերությունների իրական սահմանները: Մասնագիտական գրականությունում պետության մեջ կրոնի ներգրավվածության աստիճանից ավանդաբար հիշատակվում է պետության երեք ձև՝ աստվածապետություն, կրոնապետություն և աշխարհիկ պետություն:

Կարծում ենք, որ այս ձևաչափը, համապարփակ չի ընդգրկում և չի ամբողջացնում պետության ձևի բնութագիրը կրոնի ունեցած դերի համատեքստում: Գիտական հետազոտության շրջանակում աշխարհիկ պետությունների և կրոնական կազմակերպությունների հետ հարաբերակցության հիմնախնդիրների միջազգային փորձի ուսումնասիրության և իրավահամեմատական վերլուծության միջոցով

հարկ է նկատել, որ պետությունները ևս կարելի է պայմանականորեն դասակարգել նաև կրոնի բնագավառում վարած քաղաքականության տեսանկյունից:

Այսպես՝ կրոնի հանդեպ որդեգրած պետական քաղաքականության, կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակի սահմանման, իրավական համակարգում կրոնական նորմերի և դոգմաների պոզիտիվացման կամ դրանց անթույլատրելիության տեսանկյունից, կարելի է առանձնացնել պետության հետևյալ տիպերը՝ 1) աստվածապետություն (թեոկրատիա), 2) կրոնապետություն (կղերապետություն), 3) աթեիստական պետություն, 4) կիսակրոնական կամ կիսաաշխարհիկ պետություն, 5) աշխարհիկ պետություն:

**I. Աստվածապետությունը[85] կամ թեոկրատիան՝** որպես կրոնական և քաղաքական ուժերի հարաբերությունների համակարգ, դիտարկվում է պետության այնպիսի ձև, որտեղ կրոնական կազմակերպություններից մեկը հանդիսանում է որպես պետական իշխանություն և ունի իշխանական իրավասությունների իրականացման որոշակի նպատակներ, խնդիրներ, գործառույթներ և մեթոդներ[86]: Այլ կրոնական կազմակերպությունների գործունեությունն ու այլակարծությունն արգելվում կամ ենթարկվում է հալածանքների:

---

[85]Թեոկրատիա (հունարեն «theos»՝ աստված, «krateo»՝ իշխանություն): Եզրույթն առաջին անգամ գործածել է հրեա մատենագիր Հովսեփոս Փլավիոսը՝ բնութագրելով հրեական պետության քաղաքական համակարգը և պետական կառուցվածքը: Տե՛ս **J. Flavius**, Against Apion, Book II, Chapter 17, March, 2014:

[86]Տե՛ս **Е.Н. Салыгин,** Теократическое государство (Теорет.-правовой аспект): Дис. ... канд. юрид. наук: 12.00.01: Москва, 1997, էջ՝ 3-15: Աղբյուրը՝ http://www.dissercat.com/content/teokraticheskoe-gosudarstvo-teoret-pravovoi-aspekt:

Դոցենտ Մ.Լ. Վորոնկովան անդրադառնալով այս հիմնախնդրին, նշում է որ. «աստվածապետական պետությունում կրոնական միավորումներից մեկն առանձնացված չէ պետությունից և նրա նկատմամբ ընդդիմադիր դիրք չի գրավում»[87]: Այդպիսի պետություններում քաղաքացին չունի ոչ միայն կրոնի, այլև աշխարհայացքի ազատ ընտրության իրավունք և պարտավոր է դավանել պետության կողմից սահմանված կրոնը:

Ժամանակակից աշխարհում միակ աստվածապետությունը Վատիկանն է, որը ստեղծվել է 1929 թվականի փետրվարի 11-ին, Բենիտո Մուսոլինիի և Պիոս 11-րդ պապի միջև կնքված համաձայնագրով (Լատերանի Կոնկորդատ)[88]: Այդ համաձայնագրով աստվածապետական պետության մայրաքաղաք հռչակվեց Հռոմի թաղամասերից մեկը՝ Վատիկանը՝ որպես միջազգային իրավունքի ինքնիշխան սուբյեկտ:

II. **Կրոնապետությունը կամ կղերական պետությունը** ենթադրում է պետական իշխանության կազմակերպման այնպիսի կառուցակարգ, որտեղ կրոնական կազմակերպություններից որևէ մեկն օժտված է պետաիշխանական լիազորություններով: Միաժամանակ կրոնապետություններում, որպես կանոն, սահմանվում է պետական կրոն, իսկ կրոնական առաջնորդները ընդգրկվում են պետական իշխանության մարմիններում, կամ

[87]Տե՛ս **М.Л. Воронкова,** Конституционные основы светского государства в Российской Федерации: дис. Канд.юрид. наук 12.00.02 Саратов, 2006, էջ՝ 36: Սկզբնաղբյուրը՝ http://www.dissercat.com/content/konstitutsionnye-osnovy-svetskogo-gosudarstva-v-rossiiskoi-federatsii:

[88]Տե՛ս **Ա. Սվասյան**, Աստվածները մեռնում են, գիտա-աթեիստական տարեգրություն, խմբ.՝ Վ.Ա Հարությունյան, Վ.Խ. Բաղդասարյան, Եր., 1962թ., էջ՝ 151:

վերջիններիս ներկայացուցիչներին շնորհվում է նաև կրոնական կարգավիճակ:

Այս տիպի պետություններում կրոնի և իրավունքի փոխադարձ կապը արտահայտվում է կրոնական դոգմաների նշանակությամբ: Ինչպես աստվածապետական, այնպես էլ կղերական պետություններում, կրոնական կազմակերպությունների և պետության ազդեցության և լիազորությունների ոլորտները հատվում են կամ լիովին համընկնում:

Այսօր՝ շատ պետություններ գտնվում են աստվածապետական և կղերական պետությունների եզրագծում[89]: Ընդ որում, կրոնի ինստիտուտը զգալի դերակատարություն ունի հատկապես արևելքի մահմեդական պետությունների հասարակական-քաղաքական կյանքում: Իրապես, այսօր իսլամը հանդիսանում է արաբական պետությունների մեծամասնության քաղաքական-գաղափարական հիմքերից մեկը: Մի կողմից այն նպաստում է քաղաքական ռեժիմների կայունացմանը, մյուս կողմից ստեղծում է հասարակական կյանքի մի շարք ոլորտներում տարատեսակ հակասություններ:

Միաժամանակ կրոնական նորմերը (Շարիաթ), որպես բարոյական չափորոշիչներ հանդիսանում են իրավունքի հիմնական աղբյուր: Բացի այդ, արաբական երկրների մեծ մասի սահմանադրություններում ուղղակիորեն ամրագրված է հավատարմությունը հասարակության բարոյական ամուր պատվանդան հանդիսացող իսլամի ավանդույթներին:

---

[89] Մասնավորապես, այդ իմաստով խոսք կարող է գնալ Իրանի Իսլամական Հանրապետության, Սաուդյան Արաբիայի Թագավորության, Պակիստանի Իսլամական Հանրապետություն, Սոմալիի Հանրապետության, Կատարի Արաբական Էմիրության և այլ երկրների մասին:

Ստորև կքննարկենք կրոնապետական կառուցվածք ունեցող որոշ երկների փորձը, որոնց մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում տնտեսապես առավել զարգացած երկրները, ինչպիսիք են Իրանն ու Սաուդյան Արաբիան:

Այսպես՝ Սաուդյան Արաբիայում իրավունքի և կյանքի ողջ հարաբերակցության գլխավոր աղբյուրը Ղուրանն է, իսկ ըստ իրավական ուժի երկրորդ նորմատիվ իրավական ակտը՝ «Սաուդյան Արաբիայի Թագավորության Հիմնական նիզամը (Դրույթ)»: Հիմնական նիզամի 1-ին հոդվածի համաձայն՝ «Սաուդյան Արաբիայի Թագավորությունը, ինքնիշխան, արաբական, իսլամական պետություն է: Նրա կրոնը իսլամն է, Սահմանադրությունը՝ Բարձրյալ Ալլահի Գիրքը և նրա Մարգարեի սուննան, թող օրհնի նրան Ալլահը, լեզուն՝ արաբերենը, մայրաքաղաքը՝ Էր-Ռիադը»:

Միաժամանակ Նիզամի 7-րդ հոդվածը սահմանում է. «Սաուդյան Արաբիայի Թագավորությունում իշխանությունը հիմնված է Բարձրյալ Ալլահի Գրքի և նրա Մարգարեի սուննայի վրա, որոնք հանդիսանում են տվյալ Դրույթի և այլ պետական ակտերի հիմքը»[90]: Սաուդյան Արաբիայում պաշտոնական և միակ կրոնը իսլամն է, իսկ մնացած բոլոր կրոններն արգելված են: Քաղաքացիների դավանափոխությունը իսլամից մեկ այլ կրոնի պատժվում է մահապատժով:

Հարկ է նաև ընդգծել, որ Սաուդյան Արաբիա մեկնող օտարերկրացիների մուտքի արտոնագրում առկա է դավանանքի մասին տող, քանի որ բացի իսլամի հետևորդներից, մահմեդական սրբազան

[90]Տե՛ս Основной низам (Положение) Королевство Саудовской Аравии, принят в 1992 году. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=86:

քաղաքներ՝ Մեդինա և Մեքքա նրանց մուտքն արգելվում է:

Ինչ վերաբերում է Իրանի Իսլամական Հանրապետությանը, այստեղ իրավաստեղծ գործունեությունը հենվում է Շարիաթի նորմերի վրա: Այսպես՝ Իրանի Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ «Իրանի պաշտոնական կրոնն է հանդիսանում շիայական իսլամը, որը ճանաչում է տասներկու իմամների գոյությունը, որը փոփոխման ենթակա չէ: Իսլամական այլ դավանանքներ, որոնց թվում՝ հանաֆիականությունը, շաֆիականությունը, մալիկիականությունը, հանբալիականությունը, զեյդիականությունը և այլն, նույնպես արժանի են լիակատար հարգանքի»[91]:

Նկատենք նաև, որ Իրանի Իսլամական Հանրապետության բարձրագույն ղեկավարը հանդիսանում է հոգևոր առաջնորդը՝ Ռահբարը, որն ընտրվում է կառավարման հիմնական մարմիններից մեկի՝ Փորձագետների խորհրդի կողմից: Բացի Փորձագետների խորհրդից, գոյություն ունի նաև Սահմանադրության Պահապանների խորհուրդը, որը վերահսկողություն է իրականացնում Մեջլիսի (խորհրդարանի) նկատմամբ: Խորհուրդն ինքնին չի մշակում օրինագծեր, այլ ստուգում է Մեջլիսի յուրաքանչյուր օրինագծի համապատասխանությունը Շարիաթի օրենքներին և Սահմանադրությանը:

Հարկ է արձանագրել այն փաստը, որ Իրանի Սահմանադրության 13-րդ հոդվածում բացի իսլամից ճանաչվում են միայն երեք կրոնական փոքրամասնություններ՝ իրանական զրադաշտականները, հուդայականները և

[91]Տե՛ս Конституция Исламской Республики Иран, принята 24 октября 1979г. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=83:

քրիստոնյաները, որոնք օրենքի շրջանակներում կարող են ազատորեն իրականացնել իրենց կրոնական ծեսերը և քաղաքացիական գործերում և կրոնական դաստիարակության ոլորտում ղեկավարվել համաձայն սեփական ուսմունքի[92]:

Պետական իշխանության մարմինների նկատմամբ կրոնի ունեցած ազդեցության տեսանկյունից համանման իրավակարգավորումներ են առկա մի շարք այլ երկրներում: Այսպես, Արաբական Միացյալ Էմիրությունների Հիմնական նիզամի 7-րդ հոդվածը սահմանում է.«Իսլամը որպես Միության պաշտոնական կրոնն է, իսկ Շարիաթը՝ իբրև օրենսդրության պաշտոնական աղբյուր»[93]:

Իսկ Սոմալիի Սահմանադրության 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է. «Շարիաթի ընդհանուր սկզբունքներին չհամապատասխանող օրենքը չի կարող ընդունվել»[94]:

Իրարամերժ դրույթ է ամրագրված Իրաքի Սահմանադրության 1-ին հոդվածում.«Ոչ մի օրենք չի կարող ընդունվել,եթե այն հակասում է Իսլամի սահմանված նորմերին: Ոչ մի օրենք չի կարող ընդունվել, եթե այն հակասում է ժողովրդավարության սկզբունքներին...»[95]: Ինչպես երևում է Իսլամի նորմերը հավասարեցվում են ժողովրդավարության սկզբունքներին:

Կրոնապետության՝ որպես պետական իշխանության գործունեության ձևի եզակի օրինակ է Իսրայելի պետությունը: Կրոնը պատմականորեն հանդիսացել է հրեա ժողովրդի կենսագոյության պաշտպանական վահանը և

[92] Տե՛ս նույն տեղում,հոդվ.՝ 13:

[93] Տե՛ս Конституция Объединенных Арабских Эмиратов поправка от 2004г. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=89:

[94] Տե՛ս Временная конституция Сомали 2012 Принята 1 августа 2012г. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=777:

[95] Տե՛ս Конституция Республики Ирак от 15 октября 2005г. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=338:

հազարամյակներ շարունակ առաջնորդել է նրանց: Պաշտոնական Սահմանադրության բացակայության պայմաններում, Իսրայելի իրավական համակարգում, առաջնային տեղ են զբաղեցնում Անկախության հռչակագիրը և պետության հիմնական օրենքները: Անկախության հռչակագիրը երաշխավորում է քաղաքացիների խղճի և դավանաքի ազատության իրավունքը,ինչպես նաև նրանց իրավահավասարությունը՝ առանց կրոնի,ռասայի և սեռի խտրականության[96]:

Թեև հուդայականությունը պետության մեջ չունի պաշտոնական կրոնի կարգավիճակ, այնուամենայնիվ այն հսկայական դեր է խաղում հրեաների ինքնագիտակցության և աշխարհընկալման ձևավորման գործում:

Իսրայելի՝ որպես կրոնապետության հիմնական բնորոշ հատկանիշը հանդիսանում է իրավունքի աղբյուրներում կրոնական իրավունքի (Թորա, Թալմուդ) առկայությունը: Բացի այդ, կրոնական պատկանելությամբ պայմանավորված արգելքներ են դրվում քաղաքացիության ձեռքբերման համար[97]: Հարկ է մատնանշել նաև,որ աշխարհիկ դպրոցներից բացի, Իսրայելում գոյություն ունեն պետական կրոնական դպրոցներ, որտեղ պարտադիր կարգով ուսուցանվում է Մովսեսի հնգամատյանը՝ Թորան: Դատական համակարգում գոյություն ունեն հատուկ կրոնական դատարաններ[98], իսկ գործադիր

---

96Տե՛ս Декларация Независимости Израиля, 14.05.1948. Սկզբնաղբյուրը՝ https://www.knesset.gov.il/docs/ru/megilat_ru.htm:

97Համաձայն 1952թ. Իսրայելի հիմնական օրենքի՝ պետության քաղաքացիությունից զրկվում են այն հրեաները,որոնք չեն դավանում հուդայականություն կամ աստվածամերժ են: Տե՛ս **Վ.Գ. Ենգիբարյան**, **Ա.Ս. Չախոյան**, Եկեղեցի պետություն և հասարակություն.Եր.,2009թ.,էջ՝ 12:

98Տե՛ս **Yedidia Z. Ster,** Religion, state, and the Jewish identity crisis in Israel, 2017 Brookings Institution 1775 Massachusetts Avenue, NW Washington, D.C. 20036 U.S.A.,էջ՝ 8-18:

իշխանության մարմիններում գործում է Կրոնի գործերի նախարարություն:

III. **Աթեիստական պետություն**. այս տիպի պետության մեջ հերքվում է կրոնական աշխարհայացքը, հասարակությանը պարտադրվում է աթեիստական գաղափարախոսությունը, իսկ ցանկացած կրոնական կազմակերպություն ենթարկվում է հետապնդման:

Միաժամանակ աթեիստական աշխարհընկալումը հանդիսանում է պետական գաղափարախոսության մի մասը, որը քարոզվում է իշխանության բոլոր ինստիտուտների կողմից: Քաղաքացիները չունեն խղճի և դավանանքի ազատության իրավունք, ինչպես նաև զրկված են իրենց կրոնական պահանջմունքները բավարարելու, կրոնական ծեսերը կատարելու, կրոնական կանոնակարգերին հետևելու իրավունքից:

Ուշագրավ է, որ Սահմանադրությամբ հռչակված միակ աթեիստական երկիրը եղել է Ալբանիայի Ժողովրդական Սոցիալիստական Հանրապետությունը (1976թ. Սահմ.): Խորհրդային Միությունը միայն «թղթի վրա» էր աշխարհիկ պետություն, իսկ իրականում հանդիսանում էր աթեիստական:

IV. **Կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետության** ձևի առաջադրումը մեր կողմից պայմանավորված է որոշ պետությունների՝ աստվածապետական, աթեիստական, կրոնական կամ աշխարհիկ ձևերի շարքին դասելու անհնարինության հետ: Մեր դիտարկմամբ, կիսակրոնական կամ կիսաաշխարհիկ պետությունը կրոնի և պետության փոխգործակցության համատեքստում միջանկյալ օղակ է

կղերապետության և աշխարհիկ պետության ձևերի միջև:

Կիսաաշխարհիկ պետություններում կրոնական կազմակերպություններից մեկն ունի պաշտոնապես սահմանված արտոնյալ դիրք և պետության կողմից արժանանում է որոշակի նախապատվության: Սահմանադրությունում և օրենսդրական ակտերում ամրագրվում է պետության կախվածությունը կրոնական կազմակերպությունից և հակառակը: Կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետությունը՝ նման աշխարհիկ պետության, ճանաչում և երաշխավորում է խղճի և դավանանքի ազատության իրավունքը:

Պետք է ընդգծել, որ ի տարբերություն աշխարհիկ պետականը, կիսակրոնական (կիսաաշխարհիկ) պետության մեջ գերիշխող կամ տիրապետող եկեղեցին (established church[99]) բավական մեծ ազդեցություն ունի պետական կառավարման համակարգում: Որպես կանոն, բարձրաստիճան հոգևորականները նշանակվում են պետական իշխանության կողմից, իսկ որոշ պետական պաշտոնների համար սահմանվում են կրոնական համոզմունքներով պայմանավորված իրավական պահանջներ:

Միաժամանակ կիսաաշխարհիկ պետությունները նյութական, քաղաքական, աջակցություն են ցույց տալիս պաշտոնական կամ տիրապետող (դոմինանտ) կրոնին, երբեմն էլ քաղաքացիներից գանձում եկեղեցական հարկ[100]: Այսպես՝ Դանիայի

---

[99]Տե՛ս Բրիտանական հանրագիտարանի («Բրիտանիկա») ինտերնետային կայքը, https://www.britannica.com/topic/established-church:

[100]Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում (Դանիա, Շվեդիա, Ավստրիա) քաղաքացիները իրենց աշխատավարձի մի չնչին մասը հատկացնում են դոմինանտ եկեղեցուն՝ որպես կրոնական հարկ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Բրունոն ընդդեմ Շվեդիայի գործի

Թագավորությունում Ավետարանական-լյութերական եկեղեցին ունի Սահմանադրությամբ ամրագրված պաշտոնական կրոնի կարգավիճակ[101]: Եկեղեցու գլուխ կանգնած է միապետը, իսկ նրա կառավարման լիազորությունները տրված են Կրոնի գործերի նախարարությանը (Kirkeministeriet[102]): Թագավորության տարածքը բաժանված է տաս թեմերի, որոնց հոգևոր առաջնորդները՝ եպիսկոպոսները, նշանակվում են միապետի կողմից՝ Կրոնի գործերի նախարարի առաջարկությամբ:

Հարկ է ընդգծել, որ միապետը Սահմանադրության 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն պետք է լինի Ավետարանական-լյութերական եկեղեցու անդամ[103]: Բացի այդ, Ավետարանական-լյութերական եկեղեցու կանոնադրությունը սահմանվում է առանձին օրենքով:

Հիմնահարցի քննության համատեքստում հետաքրքրական է դիտարկել Անգլիայի իրավական փորձը: 1534 թվականին Անգլիայի խորհրդարանի կողմից ընդունված «Գլխավորության մասին ակտով»

---

շրջանակներում անդրադարձել է կրոնական հարկի գանձման իրավաչափության խնդրին: Մասնավորապես հիշյալ գործով դիմող կողմը չհանդիսանալով Շվեդիայի եկեղեցու անդամ, այդուհանդերձ պարտավոր էր ամբողջ եկեղեցական հարկի 25 տոկոսի չափով հարկ վճարել («այլադավանի հարկ») Եկեղեցուն, քանի որ պետությունը վերջինիս էր պատվիրակել այնպիսի քաղաքացիական գործառույթներ, ինչպիսիք են՝ թաղումների կազմակերպումը, բնակչության գրանցամատյանների պահպանությունը և այլն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրեց, որ «այլադավանի հարկի» վճարումը համաչափ է եղել Եկեղեցու քաղաքացիական գործառույթների մասով կրած ծախսերին, հետևաբար այն չէր կարող հանգեցնել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտման: Տե՛ս Case of **Bruno v. Sweden**, 28 August 2001, (Application no. 32196/96): Սկզբնաղբյուրը՝ http://echr.ketse.com/doc/32196.96-en-20010828/view/:

[101] Տե՛ս Конституция Датского Королевства от 5 июня 1953 г. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=152:

[102] Տե՛ս Դանիայի Թագավորության Կրոնի գործերի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքը՝ http://www.km.dk/ministeren/:

[103] Տե՛ս Конституция Датского Королевства от 5 июня 1953 г. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=152:

(«Acts of Supremacy»[104]) Անգլիական եկեղեցին անջատվեց Կաթոլիկ եկեղեցուց և միապետը դարձավ միաժամանակ Անգլիական եկեղեցու առաջնորդ: Այդ եկեղեցու իրավունքը կամ իրավական համակարգն՝ իր կիրառման շրջանակով ու նշանակությամբ չի կորցրել արդիականությունը նաև ժամանակակից պայմաններում: Ռեֆորմացիայի դարաշրջանից ի վեր Անգլիական եկեղեցին պահպանեց պետական կրոնի կարգավիճակը:

Արդի ժամանակներում Անգլիական եկեղեցին հսկայական ազդեցություն ունի պետության քաղաքական և հասարակական կյանքում: Եկեղեցու Քենթերբերիի և Յորքի արքեպիսկոպոսները, ինչպես նաև 24 եպիսկոպոսները ի պաշտոնե համարվում են Լորդերի Պալատի անդամ:

Հարկ է նկատել նաև, որ Անգլիական եկեղեցու հոգևոր առաջնորդը համարվում է Քենթերբերիի արքեպիսկոպոսը, որին վերապահված է միապետի թագադրումը: Վերջինս, իր հերթին, վարչապետի առաջարկությամբ նշանակում է եկեղեցու եպիսկոպոսներին:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Անգլիական եկեղեցու բարձրագույն մարմնի՝ Գլխավոր Սինոդի որոշումները իրավական ուժ են ստանում միայն Պառլամենտի կողմից հաստատվելուց հետո:

Կիսակրոնական պետության մեր առաջադրած հատկանիշներին է համապատասխանում նաև Նորվեգիայի Թագավորությունը: 1814 թվականին ընդունված Սահմանադրությունը ճանաչելով յուրաքանչյուրի խղճի ազատության իրավունքը, Ավետարանական-լյութերական եկեղեցուն հռչակել էր որպես պետական կրոն: Սակայն,վերջին

[104]Տե՛ս **Gillaspie, Joel Martin**, Henry VIII: Supremacy, Religion, And The Anabaptists, Utah, 2008, էջ՝ 11:

տարիներին Նորվեգիայում սրընթաց կերպով զարգացող աշխարհիկացման գործընթացների արդյունքում, կրոնը բավականաչափ զիջել է իր դիրքերը՝ ընդհուպ մինչև Սահմանադրության մեջ պաշտոնական կրոնի վերացման վերաբերյալ փոփոխություն մտցնելը[105]: Այդուհանդերձ, հակված ենք այն մտքին, որ Նորվեգիան շարունակում է մնալ կիսաաշխարհիկ պետություն:

Հատկանշական է, որ Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «թագավորը պարտավոր է դավանել Ավետարանական-լյութերական կրոնը, ցուցաբերել նրան օժանդակություն և հովանավորություն»: Միաժամանակ Նորվեգիայի Պետական խորհրդի անդամների ընտրական իրավունքը սահմանափակվում է դավանանքով պայմանավորված պահանջներով: Նույն Սահմանադրության 12-րդ հոդվածում ամրագրվում է, որ «Պետական խորհրդի անդամների կեսից ավելին պետք է դավանեն պաշտոնական, պետական կրոնը»: Իսկ ահա 27-րդ հոդվածի երկրորդ մասում՝ որպես վերոհիշյալի տրամաբանական շարունակություն, ասվում է՝ «պաշտոնական-պետական կրոն չդավանող Պետական խորհրդի անդամը չի կարող մասնակցել այն քննարկումներին, որոնք վերաբերում են պետական եկեղեցուն»[106]:

Նկատենք նաև, որ, թեև, Ավետարանական-լյութերական եկեղեցու՝ պետությունից անջատման փաստին, ազգային եկեղեցու սպասավորները շարունակում են միաժամանակ համարվել պետական ծառայողներ:

---

[105] Տե՛ս «Նորվեգիան անջատել է եկեղեցին պետությունից» վերտառությամբ հոդվածը, 17-ը մայիսի, 2012թ.: Սկզբնաղբյուրը՝ http://www.rosbalt.ru/main/2012/05/17/981962.html:

[106] Տե՛ս Конституция Норвежского Королевства от 17 мая 1814г. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=142:

Ուշագրավ է նաև այն, որ Նորվեգիայի գործադիր իշխանության կառուցվածքում գործում է Մշակույթի և կրոնի գործերի նախարարությունը, որի նախարարը պարտավոր է լինել Ավետարանական-լյութերական եկեղեցու անդամ:

V. **Աշխարհիկ պետություն**: Պետության աշխարհիկ ձևը ամենից առաջ ենթադրում է կրոնական կազմակերպությունների առանձնացվածությունը պետությունից: Նման տարանջատումը, սակայն չի կանխորոշում կրոնական կազմակերպությունների մեկուսացումը պետությունից, ավելին յուրաքանչյուրին վերապահելով սեփական ինքնուրույնությունը, նախատեսում է միմյանց հետ փոխգործակցության ուղիներ:

Աշխարհիկ պետության մեջ կրոնական կանոնները չեն հանդիսանում պետության իրավական համակարգի մաս, ճանաչվում և երաշխավորվում է խղճի և դավանանքի ազատության իրավունքը:

Աշխարհիկ պետության սկզբունքի իրացման համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ առանձին պետությունների իրավական փորձի ուսումնասիրությանը: Այսպես, աշխարհիկության սկզբունքի ամրագրման և կենսագործման տեսանկյունից, պետությունները համասեռ չեն և չունեն միասնական ընդգծված կառուցակարգ: Դա անմիջականորեն առնչվում է սոցիալական գործընթացների հետ, որոնց վրա մեծ ազդեցություն են գործում պետության և իրավունքի զարգացման պատմական, քաղաքական, մշակութային, բարոյական առանձնահատկությունները:

Անշուշտ, պետության աշխարհիկության սկզբունքի իրացումը ուղղակիորեն կախված է տվյալ պետության մեջ կրոնական կազմակերպությունների՝ պետությունից տարանջատման այս կամ այն նախանշանների իրականացման չափից, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակվածության աստիճանից:

Արտասահմանյան երկրների սահմանադրական և այլ իրավական ակտերի համեմատական-իրավական վերլուծության հիման վրա, անհրաժեշտ է պետությունների աշխարհիկության սկզբունքի ամրագրման հարցում կարևորել որոշակի առանձնահատկություններ.

**1) Աշխարհիկ պետության սկզբունքի ուղղակի ամրագրումը պետությունների սահմանադրություններում.** (օրինակ, Ղազախստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Հնդկաստանը և այլն):

Այսպես, Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդվածի համաձայն. «Ղազախստանի Հանրապետությունը հռչակում է իրեն ժողովրդավարական, աշխարհիկ, իրավական և սոցիալական պետություն, որի բարձրագույն արժեքներ են համարվում մարդը, նրա կյանքը, իրավունքներն ու ազատությունները»[107]: Նույն Սահմանադրությունը նաև ամրագրում է յուրաքանչյուրի խղճի ազատության իրավունքը, որը՝ ի թիվս մարդու և քաղաքացու մյուս իրավունքների ու ազատությունների կարող է սահմանափակվել միայն սահմանադրական կարգի պահպանության, հասարակական կարգի, մարդու

---

[107] Տե՛ս Конституция Республики Казахстан от 30 августа 1995 г. (В редакции Законов Республики Казахстанот 07.10.1998г. N284-1, 21.05.2007г. №254-III ЗРК). Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=129:

իրավունքների և ազատությունների, բնակչության առողջության և բարոյականության պահպանման նպատակով[108]:

Ղազախստանի Հանրապետության «Կրոնական գործունեության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի նախաբանում նշվում է, որ Ղազախստանը «...ճանաչում է հանաֆիական ուղղվածության իսլամի և ուղղափառ քրիստոնեության պատմական դերը ժողովրդի մշակութային և հոգևոր կյանքի զարգացման գործում, հարգում է այլ կրոններ, որոնք փոխկապակցված են Ղազախստանի ժողովրդի հոգևոր ժառանգության հետ...»[109]:

Հարկ է նկատել, որ պետությունը բարձր գնահատելով հանաֆիական ուղղվածության իսլամի և ուղղափառ քրիստոնեության դերը, սակայն, նրանց որևէ իրավական արտոնություն չի վերապահում մյուս կրոնական ուղղությունների նկատմամբ՝ ապահովելով միայն համընդհանուր իրավահավասարություն:

Պատեհ է նաև նշել, որ Ղազախստանի Հանրապետության պետական մարմիններում, կրթական և առողջապահական հաստատություններում, զորամասերում արգելվում է կրոնական կազմակերպությունների գործունեությունը և կրոնական արարողությունների անցկացումը[110]: Նույն Սահմանադրության 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն արգելվում է կրոնական

---

[108] Տե՛ս նույն տեղում, հոդվ.՝ 22, 39:

[109] Տե՛ս Закон Республики Казахстан от 11 октября 2011 года № 483-IV «О религиозной деятельности и религиозных объединениях» (с изменениями и дополнениями по состоянию на 11.12.2016 г.). Սկզբնաղբյուրը՝ http://online.zakon.kz/Document/?doc_id=31067690#pos=0;0:

[110] Տե՛ս նույն տեղում:

ուղղվածության կուսակցությունների գործունեությունը[111]:

Ուշագրավ է նաև դիտարկել Թուրքիայի Հանրապետության՝ որպես աշխարհիկ պետության ձևի իրացման փորձը: Թուրքիան իսլամական աշխարհի առաջին երկիրն է, որտեղ կրոնի ինստիտուտը առանձնացվեց պետությունից: 1937 թվականին ընդունված Սահմանադրությունը ամրագրեց «Քեմալիզմի»՝ որպես թուրքական ազգայնականության գաղափարախոսության «վեց նետերի»[112] հայեցակարգը, որի վերջին կետը՝ «լաիցիզմը», ըստ էության, վերաբերում է պետության աշխարհիկությանը: Նույն Սահմանադրությամբ սահմանվեց կրոնական կազմակերպությունների՝ պետական կառավարման և քաղաքականության մասնակցության անթույլատրելիությունը[113]:

---

[111] Հավելենք նաև, որ Ղազախստանի ժողովրդին հղած «Ռազմավարություն «Ղազախստան-2050» ուղերձում Հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաևը ընդգծելով պետության աշխարհիկության կարևորությունը՝ հետևյալ միտքն էր արտահայտել. «Մենք հպարտ ենք, որ հանդիսանում ենք մուսուլմանական հանրույթի մի մասը: Դրանք մեր ավանդույթներն են: Բայց, չպետք է մոռանալ, որ մենք ունենք նաև աշխարհիկ հասարակության ավանդույթներ, որ Ղազախստանը աշխարհիկ պետություն է: Մեր պետության աշխարհիկ բնույթը կարևոր պայման է Ղազախստանի հաջող զարգացման համար: Տե՛ս Послание народу Казахстана под названием «Стратегия «Казахстан-2050» от 4 декабря 2012г. Սկզբնաղբյուրը՝ http://www.akorda.kz/ru/addresses/addresses_of_president/poslanie-prezidenta-respubliki-kazahstan-nnazarbaeva-narodu-kazahstana-14-dekabrya-2012-g:

[112] Քեմալիզմը հիմնված էր վեց սկզբունքների վրա՝ 1) հանրապետականություն, 2) ազգայնականություն, 3) ժողովրդայնություն, 4) էտատիզմ, 5) լաիցիզմ, 6) հեղափոխականություն: Տե՛ս **Р.Ф. Мухамметдинов,** Зарождение и эволюция тюркизма. – Казань, 1996, էջ՝ 157:

[113] Տե՛ս Նույն տեղում, էջ՝ 159: Միաժամանակ առանձնահատուկ հիշատակման է արժանի Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ Մուստաֆա Քեմալի պետության աշխարհիկության ընկալումը, հետևյալ ձևակերպմամբ. «Հարկավոր է այնպես անել, որ Իսլամի մեր սրբազան կրոնը, որին հարելով մենք հպարտանում ենք, առանձնացվի և քաղաքական պայքարից վեր դիտարկվի, որպիսին եղել է երկար դարերի ընթացքում»: // Տե՛ս **E.R. Fığlalı,** Atatürk And The Religion Of Islam. Սկզբնաղբյուրը՝ http://www.atam.gov.tr/dergi/sayi-26/ataturk-and-the-religion-of-islam:

Բացի այդ, հարկ է նկատել, որ Թուրքիայի ներկայիս Սահմանադրության նախաբանում ամրագրվում է այն դրույթը, որ պետության աշխարհիկության սկզբունքի համաձայն՝ հոգևոր կրոնական զգացմունքները չեն կարող ազդեցություն ունենալ պետական գործերի և քաղաքականության վրա[114]: Սահմանադրության 2-րդ հոդվածում սահմանվում է, որ. «Թուրքիայի Հանրապետությունը իրավունքի գերակայության վրա հիմնված՝ ժողովրդավարական, աշխարհիկ, սոցիալական պետություն է…»[115]: Եվ նույն Սահմանադրությամբ յուրաքանչյուրին վերապահված է խղճի, դավանանքի և կրոնական համոզմունքների ազատության իրավունք[116]:

Հավելենք նաև, որ իսլամական աշխարհի երբեմնի դրոշակակիր Թուրքիան՝ այսօր էլ առնչվում է Սահմանադրության հռչակած աշխարհիկության սկզբունքի և խորը արմատավորված իսլամական արժեհամակարգի համատեղելիության դժվարությունների հետ[117]:

Աշխարհիկության սկզբունքը ամրագրված է նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ: Վերջինիս 14-րդ հոդվածը սահմանում է, որ. «Ռուսաստանի Դաշնությունը աշխարհիկ պետություն է: Ոչ մի կրոն չի կարող համարվել պետական կամ պարտադիր: Կրոնական

---

[114]Տե՛ս Конституция Турецкой Республики Введена в действие 7 ноября 1982 года. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=84:

[115]Տե՛ս նույն տեղում, հոդվ.՝ 2-րդ:

[116]Տե՛ս նույն տեղում, հոդվ.՝ 24-րդ:

[117]2016 թվականի ապրիլի 25-ին Թուրքիայի խորհրդարանի խոսնակ Իսմայիլ Կահրամանը սահմանադրական բարեփոխումներին նվիրված խորհրդաժողովներից մեկի ժամանակ հայտարարեց Սահմանադրության մեջ իսլամի դերը հստակեցնելու անհրաժեշտության մասին. «Մենք իսլամական երկիր ենք… աշխարհիկությունը չպետք է տեղ ունենա նոր Սահմանադրության մեջ»: // Տե՛ս Իսմայիլ Կահրամանի հայտարարությունը Ստամբուլում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ: Սկզբնաղբյուրը՝ https://www.rt.com/news/340937-turkey-secular-constitution-dropped/:

միավորումները առանձնացված են պետությունից և հավասար են օրենքի առաջ»[118]:

Անհրաժեշտ է կարևորել այն փաստը, որ «Խղճի ազատության և կրոնական միավորումների մասին» ՌԴ օրենքի նախաբանում ՌԴ Դաշնային Խորհուրդը վերահաստատելով պետության աշխարհիկության սկզբունքը՝ միևնույն ժամանակ ճանաչում է ուղղափառության առանձնահատուկ դերը Ռուսաստանի պատմության, նրա հոգևոր և մշակութային կյանքի ձևավորման և զարգացման գործում[119]: Իսկ, նույն օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ Ռուսաստանի Դաշնությունը պարտավոր է կարգավորել կրոնական կազմակերպություններին հարկային արտոնություններ տրամադրելու, պատմության մշակույթի հուշարձանների վերանորոգման և պահպանման համար ֆինանսական նյութական այլ օժանդակություններ ցուցաբերելու հարցերը:

Պետության աշխարհիկության սկզբունքի իրացման արտասահմանյան փորձը դիտարկելիս արդարացված չի լինի՝ առանց Ֆրանսիայի Հանրապետության օրինակի հաշվառմանը: Ընդ որում, ասվածը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ Ֆրանսիան առաջինը աշխարհում ընդունեց օրենք եկեղեցու և պետության առանձնացման մասին: Այն չէր տարածվում Էլզասի և Լոթարինգիայի վրա, որոնք այդ ժամանակ պատկանում էին Գերմանիային:

Հռչակելով պետության աշխարհիկության սկզբունքը՝ Ֆրանսիան դադարեցրեց պետական կրոնական հաստատությունների

[118] Տե՛ս Конституция Российской Федерации (с учетом поправок, внесенных Законами Российской Федерации о поправках к Конституции Российской Федерации от 30.12.2008 № 6-ФКЗ и от 30.12.2008 № 7-ФКЗ). Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=126:

[119] Տե՛ս Федеральный закон от 26 сентября 1997 г. N 125-ФЗ "О свободе совести и о религиозных объединениях". Սկզբնաղբյուրը՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_16218/:

ֆինանսավորումը, իսկ նրանց գույքի մեծ մասը դարձրեց պետական սեփականություն, արդյունքում «աշխարհիկացման» գործընթացը նյութական ահռելի վնաս (մոտ մեկ միլիարդ ֆրանկ) հասցրեց Ֆրանսիայի Կաթոլիկ եկեղեցուն[120]: Հատկանշական է, որ ֆրանսիական «լաիցիզմը» («Laïcisme») Աթաթուրքի օրոք դարձավ Թուրքիայի գաղափարական հիմնադրույթներից մեկը:

Արդի ժամանակներում Ֆրանսիան շարունակում է պահպանել աշխարհիկ պետության իր կարգավիճակը: Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն «Ֆրանսիան անբաժանելի, աշխարհիկ, սոցիալական, ժողովրդավարական հանրապետություն է և երաշխավորում է օրենքի առջև բոլոր քաղաքացիների հավասարությունը՝ անկախ ծագումից, ռասայից և կրոնից»[121]:

Ակնհայտ է, որ կրոնական և քաղաքական շարժառիթներով պայմանավորված հաճախակի բնույթ կրող ահաբեկչությունները հարկադրում էին ֆրանսիական իշխանություններին չշեղվել աշխարհիկացման ուղուց և կտրուկ գործողություններ իրականացնել հասարակության անվտանգ և ներդաշնակ զարգացման համար[122]:

---

[120] Տե՛ս **И.В. Понкин,** Столетие французского закона о разделении церквей и государства. – М.: Издательство Учебно- научного центра довузовского образования, 2005, էջ՝ 25:

[121] Տե՛ս Конституция Французской Республики 1958 года с изменениями, внесенными 23 июля 2008 года. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=138:

[122] Ասվածի խոսուն վկայությունն է 2017 թվականի սեպտեմբերի 25-ին Ֆրանսիայի Ներքին գործերի նախարար Ժերար Կալոնի կողմից Խորհրդարան ներկայացված «Ներքին անվտանգության ամրապնդման և ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրինագծը, որը ահաբեկչության մասին հիմնավոր հայտարարության առկայության դեպքում կրոնական հաստատությունների փակման իրավական ընթացակարգի պարզեցման երաշխիքներ է ամրագրում: 2017թ. հոկտեմբերի 18-ին Ֆրանսիայի Սենատը 244 կողմ և 22 դեմ ձայներով հավանություն տվեց օրինագծի ընդունմանը: // Տե՛ս «Թեև իրարամերժ մոտեցումներին ահաբեչության պայքարի մասին օրենքը ընդունվեց» վերտառությամբ հոդվածը, 18.10.2017թ.:

Աշխարհիկ պետության սկզբունքն իր ամրագրումն է ստացել նաև Հնդկաստանի Հանրապետության Բարձրագույն օրենքում: Հնդկաստանի Սահմանադրության ներածության մեջ ասվում է. «Մենք՝ Հնդկաստանի ժողովուրդը, հանդիսավոր կերպով որոշել ենք Հնդկաստանը սահմանել որպես ինքնիշխան, սոցիալիստական, աշխարհիկ, ժողովրդավարական հանրապետություն»: Նույն ներածության մեջ երաշխավորվում են «մտքի, կարծիքի արտահայտման, համոզմունքի, դավանանքի, պաշտամունքի ազատությունը»[123]:

Հարկ նկատել, որ Հնդկաստանում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների համակարգում ներառվում է նաև կրոնի ազատության իրավունքը: Ավելին, Հնդկաստանի Սահմանադրության 25-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի խղճի, կրոնի, դավանանքի, կրոնական ծեսերի կատարման և կրոնական քարոզչության ազատությունը:

2) **Պետությունների Սահմանադրություններում աշխարհիկ պետության սկզբունքի ամրագրումը կրել է միջնորդավորված բնույթ,** մասնավորապես խոսքը գնում է Բուլղարիայի, Հայաստանի, Վրաստանի, Ավստրիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Բելգիայի, Մեքսիկայի, Բրազիլիայի, Ավստրալիայի, Բոսնիա և Հերցոգովինայի, Կանադայի, Վենեսուելայի և այլ երկրների մասին:

Կանադայի և Բոսնիա-Հերցոգովինայի սահմանադրությունների հիմնական իրավունքների բաժիններում, բավականին հակիրճ

---

http://www.bfmtv.com/police-justice/la-loi-antiterroriste-adoptee-definitivement-malgre-les-controverses-1280942.html#content/contribution/edit:

[123]Տե՛ս Конституция Республик Индии принята в 1949. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=28:

է խոսվում խղճի և դավանանքի ազատության մասին: Կարելի է ենթադրել, որ կրոնական հարաբերությունների ոլորտում իրավունքների և ազատությունների այդպիսի նվազագույն ամրագրումը կապված է տվյալ պետությունների բնակչության բազմադավան կազմությամբ և որևէ դավանանքի նախապատվությամբ պայմանավորված միջկրոնական ընդհարման վտանգով[124]:

ԱՄՆ-ի, Ավստրալիայի և Շվեյցարիայի սահմանադրություններում ամրագրվում են աշխարհիկ պետության անքակտելի տարրերը: Այսպես, Շվեյցարիայի Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն. «Երկրում երաշխավորվում է խղճի և դավանանքի ազատությունը: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն ընտրել իր կրոնը և աշխարհընկալման համոզմունքը, դավանել այն միայնակ կամ այլոց հետ»[125]:

Իսկ Ավստրալիայի Սահմանադրության 16-րդ հոդվածը սահմանում է, որ. «Ավստրալական Միությունը իրավասու չէ սահմանել իրավական նորմեր պետական կրոնի կամ երկրպագության ձևերի վերաբերյալ կամ սահմանափակել որևէ կրոն դավանելու ազատությունը[126]:

Այնուհետև, ԱՄՆ-ի Սահմանադրության առաջին ուղղումը բովանդակում է հետևյալ դրույթը, որ. «Կոնգրեսը չպետք է հրապարակի որևէ օրենք՝ կապված կրոնի սահմանման կամ դրանցից որևէ մեկ դավանանքի ազատությունը արգելելու հետ, կամ խոսքի և մամուլի ազատությունը սահմանափակող

---

[124] Այսպես, Կանադայում դավանում են կաթոլիկությունը և բողոքականությունը, իսկ Բոսնիա և Հերցեգովինայում՝ ուղղափառությունը,կաթոլիկությունը և իսլամը:

[125] Տե՛ս Союзная конституция Швейцарской Конфедерации от 18 апреля 1999 года. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=135:

[126] Տե՛ս Конституция Австралии (Принята 1900/ Вступила в силу 1,01,1901/ Положения приняты 1988). Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=23:

կամ ժողովրդի՝ խաղաղ միավորվելու և բողոքները բավարարելու վերաբերյալ հանրագրերով կառավարության դիմելու իրավունքը»[127]:

**3) Պետական կամ ավանդական կրոնի (եկեղեցու) սահմանման միջոցով երաշխավորել պետության աշխարհիկությունը**, մասնավորապես խոսքը գնում է Բուլղարիայի, Մոլդովայի, Հայաստանի, Վրաստանի, Անդորրայի, Արգենտինայի, Դոմինիկյան Հանրապետության, Կոստա Ռիկայի, Լիտվայի և այլ պետությունների մասին:

Ներկայումս աշխարհի մի շարք երկրներ գերապատվություն են տվել որևէ կրոնի, որը Սահմանադրությամբ ճանաչվել է որպես ազգային, պետական կամ պաշտոնական, միևնույն ժամանակ՝ երաշխավորելով յուրաքանչյուրի խղճի և դավանանքի ազատության իրավունքը: Հակառակ այս հանգամանքին կան նաև պետություններ, որոնց սահմանադրություններում հստակ ամրագրվում է պետական կամ նախապատվելի կրոնի անթույլատրելիությունը (օրինակ, Ռուսաստանը, Տաջիկստանը, Պարագվայը, Նիգերիան):

Անհրաժեշտ է նշել, որ ավանդական կրոնական կազմակերպությունը կարող է ունենալ պետական կարգավիճակ կամ չունենալ: Անկախ այդ հանգամանքից այն պետության մեջ մեծ դեր է խաղում մշակութային դաստիարակության, ազգային-կրոնական ավանդույթների պահպանման ու զարգացման գործում:

Պետք է նկատել, որ միջազգային իրավունքը, ըստ էության, հակասություն չի տեսնում պետության աշխարհիկության սկզբունքի և պետության կողմից որևէ կրոնական կազմակերպության առանձնաշնորհության

---

[127] Տե՛ս Билль о правах 1789-1791гг. (Первые 10поправок к Конституции США) Хрестоматия по истории государств и права зарубежных стран в 2 т под ред. **К. Батырева, Е. Поликарповой** М., 2013. էջ` 73:

ճանաչման միջև: Այնուամենայնիվ, պետության աշխարհիկությունը երբեմն քաղաքակրթական բախման մեջ է գտնվում աշխարհիկ հռչակված այս կամ այն պետության պատմական փորձի, ավանդույթների, հասարակության պատկերացումների և հոգևոր ընկալումների հետ: Դրա հետևանքները լինում են այն, որ այդպիսի պետությունները հասարակության մեծամասնության հոգևոր պահանջմունքների բավարարման հարցում բավական «հեռու են գնում» քան թույլ է տալիս աշխարհիկության կարգավիճակը:

Միաժամանակ անհրաժեշտ է հավելել, որ աշխարհիկ պետություններում կրոնականության հատկանիշները արտահայտվում են կառավարական միջոցառումների ժամանակ հոգևոր դասի անդամների գործուն մասնակցության, Սուրբ Գրքի վրա նախագահների երդմնակալության[128], եկեղեցական ծեսով կատարված ամուսնությունների պետական ճանաչման[129],

---

[128] Մի շարք աշխարհիկ պետություններում նախագահները երդմնակալության արարողության ժամանակ երդվում են՝ ձեռքը դրած միայն Մայր օրենքի վրա (Ղրղզստան, Ղազախստան): Ռուսաստանի Դաշնության նախագահները, ավանդույթի համաձայն, երդվում են աջ ձեռքը Սահմանադրության, իսկ ձախը՝ նախագահական իշխանության խորհրդանշանի վրա դրված: ԱՄՆ-ի բոլոր նախագահները՝ որոշ բացառություններով, երդվել են Սուրբ Գրքի վրա: Հատկանշական է, որ Լեհաստանի Սահմանադրության մեջ կա դրույթ, որը թույլատրում է երդման տեքստի վերջում Նախագահին կամավոր հնչեցնել «Եվ Աստված ինձ օգնական» նախադասությունը (130-րդ հոդվ.): Համանման իրավակարգավորում է առկա նաև Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության Սահմանադրությունում, որտեղ նույնպես երդման կրոնական հատվածը թողնվում է նախագահի անձնական հայեցողությանը (56-րդ հոդվ.): Հայաստանի Հանրապետությունում նախագահների երդմնակալությունը ավանդույթի ուժով կատարվում է աջ ձեռքը միաժամանակ դրված Սահմանադրության և պետական խորհրդանիշ հիմաստ կրող Վեհամոր Ավետարանի վրա:

[129] Այս հարցի առնչությամբ պետությունները որդեգրել են տարատեսակ մոտեցումներ: Օրինակ Ռումինիայի Սահմանադրությամբ ամրագրվում է, որ եկեղեցական ամուսնությունը կարող է կատարվել միայն քաղաքացիական

կրոնական տների՝ պետության կողմից ճանաչման և այլ դրսևորումներով:

Այսպես, Անդորրայի Իշխանապետությունը՝ որպես աշխարհիկ պետություն, ձևավորել է կրոնի հանդեպ իր յուրահատուկ մոտեցումը: Բնակչության ճնշող մեծամասնությունը հարում է Կաթոլիկ եկեղեցու դավանանքին, սակայն Սահմանադրության 11-րդ հոդվածը երաշխավորում է՝ «մտքի, կրոնի և պաշտամունքի ազատությունը, յուրաքանչյուրի կարծիքը, կրոնը և հավատը արտահայտելու իրավունքը»:

Միաժամանակ Անդորրայի Սահմանդրությունը հիշյալ հոդվածով «երաշխավորում է Կաթոլիկ եկեղեցու ազատ և հանրային գործունեության իրականացումը և պետության հետ առանձնահատուկ համագործակցային հարաբերությունների օժանդակումը՝ հիմնված անդորրական ավանդույթների վրա»: Նույն Սահմանադրությունը ճանաչում է նաև Կաթոլիկ եկեղեցու կողմից հաստատված միավորումները, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ՝ համապատասխան նրա իրավանորմերին և լիարժեք

---

ամուսնության գրանցումից հետո (44-րդ հոդվ.), Լյուքսեմբուրգի Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն քաղաքացիական ամուսնությունը միշտ պետք է նախորդի եկեղեցական ամուսնությանը: Անգլիական եկեղեցու կրոնական ծեսով կատարած ամուսնությունն ունի իրավական ուժ, մինչդեռ մյուս կրոնական միավորումների սպասավորների կատարած ամուսնությունները իրավական ուժ են ստանում քաղաքացիական կարգով գրանցվելուց հետո: ՀՀ Սահմանադրությունը եկեղեցական ամուսնությունների վերաբերյալ հիշատակում չունի, այն կարգավորվում է Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքով, որի 9-րդ հոդվածն ամրագրում է՝ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործած ամուսնություններն ու հռչակած ամուսնալուծությունները»:

գործունակության[130]: Այս առավելություններից բացի, Անդորրայի Սահմանադրությունը եկեղեցական կարգով հաստատված ամուսնությունները ճանաչում է պետական[131]:

Կաթոլիկ եկեղեցին մեծ դեր է խաղում նաև Արգենտինայի ժողովրդի հասարակական կյանքում, ազգային ավանդույթների զարգացման գործում, ինչի հետևանքով պետությունը Կաթոլիկ եկեղեցու հետ սահմանել է գործընկերային հարաբերություններ: Արգենտինայի Սահմանադրության 2-րդ հոդվածը սահմանում է,որ «Դաշնային կառավարությունը աջակցում է Հռոմի Կաթոլիկ-առաքելական եկեղեցու պաշտամունքը»[132]: Միաժամանակ պետությունը երաշխավորում է յուրաքանչյուրի կրոնի ազատության իրավունքը: Հատկանշական է նաև այն փաստը, որ նախքան 1994 թվականի սահմանադրական բարեփոխումները, Արգենտինայի Հանրապետության նախագահը պետք է լիներ Կաթոլիկ եկեղեցու դավանանքի հետևորդ:

Փաստենք նաև, որ Հռոմի Կաթոլիկ եկեղեցին ճանաչվում է Լատինական Ամերիկայի մի շարք այլ երկրներում: Օրինակ, Կոստա Ռիկայի Սահմանադրության 76-րդ հոդվածով՝ «Կաթոլիկ-առաքելական հռոմեական եկեղեցին համարվում պետական կրոն, պետությունը նպաստում է եկեղեցու պահպանմանը, առանց խոչընդոտելու մյուս դավանանքների ազատ գործունեությանը, եթե այն չի հակասում համընդհանուր

[130] Տե՛ս Конституция Княжества Андорра от 14 марта 1993 года. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=158:

[131] Տե՛ս նույն տեղում, հոդվ.՝ 13-րդ, 1-ին մաս:

[132] Տե՛ս Конституция Аргентинской Республики Принята Генеральным Конституционным Конгрессом 1 мая 1853 г. Конституция пересматривалась в 1860, 1866, 1898, 1957 и 1994 гг. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=358&page=3:

բարօրությանը և բարոյական արժեքներին»[133]: Իսկ նույն Սահմանադրության 28-րդ հոդվածով հռչակվում է, որ հոգևոր և աշխարհիկ անձինք որևէ կերպ չեն կարող կրոնական դրդապատճառներով իրականացնել քաղաքական քարոզչություն՝ այդ նպատակի համար օգտագործելով որոշակի կրոնական համոզմունքներ[134]:

Ավանդական եկեղեցու կարգավիճակը ամրագրված է նաև Լիտվայի Հանրապետության «Կրոնական համայնքների և կրոնական միավորումների մասին» օրենքում, որտեղ սահմանվում են ինը ավանդական կրոնական համայնքներ՝ այդ թվում. ա) Հռոմի կաթոլիկ, բ) Հույն կաթոլիկ, գ) Ավետարանական-լյութերական, դ) Ավետարանական-ռեֆորմիստական, ե) Արևելյան ուղղափառ, զ) Հին հավատացյալների է) Հուդայական, ը) Մուսուլման-սուննիական, թ) Կարաիմական[135]:

Իսկ Բուլղարիայի Սահմանադրության 13-րդ հոդվածն ամրագրում է աշխարհիկ պետության առնչվող մի շարք սկզբունքներ, դրանք են. «1) դավանանքի ազատությունը, 2) պետությունից կրոնական հաստատությունների առանձնացվածությունը 3) որ Բուլղարիայի Հանրապետությունում ավանդական կրոն է համարվում Արևելյան-ուղղափառ հավատը, 4) իսկ կրոնական համայնքները և հաստատությունները, ինչպես նաև կրոնական համոզմունքները չեն կարող օգտագործվել քաղաքական նպատակների համար»[136]:

---

[133]Տե՛ս Конституция Коста-Рики, 7 ноября 1949. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=49:
[134]Տե՛ս Նույն տեղում, հոդվ.՝ 28-րդ:
[135]Տե՛ս Закон Литовской Республики «О религиозных общинах и сообществах» от 4 октября 1995 Г. № I-1057. Սկզբնաղբյուրը՝ http://constitutions.ru/?p=8310:
[136]Տե՛ս Конституция Республики Болгарии (Обнародована в “Държавен вестник”, бр.56 от 13 июля 1991 г.). Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=120:

Այսպիսով՝ վերլուծելով աշխարհիկ պետությունը բնութագրող արտասահմանյան երկրների օրենսդրության փորձը, ինչպես նաև պետությունների աշխարհիկության սկզբունքի կենսագործման առանձնահատկությունները, կարելի է ընդհանրացված կարգով ներկայացնել հետևյալ եզրահանգումները.

1. Աստվածապետական, կղերական, աթեիստական պետություններում քաղաքացիները չունեն խղճի ազատության իրավունք, կամ վերջինս զգալիորեն սահմանափակված է: Այդպիսի պետություններն իրենց էությամբ հակադրվում են պետության աշխարհիկ ձևին: Նման բաժանումը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ աստվածապետական և կղերական պետության հակապատկեր է հանդիսանում նաև աթեիստական պետությունը, որտեղ կրոնական կազմակերպությունները ամբողջությամբ մեկուսացված են հասարակական կյանքից և սոցիալական գործընթացներից, ինչպես նաև զրկված են որևէ կարգավիճակից: Այս ծայրահեղությունների միջև գոյություն ունի պետության կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական ձևը, որը բովանդակում է որոշակի հատկանիշներ՝ և՛ աշխարհիկ պետությունից և՛ կրոնապետությունից:

2. Աշխարհիկ պետությունները կրոնի հանդեպ դրսևորած վարքագծով միատեսակ չեն և առաջնորդվում են կուտակված ազգային, կրոնական, մշակութային սովորույթներով, ավանդույթներով, որոնք էլ, ըստ էության, նախանշում են նրանց ազգային բարոյական նախահիմքն ու նկարագիրը: Աշխարհիկության սկզբունքի իրավական ամրագրումը դեռևս լիարժեք չի երաշխավորում դրա անշեղ իրացումն ու կենսագործումը: Հատկապես դա վերաբերում է

այն պետություններին, որտեղ կրոնական կազմակերպություններից մեկն ավանդաբար շոշափելի մասնակցություն է ունեցել տվյալ պետության կամ ազգի մշակութային, բարոյական, արժեքային համակարգի կայացման և զարգացման գործում:

# ԳԼՈՒԽ II.
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԻԿՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԻ .ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

## 2.1. Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սահմանադրաիրավական բովանդակության հիմնահարցերը. տեսական-իրավական վերլուծություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 17-րդ հոդվածի 2-րդ մասը հռչակում է, որ կրոնական կազմակերպությունները անջատ են պետությունից: Սահմանադրական այս նորմի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության կարևոր բնութագրիչներից է նրա աշխարհիկ լինելը:

Աշխարհիկ պետություն հասկացությունն ինքնին, ոչ մի դեպքում չի կարող նույնացվել ոչ աթեիստական, ոչ կղերական և ոչ էլ կիսակրոնական պետության հասկացության հետ: Սակայն պետք է նշել, որ, տեսական-իրավական վերլուծությունների մակարդակում ակներև է պետության աշխարհիկության սկզբունքի էությունը բացահայտելու խնդիրը:

Հիմնախնդրին վերաբերող մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն աշխարհիկ պետությունը բնորոշող տարբեր տեսակետներ: Բացի այդ անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն արտասահմանյան հեղինակների՝ հիմնահարցի առնչությամբ իրականացրած տեսական-իրավական վերլուծության արդյունքների, հայրենական իրավագիտության մեջ բավականին սուղ են աշխարհիկ պետության հասկացության և էության սահմանումներն ու մեկնաբանությունները: Անհրաժեշտ է նկատել, որ հաճախ տարբեր հեղինակների կատարած հետազոտությունների վրա որոշակի ազդեցություն է թողնում նրանց հատուկ ընդգծված կրոնական աշխարհայացքը, ինչը խանգարում է անաչառ և օբյեկտիվ գնահատել աշխարհիկ պետության էությունն ու նշանակությունը և դրա հետ անմիջականորեն փոխկապակցված պետության և կրոնական կառույցների փոխգործակցության սահմանները:

Սույն հետազոտության առարկայի շրջանակներում աշխարհիկ պետության՝ որպես սոցիալ-իրավական երևույթի համալիր ուսումնասիրման միջոցով անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք «աշխարհիկ պետությունը» համարվում է «ապակրոնական» կամ «կրոնամերժ» պետություն, թե՝ ոչ, միևնույն ժամանակ բացահայտելով աշխարհիկ պետության իրավաընկալման շրջանակները:

Աշխարհիկ պետության հասկացության ամբողջական ընկալման համար անհրաժեշտ է բացահայտել «աշխարհիկ» և «աշխարհիկություն» եզրույթների իմաստը և բովանդակությունը: Ընդ որում, «աշխարհիկ» եզրույթի վերաբերյալ լեզվաբանների և բառարանագիրների կատարած ուսումնասիրությունները և մեկնաբանությունները ցույց են տալիս, որ

«աշխարհիկը»՝ («secular») բնութագրվելով որպես «աշխարհային», «քաղաքացիական», սկզբունքորեն հակադրվում է «կրոնականին» (clerical)[137]: Այս հանգամանքը միայն առաջին հայացքից է կանխորոշում «աշխարհիկ պետության»՝ որպես «հակակրոնական պետության» իմաստային բովանդակությունը:

Ինչ վերաբերում է պետության «աշխարհիկությանը» («secularism»), ապա այն լայն իմաստով պետության և կրոնական կազմակերպությունների փոխգործակցության ընթացքում ծագող հարաբերությունների անմիջական գործընթացի բնութագիրն է:

Կանադացի պրոֆեսոր Չարլզ Թեյլորը աշխարհիկության վերաբերյալ առանձնացրել է հետևյալ երկու տեսակետները.

ա)եկեղեցու և պետության բաժանման գաղափարը,

---

[137] Հայ նշանավոր լեզվաբան, ակադեմիկոս Է.Բ. Աղայանը իր «Արդի հայերենի բացատրական բառարանում» տվել է «աշխարհիկ» եզրույթի հետևյալ բնութագրումները.«1.Առօրյա կյանքի հետ կապված: 2. Ժողովրդական: 3. Ոչ կրոնական»: Միաժամանակ, «Հայոց լեզվի նոր բառարանում» «աշխարհիկ»-ը բացատրվում է «1.աշխարհային, 2.հաճոյասէր, 3. ոչ կրօնական և այլն: Իսկ հայագետ, ակադեմիկոս Ս.Ս. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանում» հանդիպում ենք «աշխարհիկ» եզրույթի այսպիսի մեկնաբանման. «1. Աշխարհական: Աշխարհիկ մարդ: Հոգևորականները աշխարհիկներից աւելի են մեղանչում պատուիրանների դէմ: 2. Աշխարհաբար՝ ժողովրդական (լեզու): Մեր աշխարհիկ լեզուն դեռ շատ կարօտ է մշակութեան...»: Ռուս մտավորական Վ.Ի. Դալը իր բացատրական բառարանում տալիս է աշխարհիկության հետևյալ սահմանումը՝ «Աշխարհիկ, դեպի աշխարհը, տարբ. իմաստ. վերաբ., երկրային, աշխարհային, ունայն կամ քաղաքացիական...»: Պրոֆեսոր Ս.Ի. Օժեգովը իր «Ռուսաց լեզվի բացատրական բառարանում» տալիս է հետևայլ սահմանումը. «Աշխարհիկ՝ որպես ոչ եկեղեցական, աշխարհային, քաղաքացիական: Բուրժուա-ազնվական հասարակության մեջ ընտրյալների խավ, որը պատկանում է արտոնյալ դասերին»: Տե՛ս **Է.Բ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976թ., էջ՝ 91; Հայոց լեզվի նոր բառարան, **Գնէլ արք. Ճէրէճեան**, **Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան**, **Կ. Տօնիկեան** եւ Որդիք Հրատարակչատուն, Պէյրութ, 1992թ., էջ՝ 162; **Ս.Ս. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944թ., էջ՝ 197; **В.И. Даль**, Толковый словарь живого великорусского языка. Т. 4. М.: Русский язык, 1982, էջ՝ 451; **С.И. Ожегов**, Толковый словарь русского языка / Под общ. ред, Л.И. Скворцова. М., 2007, էջ՝ 681:

բ) բազմազան հասարակության (plural society) մեջ տարբեր կրոնների նկատմամբ պետության հավասարազոր չեզոքությունը[138]:

Իսկ պրոֆեսոր Ս.Է. Դենիկաևան գտնում է, որ «աշխարհիկությունը» պետք է հասունանա հանրային գիտակցության խորքերում՝ փորձերի և սխալների եղանակով, քանի որ իրական աշխարհիկությունը կարևորագույն հանրային առաքինություններից մեկն է, քաղաքացիական ինքնագիտակցության, քաղաքացիների սոցիալական ստեղծագործության արդյունքը»[139]:

Հարկ է նկատել նաև, որ պետության աշխարհիկությունը ճանաչում, երաշխավորում և պաշտպանում է մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը: Սակայն, այս բնութագրական հատկանիշից զատ, աշխարհիկությունը բնորոշվում է նաև, որպես հասարակական հարաբերություններում մտքի, խղճի, կրոնի ազատության արժեք, միևնույն ժամանակ հանդես գալով էթիկական կատեգորիա, կատարելատիպ (իդեալ)՝ պետության, քաղաքացիների և հանրային ինստիտուտների փոխհարաբերությունների գործընթացում:

Այստեղից, «աշխարհիկությունը» որպես պետության և կրոնի փոխգործակցության համատեքստում դիտարկվող երևույթ, իրենից ներկայացնում է մարդու մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի պահպանման երաշխիք և

---

[138]Տե՛ս **C. Taylor**, Why We Need a Radical Redefinition of Secularism,|| in Jonathan VanAntwerpen and Eduardo Mendieta (editors), The Power of Religion in the Public Sphere, New York, 2011, էջ՝ 34-59:

[139]Տե՛ս **С.Э. Деникаева,** Конституционно-правовые основы формирования Российской Федерации как светского государства: дисс. ... канд. юрид. наук: 12.00.02. Махачкала, 2006, էջ՝ 48: Սկզբնաղբյուրը՝ http://www.dissercat.com/content/konstitutsionno-pravovye-osnovy-formirovaniya-rossiiskoi-federatsii-kak-svetskogo-gosudarstv:

արժեք՝ անկախ մարդու աշխարհայացքից, կրոնական և ոչ կրոնական պատկերացումներից:

Միաժամանակ պետության աշխարհիկության անքակտելի տարրեր կարող են դիտարկվել պետական ծառայության աշխարհիկությունը[140] և կրթության աշխարհիկությունը[141]:

Այսպիսով՝ բացահայտելով աշխարհիկ պետության հասկացության հետ անմիջականորեն փոխկապակցված երկու առանցքային եզրույթների նշանակությունը անցնենք բուն հիմնահարցի համալիր քննարկմանը:

Վերոգրյալի կապակցությամբ անհրաժեշտ է հիշատակել աշխարհիկ պետության հասկացության ըմբռնման հայրենական իրավագիտական միտքը: Մասնավորապես՝ պրոֆեսոր Ն.Ա. Այվազյանի կարծիքով. «պետության աշխարհիկ բնույթը նշանակում է, ամենից առաջ, պետության անջատումը եկեղեցուց, նրանց գործունեության ոլորտների սահմանազատում: Այդպիսի պետության մեջ գոյություն չունի պաշտոնական, պետական կրոն, և նրանում գործող կրոնական միավորումները, եկեղեցական կանոնները և նորմերը չեն կարող ազդել պետական կարգի,

[140] Աշխարհիկության սկզբունքը, նախևառաջ, ընկած է պետական ապարատի կառուցվածքի և գործունեության հիմքում: Դրա կարևորագույն բաղկացուցիչ մասն է հանդիսանում պետական իշխանության մարմինների աշխարհիկությունը: Վերջինիս բովանդակությունը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ ա) պետական իշխանության մարմինների ձևավորման աշխարհիկությունը, բ) պետական իշխանության մարմինների գործունեության աշխարհիկությունը, գ) պետաիշխանական լիազորություններով օժտված անձանց սահմանադրաիրավական կարգավիճակի աշխարհիկությունը, դ) պաշտոնատար անձանց էթիկայի աշխարհիկությունը, ե) պետական խորհրդանիշային համակարգի աշխարհիկությունը: Տե՛ս **В.Н. Линкин,** Светскость государственной службы как одна из составляющих реализации принципа светского государства //Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. Ростов н/Д., 2013, №11, էջ՝ 10:

[141] Կրթության աշխարհիկության վերաբերյալ ուսումնասիրությունները կատարվել են աշխատանքի մյուս պարագրաֆներում:

պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց գործունեության, պետական կրթական համակարգի պետության գործունեության այլ ոլորտների վրա»[142]:

Սահմանադրագետ Ռ.Ա. Պապայանը արդարացի համարելով պետությունից եկեղեցու տարանջատումը, նկատել է, որ ներկայումս պետական իշխանության աշխարհիկ բնույթը առավելապես մեկնաբանվում է, որպես պետության անտարբերություն պետական կեցության հոգևոր կողմի նկատմամբ[143]: Միաժամանակ նա ընդգծում է այդ թյուրըմբռնման հետևանքով «աշխարհիկ պետության» ներկայիս վերափոխված իմաստը, որն է՝ «պետության անջատումն Աստծուց, և դա է մարդկությանը խոցող արդի բոլոր ախտերի, ինչպես նաև դրանց անհաղթահարելիության հիմնական պատճառներից մեկը» [144]: Արդի իրավունքի ակունքներում կարևորելով աստվածային օրենքների և հատկապես քրիստոնեության դերը՝ Ռ. Պապայանը փաստորեն չի ընդդիմանում պետության աշխարհիկության սկզբունքի էությանը, ճիշտ հակառակը՝ համարելով այն «ճիշտ նորմ»՝ արդարացիորեն ընդգծում է այն վտանգավոր հակվածությունը, որ աշխարհիկությունը արդի աշխարհում փոխակերպվում է աստվածամերժության, որի պարագայում «խղճի ազատություն հասկացությունն ընկալվում է որպես ազատություն խղճից»[145]:

---

[142] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք, պատ.խմբագիր՝ պրոֆ. **Ն.Ա. Այվազյան**, Եր., 2016թ., էջ՝ 145:

[143] Տե՛ս **Ռ.Ա. Պապայան**, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, գիտ.խմբ.՝ Գ.Գ.Հարությունյան, Էջմիածին, 2002թ., էջ՝ 592:

[144] Տե՛ս Նույն տեղում, էջ՝ 42-43, 592:

[145] Տե՛ս Նույն տեղում, էջ՝ 42, 592:

Աշխարհիկ պետությունը՝ որպես պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերակցության սոցիալ-իրավական մոդել, ենթադրում է որոշակի սահմանների առկայություն: Պրոֆեսոր Ռ.Վ.Ենգիբարյանը առաջ է քաշում աշխարհիկ պետության և կրոնի հարաբերակցության հետևյալ սահմանները. «տարբեր դավանանքների իրավահավասարությունը, կրոնական (ինչպես նաև աթեիստական) միավորումների կազմակերպման, գործառույթի իրականացման և գործունեության ազատությունը օրենքի շրջանակներում, պետության միջամտության անթույլատրելիությունը քաղաքացիների՝ եկեղեցու հետ ունեցած հարաբերություններին և կրոնական միավորումների ներքին գործերին, ինչպես նաև եկեղեցու, կրոնական միավորումների չմիջամտելը պետության գործերին, քաղաքականությանը, տեղական ինքնակառավարմանը, կրթության համակարգի առանձնացումը եկեղեցուց և կրոնական կազմակերպություններից»[146]:

Իսկ պրոֆեսորներ Գ.Գ.Հարությունյանը և Մ.Վ. Բագլայը տալիս են աշխարհիկ պետության գաղափարի հետևյալ մեկնաբանումը, որ «աշխարհիկ պետությունը իր կազմակերպման և գործունեության վրա կրոնի ազդեցությունից ազատ պետությունն է: Աշխարհիկ պետության մեջ հետևողականորեն իրականացված է եկեղեցու և պետության անջատումը»[147]:

Հարկ է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ աշխարհիկ պետության հիմնահարցի վերաբերյալ առկա են բազմաթիվ

---

[146] Տես՝ **Р.В. Енгибарян, Э.В. Тадевосян,** Конституционное право: Учебник. М: 2000, էջ՝ 119:

[147] Տես՝ **Г.Г. Арутюнян, М.В. Баглай,** Конституционное право: Энциклопедический словарь. М., 2006, էջ՝ 425:

ուսումնասիրություններ, որոնք արժևորվում են իրենց գիտականությամբ: Այսպես՝ պրոֆեսոր Պ.Ն. Դոզորցևը իր աշխարհիկ պետության զարգացման պատմաիրավական հետազոտության մեջ նշում է, որ «աշխարհիկ պետությունը կղերապետությանը և աստվածապետությանը հակադրվող ոչ եկեղեցական պետություն է…»[148]: Իսկ դոցենտ Մ.Ա. Բուլավինան սահմանում է աշխարհիկ պետությունը այնպիսի պետություն, որտեղ «իշխանությունը պատկանում է քաղաքացիական և ոչ թե հոգևոր, եկեղեցական, կրոնական իշխանություններին, իսկ աշխարհիկ պետության հակապատկերը հանդիսանում է աստվածապետությունը»[149]: Ասվածի համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ աշխարհիկ պետությունը հակադրվում է ոչ միայն աստվածապետությանը, այլև կղերական և մասամբ նաև կիսաաշխարհիկ պետությանը:

Մեկ այլ պրոֆեսոր Օ.Ե. Կուտաֆինի կարծիքով, «աշխարհիկ է համարվում այն պետությունը, որտեղ չկա պաշտոնական կրոն, և ոչ մի դավանանք չի ընդունվում որպես պարտադիր կամ գերադասելի: Այդպիսի պետության մեջ կրոնը, դրա կանոնները և դոգմաները, ինչպես նաև կրոնական կազմակերպությունները իրավասու չեն ազդելու պետական կարգի, պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության, պետական կրթական համակարգի և պետության գործունեության այլ ոլորտների վրա»[150]: Զարգացնելով իր տեսակետը, Օ. Կուտաֆինը միաժամանակ հիշատակում է պետական

---

[148] Տե՛ս **П.Н. Дозорцев,** Развитие светской государственности в России: история и современность. – СПб.: Санкт-Петербургская акад. МВД России, 1998, էջ՝ 124:

[149] Տե՛ս **М.А. Булавина,** «К вопросу о правовом содержании понятия «светское государство» Известия МГТУ «МАМИ» № 2(20), 2014, т. 5, էջ՝ 167:

[150] Տե՛ս Конституционное право России: учебник для студентов высших учебных заведений, **Е.И. Козлова, О.Е. Кутафин** - 3-е изд., перераб. и доп. - М.: 2004, էջ՝ 193:

իշխանության մարմինների աշխարհիկությունը որպես՝ պետության գործառույթի իրականացման պայմաններից մեկը, որը մեր կարծիքով, հանդիսանում է աշխարհիկ պետության գոյության կարևոր պայման:

Բացի այդ, պրոֆեսոր Յ.Ի. Ստեցովսկին ընդգծում է աշխարհիկ պետության հետևյալ հատկանիշները՝ ա)որևէ պետական կամ պաշտոնական կրոնի բացակայությունը, բ) որևէ դավանանք չի կարող լինել պարտադիր կամ նախընտրելի, գ) կրոնական կանոնները չեն կարող լինել իրավունքի աղբյուր, դ) կրթության և դաստիարակության պետական համակարգը պետք է կրի աշխարհիկ բնույթ, ե)պետությունը իրավունք չունի միջամտելու մարդու խղճի ազատությանը, կրոնական համոզմունքների ընտրությանն ու տարածմանը, ինչպես նաև հոգևոր ազատության և մասնավոր կյանքի ոլորտներին[151]:

Իսկ դոցենտ Ա.Ֆ. Մեշչերյակովան աշխարհիկ պետությունը համարում է հանրային իշխանության կազմակերպման այնպիսի ձև, որի պարագայում «պետությունն ու եկեղեցին առանձնացված են և միևնույն ժամանակ փոխգործակցում են միմյանց հետ, պետական կամ պաշտոնական կրոնը բացակայում է, երաշխավորվում են կրոնական միավորումների հավասարությունը, խղճի ազատությունն ու քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ կրոնի հանդեպ ունեցած վերաբերմունքից, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ անձի, պետության և կրոնական միավորումների շահերի հավասարակշռությանը հասնելու

---

[151]Տե՛ս **Ю.И. Стецовский,** Право на свободу и личную неприкосновенность: Нормы и действительность.— М.: Дело, 2000, էջ՝ 433-434:

նպատակով»[152]: Տվյալ սահմանման մեջ հատուկ դեր է հատկացվում պետության և կրոնական կազմակերպությունների փոխգործակցությանը, որտեղ հանրային նշանակության առանցքային նպատակ է հանդիսանում բարեգործությունը, սոցիալական աջակցությունը կարիքավորներին և այլն:

Արդարացի է պրոֆեսոր Ի.Վ. Պոնկինի մոտեցումը, ըստ որի՝ աշխարհիկ պետությունը որպես «պետություն, ապահովում է պետական ինստիտուտների և կրոնական կազմակերպությունների (ինչպես նաև այն միությունների, որոնց գործունեությունն ուղղված է որոշակի գաղափարախոսության տարածմանը) անկախությունն ու ինքնիշխանությունը՝ իրենց իրավասության համապատասխան ոլորտներում, երաշխավորում է պետական կրոնի և գաղափարախոսության՝ որպես պարտադիր սահմանման անթույլատրելիությունը...»[153]: Միաժամանակ, ներկայացվածի վերաբերյալ ուշագրավ է վերջին այն միտքը, որ աշխարհիկ պետության հասկացությունը սահմանելիս, ըստ էության, հանգում է պաշտոնական կրոնի՝ որպես պարտադիր կրոնի (գաղափարախոսության) սահմանման բացակայությանը և ոչ թե առհասարակ պաշտոնական կրոնի սահմանման անթույլատրելիությանը՝ դրանով իսկ կանխորոշելով «պետական կրոն» և «պարտադիր գաղափարախոսության կամ կրոն» եզրույթների նույնացման անթույլատրելիությունը: Բոլոր պարագաներում

[152]Տե՛ս **А.Ф. Мещерякова,** Светское государство в современной России конституционно- правовой анализ: дис. ... канд. юрид. наук: 12.00.02, Мещерякова Анна Федоровна, 2009, էջ՝ 28:

[153] Տե՛ս **И.В. Понкин,** Светскость государства. М.: 2004, էջ՝ 49:

պարտադիր կրոնը գաղափարական «առճակատման» մեջ է աշխարհիկ պետության հայեցակարգի հետ:

Պրոֆեսոր Մ.Վ. Բագլայի կարծիքով, աշխարհիկ պետության հիմքում ընկած է այն թեզը, որ պետությունից կրոնական միավորումներն անջատ են, և անթույլատրելի է միմյանց գործերին փոխադարձ որևէ միջամտությունը[154]:

Աշխարհիկ պետության հիմնահարցի քննարկման համատեքստում խնդրին է անդրադառնում պրոֆեսոր Վ.Ա.Տումանովը, ըստ որի. «Աշխարհիկ պետությունը այն պետությունն է, որտեղ հետևողականորեն իրականացված է եկեղեցու անջատումը պետությունից, չկա որևէ պետական կամ պարտադիր կրոն, ճանաչվում է կրոնի և աթեիզմի, կրոնական և հակակրոնական հայացքների ազատությունը»[155]: Տվյալ հասկացության մեջ անհասկանալի է «հակակրոնական հայացք» եզրույթի գործածությունը, քանի որ հակակրոնականությունը, մեծ հաշվով, աթեիզմի հոմանիշն է հանդիսանում, որն արդեն իսկ հիշատակված է վերոհիշյալ սահմանման մեջ:

Իսկ իրավագետ Ռ.Ս. Բատիրը պետությունը դիտարկում է աշխարհիկ, «եթե այն իր որոշումներում ելնում է ոչ թե հավատի կանխադրույթներից, այլ գործում է բանականության նկատառումներից ելնելով: Որպեսզի պետությունը հասնի կատարյալ աշխարհիկության, այն պետք է իր օրենսդրությունից կատարելապես «արմատախիլ անի» կրոնի բոլոր թաքնված արատները, «մաքրագործի» իրեն դրա ցանկացած

---

[154]Տե՛ս **М.В. Баглай**, Конституционное право Российской Федерации. Учебник для ВУЗов: учеб. пособие / Баглай М.В. – 10-е изд. – М.: 2013, էջ 139:

[155]Տե՛ս Конституция РФ - энциклопедический словарь, **В.А. Туманов, В.Е. Чиркин, Ю.А. Юдин,** Руководитель авт. коллектива **С.М. Шахрай.** — 2-е изд., перераб. и доп. М.: Большая рос. энцикл.: 1997, էջ 73:

դրսևորումներից և գործի միայն բանականության համաձայն»[156]:

Անշուշտ, ասվածը բոլորովին չի ենթադրում, որ հանրային իշխանությունը պետք է հեռանա հավատացյալներին և կրոնական կազմակերպություններին առնչվող հիմնախնդիրներից: Պետության և կրոնական կազմակերպությունների փոխգործակցությունը տեղի է ունենում ոչ թե այն պատճառով, որ պետությունը հետևում է կրոնական նորմերին, այլ նրա համար, որ այդպիսի համագործակցությունը զգալի արդյունք է ունենում հասարակության համար:

Պրոֆեսոր Ս.Ա. Մոզգովոյը իր կատարած հետազոտության մեջ նշում է, որ «անհնար է որևէ աշխարհիկ պետության կայացումն ու զարգացումը առանց տվյալ պետությունից կրոնական կազմակերպությունների տարանջատման, հետևաբար, աշխարհիկ պետությունը միշտ հանդիսանում է ապակրոնական: Ընդ որում, ապակրոնական պետությունը միշտ չէ որ աշխարհիկ է հանդիսանում: Այն նաև կարող է ամբողջությամբ աթեիստական լինել: Կատարյալ աշխարհիկ պետությունը հեռացած է ինչպես կրոնից, այնպես էլ աթեիզմից կամ այլ աշխարհայացքից: Պետությունը թույլ է տալիս նրանց գոյակցել իրենց շրջանակներում, միաժամանակ պահպանել աշխարհայացքային բազմակարծություն»[157]:

Աշխարհիկ պետության վերաբերյալ այլ մոտեցում է առաջադրում պրոֆեսոր Տ.Պ. Լուպարևը. «Աթեիզմն ու կրոնը պետք է հավասարապես հեռացված լինեն իրեն աշխարհիկ համարող

---

156Տե՛ս **Р.С. Батыр,** Вместо реформы //сборник статей. Нижний Новгород – Ярославль: 2007, էջ 88:

157Տե՛ս **С.А. Мозговой,** Светское государство как мировоззренчески нейтральное // Социономикум: Международный сборник научно-практических работ. Вып. – Ростов- н./Д. 2006, էջ 42:

պետությունից: Ժողովրդավարական պետությունը պարտավոր է կրոնական կազմակերպություններին ցուցաբերել միանման մոտեցում, այն չի կարող տարանջատել դավանանքներն ըստ մեծերի և փոքրերի, ավանդականների և ոչ ավանդականների, քանի որ իրական ժողովրդավարությունը կայանում է ոչ միայն մեծամասնության կարծիքը և տրամադրությունները հաշվի առնելու, այլ նաև ցանկացած փոքրամասնության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեջ»[158]:

Իսկ պրոֆեսոր Լ.Օ.Իվանովան ի հակադրություն աշխարհիկ պետության սահմանման հիմքում «գերադասելի դավանանքի» գործոնը մերժող տեսակետներին, իր սոցիոլոգիական հետազոտության մեջ ենթադրում է, որ. «պետությունը, հանդես գալով որպես աշխարհիկ, չի խախտում խղճի ազատության սկզբունքը, երբ արտահայտում է ոչ միատեսակ վերաբերմունք տարբեր դավանանքային համայնքների նկատմամբ՝ ելնելով «համընդհանուր բարօրություն» հասկացությունից»[159]: Ըստ երևույթին, հեղինակը «համընդհանուր բարօրություն» եզրույթի իմաստային բովանդակության մեջ ներդնում է որոշակի բարոյական արժեքներ, իսկ «ոչ միատեսակ վերաբերմունքը» պետության քաղաքականությունն է՝ սահմանափակելու ապակառուցողական կամ պետության և հասարակության ազգային և բարոյական դիմագիծը խաթարող կրոնական կառույցների գործունեությունը:

Համաձայնվելով այն մտքի հետ, որ ժողովրդավարական պետությունը պետք է հաշվի

[158]Տե՛ս **Г.П. Лупарев,** Конституционные проблемы законодательства о религии и религиозных организациях // Религия и право. М.: 2004, № 4, էջ 7:
[159] Տե՛ս **Л.О. Иванова,** Религия и права человека // Социологические исследования (СОЦИС): Ежемесячный научный и общественно-политический журнал. 1998. №6, էջ 103:

առնի այսպես կոչված «դավանական փոքրամասնության» օրինական շահերը, այդուհանդերձ հարկ ենք համարում հակադրվել աշխարհիկ պետության սահմանման մեջ դավանանքները «մեծերի և փոքրերի, ավանդականների և ոչ ավանդականների» չտարանջատման տեսակետի հետ: Կարծում ենք, որ աշխարհիկ պետությունները՝ նման բոլոր պետություններին, ունեն իրենց պատմականորեն կուտակված ազգային, ավանդական, բարոյական արժեքներն ու ձեռքբերումները: Այդպիսի արժեք կարող է հանդիսանալ, դիցուք, որևէ հոգևոր կառույց,որը կարևորագույն դեր է խաղացել տվյալ պետության գոյության տարբեր շրջափուլերում:

Հետևաբար, պետության կողմից այդպիսի կառույցի կամ կրոնական կազմակերպության նախապատվության իրավունքը կամ առանձնահատուկ կարգավիճակի ճանաչումը չի կարող վնասել մնացյալ կրոնական կազմակերպությունների անխափան և ազատ գործունեությանը: Միայն այն փաստը որ, Ռուսաստանում Վրաստանում, Հայաստանում, Անդորրայում,Արգենտինայում,ԿոստաՌիկայումև բազմաթիվ այլ պետություններում այս կամ այն հոգևոր կազմակերպությունները դարձել են տիրապետող (դոմինանտ) մեզ ամենևին հիմք չի տալիս պնդելու,որ վերոհիշյալ պետությունները աշխարհիկ չեն:

Հարկ է հստակեցնել նաև,որ պետության կողմից մեկ որոշակի կրոնական դավանանքի դերի ընդգծումը և նրա հետ սերտ գործընկերային փոխհարաբերությունների ձևավորումը չպետք է գնահատել որպես օրենքի առջև կրոնական կազմակերպությունների իրավահավասարության սկզբունքի շեղում,կամ նահանջ պետությունից՝

կրոնական կազմակերպությունների բաժանման սկզբունքից:

Աշխարհիկ պետության հիմքում ընկած պետությունից կրոնական կազմա-կերպությունների առանձնացվածությունը չի ենթադրում նրանց միջև կապի խզում, օտարում այլ յուրաքանչյուրին վերապահելով հասարակության մեջ իր առաքելությունը, նույնիսկ պահանջում է երկկողմանի համագործակցության որդեգրում՝ հանուն հասարակության բարօրության: Պետության կողմից որևէ կրոնի պատմական դերի և նշանակության ճանաչումը, արտոնությունների շնորհումը անթույլատրելի չէ, և համապատասխանում է միջազգային իրավունքի չափանիշներին:

Այդ իմաստով՝ մարդու իրավունքների բնագավառում առանցքային նշանակություն ունի «հայեցողությունը» (discretion), որը ենթադրում է քաղաքականության մշակման գործընթացում պետության նախընտրության որոշակի սահմաններ (margins of appreciation[160]): «Հայեցողության սահմանների» սկզբունքը աշխարհիկ պետության բաղադրատարր հանդիսացող խղճի ազատության իրավունքի իրացման համատեքստում թույլ է տալիս պետությանը չնույնականացնել և հավասարաչափ չվերաբերվել բոլոր կրոնական կառույցներին:

Բացի այդ, Վենետիկի հանձնաժողովի, Եվրախորհրդի մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Կրոնի կամ համոզմունքի ազատության հարցերով խորհրդատվական խորհրդի համատեղ եզրակացության մեջ նշվում է, որ «Կրոնական որոշակի համայնքների համար նպաստավոր

160 Տե՛ս **S. Greer,** The Margin of Appreciation: Interpretation and Discretion Under the European Convention on Human Rights, Council of Europe, Human Rights Files NO. 17, 2000:

պայմաններ սահմանելը սկզբունքորեն չի հակասում Կոնվենցիայի պահանջներին, պայմանով, որ տարբերակված վերաբերմունքը թելադրված լինի օբյեկտիվ և խելամիտ հիմնավորումներով...»[161]:

Այս առումով հարկ է կարևորել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը առանձնահատուկ հարաբերություններ է կառուցել հայ ժողովրդի հոգևոր կյանքում իր նշանակալի ավանդը ներդրած Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հետ, միաժամանակ սահմանադրաիրավական հստակ երաշխիքներ է ապահովել մյուս բոլոր կրոնական կազմակերպությունների ազատ գործունեության համար՝ հարգելով յուրաքանչյուր անհատի խղճի և կրոնի ազատության իրավունքը: Հարցի քննության այս դիտանկյունից, կարծում ենք, որ պետությունը հստակ է նախանշել իր հանրային քաղաքականության գործառույթի իրականացման ուղղությունները՝ մի կողմից առանձնաշնորհ կարգավիճակ տալով Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն, իսկ մյուս կողմից՝ հաստատելով կառուցողական երկխոսության դաշտ տարբեր կրոնական կազմակերպությունների միջև:

Այսպիսով, «աշխարհիկ պետություն» հասկացությունն ինքնին արտացոլում է տվյալ պետության վերաբերմունքը կրոնի ինստիտուտի նկատմամբ: Լայն իմաստով աշխարհիկ է այն պետությունը, որում կրոնական

[161] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի, Եվրախորհրդի մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Կրոնի կամ համոզմունքի ազատության հարցերով խորհրդատվական խորհրդի թիվ 530/2009 համատեղ եզրակացությունը էջ 16: Ստրասբուրգ, 23.06.2009թ. CDL-AD(2009)036: Սկզբնաղբյուրը՝ https://www.e-gov.am/u_files/file/kron/1%20Joint-opinion-AJ.pdf:

կազմակերպությունները իրենց գործունեության ոլորտում առանձնացված են պետական իշխանության մարմիններից և որպես կանոն չեն միջամտում նրանց գործունեությանը, միևնույն ժամանակ այդ կազմակերպությունները ունեն գործունեության ինքնուրույն ոլորտը, որտեղ պետական միջամտությունը որաշակիորեն սահմանափակված է:

Համեմատելով «աշխարհիկ» և «աշխարհիկ պետություն» եզրույթների վերաբերյալ առկա տեսակետներն ու մոտեցումները, հարկ է նկատել, որ եթե «աշխարհիկ» հասկացությունը հակադրվում է «կրոնականին», ապա «աշխարհիկ պետություն» եզրույթը ոչ թե հակադրվում է կրոնին կամ աթեիզմին, այլ հավասարապես չեզոք է նրանց նկատմամբ: Փաստորեն «աշխարհիկ» և «պետություն» հասկացությունների միավորման ընթացքում «աշխարհիկ պետություն» բառակապակցության մեջ տեղի է ունենում «աշխարհիկ» եզրույթի իմաստային փոփոխություն:

Ելնելով այս տրամաբանությունից՝ աշխարհիկ պետությունն անհրաժեշտ է դիտարկել պետության այնպիսի կառուցվածք, որի պարագայում պետական իշխանությունը գտնվում է քաղաքական կազմակերպված հասարակության տիրույթում, և ոչ թե՝ կրոնական կազմակերպությունների ձեռքում: Անշուշտ, աշխարհիկ պետության մեջ կրոնական կազմակերպությունները առավելապես քաղաքացիական հասարակության ինստիտուտներ են, այլ ոչ թե պետական ինստիտուտներ: Այս հանգամանքը, սակայն, չի բացառում կրոնական կազմակերպությունների և պետության հարաբերակցության, նույնիսկ սերտ փոխգործակցության հնարավորությունը՝ պետական և

հասարակական կյանքի որոշակի բնագավառներում: Արձանագրենք նաև, որ կրոնական կազմակերպությունները բացի հանրային ինստիտուտ լինելուց, նաև քաղաքական համակարգի սուբյեկտ են. նրանց անդամները կարող են ներգրավված լինել քաղաքական գործընթացների մեջ այլ քաղաքացիների հետ համահավասար[162]:

Հիմնահարցի քննարկման համատեքստում պարզորոշ կերպով նկատվեց աշխարհիկ պետության հասկացության հիմքում «պետական», «պաշտոնական» և «պարտադիր» կրոնի բացակայության փաստը: Մասնագիտական գրականության մեջ այս արտահայտությունները բավական հաճախ գործածվում են միասնական կերպով՝ ստեղծելով որոշակի հայեցակարգային մոլորություններ: Ընդ որում, «պետական և պաշտոնական կրոն» եզրույթները որպես կանոն նույնանում են և գործածվում են որպես հոմանիշներ, որի վերաբերությամբ որևէ տարամետություն չունենք:

Մեր կարծիքով, պետական կամ պաշտոնական կրոնի հռչակումը հակասության մեջ չի մտնում ինչպես աշխարհիկ պետության հայեցակարգի, այնպես էլ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի հետ: Ներկայումս աշխարհի մի շարք զարգացած, ժողովրդավարական երկրներ գերապատվություն են տվել որևէ կրոնի, այն ճանաչել են պետական կամ պաշտոնական, միևնույն ժամանակ երաշխավորել յուրաքանչյուրի խղճի և դավանանքի ազատության իրավունքը:

Պետական կրոնի էությունն այն է, որ պետությունը իր պաշտպանության տակ է վերցնում

162 Տե՛ս. օրինակ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, (ընդունվել է՝ Ն-0333-1, 17.06.1991թ.: Սկզբնաղբյուրը՝ http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2041&lang=arm):

այդպիսին ճանաչված կրոնը, ցուցաբերում է նյութական օժանդակություն, ազատում է հարկերից, որպես կանոն եկեղեցական ծեսով կատարված ամուսնությունը հավասարեցնում է քաղաքացիական ամուսնության գրանցման հետ և այլն: Կան երկրներ (օրինակ՝ Գերմանիա,Ավստրիա), որոնք ազգային կրոն են հռչակել, սակայն դե ֆակտո վերապահել են պետական կրոնի կարգավիճակ: Ընդ որում, այդ երկրների կողմից քրիստոնեությունը ազգային կամ պետական կրոն ճանաչելը չի խոչընդոտել,որպեսզի վերջիններս դառնան ԵՄ լիիրավ անդամներ:

Հարկ է նաև հիշատակել, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 22 ընդհանուր մեկնաբանությունների շրջանակում պետական կրոնի վերաբերյալ կատարվել է հետևյալ դիտարկումը. «այն փաստը, որ այս կամ այն կրոնն ընդունված է որպես պետական, կամ որ այն հռչակված է որպես պաշտոնական կամ ավանդական, կամ որ դավանողներն ազգաբնակչության մեծամասնությունն են կազմում, չպետք է վնասի ցանկացած իրավունքի իրականացմանը, որոնք ամրագրված են Դաշնագրում, ներառյալ 18 և 27 հոդվածները, չպետք է հանգեցնի խտրականության այլ կրոններ դավանողների, կամ էլ ոչ մի կրոն դավանողների հանդեպ»[163]:

Ավելորդ չենք համարում մեջբերել նաև խղճի ազատության հիմնահարցերի ուսումնասիրությամբ զբաղվող միջազգային ինստիտուտի տնօրեն Լ. Յուզելի մոտեցումը պաշտոնական կրոնի և աշխարհիկ պետության խնդրի դիտարկման հոլովույթում. «Ես չեմ համարում

[163] Տե՛ս CCPR General Comment No. 22: Article 18 (Freedom of Thought, Conscience or Religion) Adopted at the Forty-eighth Session of the Human Rights Committee, on 30 July 1993. Սկզբնաղբյուրը՝ http://www.refworld.org/docid/453883fb22.html:

պետական կրոնի առկայությունը կրոնական ազատության խախտում»[164]:

Այլ է խնդիրը պարտադիր կրոնի ճանաչման դեպքում: Այն բնորոշ է առավելապես աստվածապետություններին և կրոնապետություններին: Գաղափարական բազմակարծությունը աշխարհիկ պետության անքակտելի տարրն է: Հատկանշական է, որ առանձին աշխատանքներում աշխարհիկ պետության հատկանիշների մեջ սահմանվում է միայն պարտադիր կրոնի առկայության բացառումը, իսկ պետական կամ պաշտոնական կրոնի վերաբերյալ հիշատակում չկա[165]: Ակնհայտ է, որ ցանկացած պարտադիր գաղափարախոսություն չի կարող համատեղելի լինել ինչպես խղճի ազատության իրավունքի, այնպես էլ պետության աշխարհիկության սկզբունքի հետ:

Այսպիսով, աշխարհիկ պետության հայեցակարգի սահմանման հիմքում պետական կամ պաշտոնական կրոնի բացակայության տարածված տեսակետը մեր կողմից մերժվում է: Ներկայումս չկա որևէ ծանրակշիռ տեսություն, որը «պետական կրոն» և «աշխարհիկ պետություն» եզրույթները համարի անհամատեղելի: Մեր համոզմամբ, պետական կամ պաշտոնական կրոնի հռչակումը տակավին հիմք չէ պետությունը աշխարհիկ չհամարելու, այլ ելակետային է, թե ինչ չափանիշներով է իրականցվում պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերակցությունը:

---

164 Տե՛ս Интервью Л. Юззелла М. Шевченко, Независимая газета. Религии. 1999. 6 октября. № 19 Սկզբնաղբյուրը՝ http://www.ng.ru/zavisimaya/:

165 Տե՛ս **С.А. Авакьян,** Конституционное право. Энциклопедический словарь.– М.: Изд-во Норм, 2001, էջ` 524-525:

Անընդունելի են աշխարհիկ պետության սահմանման այն մոտեցումները[166], որոնց համաձայն պետությունը իրավունք չունի նյութական օժանդակություն ցույց տալ կրոնական կազմակերպություններին: Կարծում ենք, որ կրոնական կառույցների և պետության առանձնացվածությունը բնավ չի բացառում երկկողմանի համագործակցության հնարավորությունը, որի արդյունքում պետությունը կարող է նաև նյութական աջակցություն ցուցաբերել կրոնական կազմակերպություններին ինչպես, օրինակ դա կատարվում է մի շարք աշխարհիկ պետություններում:

Մեր դիտարկմամբ աշխարհիկ պետության յուրօրինակ արտահայտություն կարող է համարվել աստվածաշնչյան հայտնի միտքը՝ «Աստծունը տվեք Աստծուն, Կեսարինը՝ Կեսարին» (Մատթ. 22:21):

Աշխարհիկ պետության էության ավելի ճշգրիտ սահմանումն անհրաժեշտ է ոչ միայն մտքի, խղճի և կրոնի ազատության ինստիտուտի հետագա զարգացման համար մասնավորապես, այլ նաև ազատության ինստիտուտի՝ ընդհանրապես: Մարդու մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի երաշխիքների իրականացումից է կախված անձի բազմակողմանի զարգացումը՝ գաղափարական բազմակարծության բացակայության պայմաններում:

Այսպիսով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական նոր կարգավորումների տրամաբանությունը և ամբողջացնելով հիմնահարցի քննության

[166]Տե՛ս, օրինակ **М.А. Булавина,** К вопросу о правовом содержании понятия «светское государство» Известия МГТУ «МАМИ» № 2(20), 2014, т. 5, էջ՝ 169:

առնչվող տեսակետներն ու վարկածները, առաջարկվում է աշխարհիկ պետության իրավաընկալման հետևյալ բնորոշումը, որ ընկալվում է որպես **պետական իշխանության կազմակերպման և գործունեության այնպիսի ձև, որտեղ ճանաչվում են հոգևոր (կրոնական) կառույցների և պետական իշխանության մարմինների գործառութային առանձնացվածությունը, սեփական գործունեության տիրույթում ինքնավարության օժտվածությունը՝ միմյանց հետ հանրային խնդիրների լուծման նպատակով օրենքով սահմանված կարգով փոխգործակցության հնարավորությամբ, ինչպես նաև երաշխավորվում է յուրաքանչյուրի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, պետական ապարատի և կրթական համակարգի աշխարհիկության սկզբունքը, պարտադիր աշխարհայացքի (գաղափարախոսության), իրավունքի աղբյուրներում կրոնական կանոնների և դոգմաների ներառման, հոգևոր (կրոնական) կառույցներին պետական գործառույթների պատվիրակման, հոգևոր գործիչների պետական կառավարման մասնակցության անթույլատրելիությունը:**

Անհրաժեշտ է հստակեցնել, որ պետության և եկեղեցու անջատ լինելու հանգամանքը «աշխարհիկ պետություն» եզրույթի սահմանման համատեքստում, դիտարկվում է ոչ թե բառի ուղղակի իմաստով՝ որպես նրանց միջև կառուցակարգային (ինստիտուցիոնալ) տարանջատում, (որն ի դեպ շատ հաճախ ընդունված է մեկնաբանել) այլ առավելապես ընկալվում է որպես պետության և կրոնական կառույցների միջև գործառույթների և գործելակերպի սահմանազատում: Կարծում ենք, որ աշխարհիկ և հոգևոր (կրոնական) կառույցների

տարանջատման սկզբունքի մեկնաբանման նման մոտեցումը խթանիչ նախադրյալ կարող է հանդիսանալ երկու ոլորտների փոխգործակցության և հանրային նշանակության խնդիրները համատեղ լուծելու նպատակով միասնական առաջելության որդեգրման, այլ ոչ թե երկկողմանի բացառման:

Ասվածի համատեքստում աշխարհիկ պետության վերաբերյալ կարելի է առանձնացնել հետևյալ էական հատկանիշները՝ ա) պետական իշխանության մարմինների և հոգևոր (կրոնական) կազմակերպությունների գործառութային (ֆունկցիոնալ) բաժանումը, բ) պետական իշխանության մարմինների և հոգևոր (կրոնական) կառույցների փոխգործակցության հնարավորությունը, գ) պետության իրավական հիմքի փոխարինման անթույլատրելիությունը որևէ կրոնական ուսմունքով և նրա դոգմաներով, դ) նորմատիվ իրավական ակտերում մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի ամրագրումը, ե) հոգևոր (կրոնական) կառույցներին պետական իշխանության գործառույթներ վերապահելու անթույլատրելիությունը, զ) հոգևոր գործիչների պետական կառավարման մասնակցության արգելքը:

Աշխարհիկ պետության վերոնշյալ հատկանիշներից զատ, անհրաժեշտ է նաև հիշատակել պետական ծառայության աշխարհիկությունը, պետական կրթության աշխարհիկ բնույթը (հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում կրոնական քարոզչության ծավալման, կրոնական կրթության խտրականության արգելքը), բարձրագույն պաշտոնատար անձանց գործողություններում կրոնական քարոզչության բացակայությունը:

**Միաժամանակ հարկ է նաև նկատել, որ պետությունից կրոնական կազմակերպությունների անջատ լինելու սահմանադրական հատկանիշի էությունը պետք է բնութագրել հետևյալ երեք պայմանի առկայությամբ՝ 1) պետությունը չի վերահսկում քաղաքացիների վերաբերմունքը ինչպես կրոնի այնպես էլ դրա բացակայության հանդեպ, 2) պետությունը միջամտում է կրոնական կազմակերպությունների ներքին գործունեությանը միայն նրանց կողմից օրենքը խախտելու դեպքում, 3) կրոնական միավորումները չեն ազդում պետական մարմինների որոշումների վրա:**

Այսպիսով, աշխարհիկ պետության գործունեությունը պետք է ուղղված լինի համապատասխան պայմանների կազմակերպմանը, որոնց իրականացման ժամանակ պահպանվում են մարդու իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև պետության և կրոնական կազմակերպությունների շահերի հավասարակշռությունը՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Պետություն-կրոնական կառույցներ փոխհարաբերությունների ոլորտում շահերի հավասարակշռության տակ հարկ է հասկանալ անհատի, պետության, կրոնական կազմակերպությունների կարիքների և առաջնահերթությունների, իրավունքների և պարտականությունների օրինական, օպտիմալ և ռացիոնալ հարաբերակցությունը:

Բայց, չնայած պետական և կրոնական կազմակերպությունների որոշակի առանձնացվածության, այնուամենայնիվ պետությունը իրեն իրավունք է վերապահում բացառիկ դեպքերում միջամտելու այդ կազմակերպությունների գործունեությանը:

Միջամտությունը պետք է իրականացվի միայն այն մասով ու չափով, որքանով դա հարկավոր է անձի, կրոնական կազմակերպության օրինական գործունեության, պետական ինքնիշխանության, իրավունքների և ազատությունների պաշտպանության, պետության և հասարակության անվտանգության երաշխավորման համար:

Անհրաժեշտ է հավելել նաև, որ արդի բազմաթիվ երկներում պետության աշխարհիկության սկզբունքը ներդաշնակեցվում է որևէ կրոնի նկատմամբ դրսևորած նախապատվելի մոտեցման հետ: Միաժամանակ, ասվածի համատեքստում անհրաժեշտ է նկատել, որ արտասահմանյան մի շարք երկրներում պատմականորեն ավանդական համարվող կրոնական կառույցներն ունեն ազգային եկեղեցու կարգավիճակ, ինչը, սակայն համոզիչ փաստարկ չէ պնդելու, որ այդ պետությունները աշխարհիկ չեն:

Նույն տրամաբանության համատեքստում և Յայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու օրինակով, անհրաժեշտ է ընդգծել, որ պետության աշխարհիկության սկզբունքից շեղում չի կարող դիտարկվել պետության կողմից որևէ դավանաբանական ուղղության հարող կազմակերպությանը որոշակի արտոնությունների շնորհումը կամ Սահմանադրությամբ առանձնահատուկ կարգավիճակի վերապահումը:

## 2.2. Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական կարգավորումները աշխարհիկ պետության սկզբունքի իրականացման համատեքստում

Աշխարհիկ պետության սկզբունքի իրականացման ոլորտում ազգային

օրենսդրությունը բազմազան է և առնչվում է հասարակական կենսագործունեության տարբեր բնագավառների հետ: Պետության և կրոնական կառույցների փոխհարաբերությունները բնութագրող սահմանադրաիրավական նորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ փոխհարաբերությունները կարգավորվում են ոչ միայն սահմանադրական իրավունքի, այլև միջազգային իրավունքի նորմերով,որոնք այս կամ այն կերպ առնչվում են աշխարհիկ պետության սկզբունքի իրականացման հետ: Անշուշտ, հայ իրավական համակարգում աշխարհիկ պետության որակական բնութագրիչները ամրագրող սահմանադրական նորմերի իրացման պրակտիկան բացահայտում է այնպիսի հիմնախնդիրներ, որոնք առնչվում են նաև մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրականացման հետ:

Նախքան Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավակարգավորումներին անդրադառնալը՝ հարկ ենք համարում հստակեցնել մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի հասկացությունը, որպես աշխարհիկ պետության գաղափարի անկյունաքար:

Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը բարդ և բազմիմաստ հասկացությունների համակարգ է և տարաբովանդակ մեկնաբանությունների առիթ է հանդիսացել: Ընդ որում «ազատություն», «միտք», «դավանանք» և «խիղճ» հասկացությունները դիտարկվել են որպես սերտորեն փոխկապակցված և երկուստեք պայմանավորված[167]: Տվյալ համադրության մեջ,

[167]Տե՛ս **Վ.Հ. Սայադյան**, Կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները

«ազատություն» հասկացությունը հանդիսանում է որպես հիմնական տարր ոչ միայն դավանած կրոնի ընտրության, այլև առհասարակ կրոնական պատկերացումների բացակայության դեպքում:

Որպես փիլիսոփայական ու իրավական երևույթ, առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես խղճի ազատությունը: Սահմանադրական իրավունքում խղճի ազատությունը սովորաբար ընկալվում է մարդու վերաբերմունքը կրոնի ինստիտուտին, քանի որ այն հնարավորություն է տալիս մարդուն ունենալու համոզմունքներ, այդ թվում կրոնի վերաբերյալ: Այնուամենայնիվ, խղճի ազատությունը չի կարելի մեկնաբանել որպես ընտրություն աշխարհի կրոնական համայնապատկերի և աթեիստական դիրքորոշման միջև:

ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասով հռչակվում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Սահմանադրական այս իրավունքը համակարգային առումով ներառում է՝ ինչպես մտքի ազատության, այնուհետև՝ խղճի ազատության, այնպես էլ կրոնի ազատության իրավունքները: Սակայն, բովանդակային առումով մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը (հոդվ. 41, մաս 1, 2-րդ նախադասություն):

---

Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն, ԺԲ.00.02, Եր., 2015թ., էջ՝ 13:

Ելնելով այն ձևաչափից, որ «միտքը», «խիղճը», «կրոնը» առանձին հասկացություններ են, ուստի ենթադրվում է, որ դրանցից յուրաքանչյուրը ունի սեփական իրավական բովանդակությունը:

Այսպես, եթե մարդը սկզբում իրացնում է մտքի ազատությունը, որպես ի բնե տրված անօտարելի իրավունք, ապա խղճի ազատությունը՝ կրոնական, աթեիստական կամ ցանկացած այլ աշխարհայացք ընդունելով կամ չընդունելով, որից հետո միայն հաջորդում է կրոնի ընտրությունը: Հետևաբար, մտքի ազատությունը իր տրամաբանական բովանդակությամբ ավելի լայն է խղճի ազատության, վերջինս էլ կրոնի ազատության հասկացությունից: Խղճի ազատությունը իրենից ներկայացնում համոզմունքներ ունենալու, դրանք փոխելու կամ առհասարակ որևէ համոզմունք չունենալու իրավունք: Ընդ որում, պարտադիր չէ, որ այդ համոզմունքները լինեն միայն կրոնական, դրանք կարող են լինել նաև քաղաքական, մշակութային, բարոյական և այլն: Տվյալ հետազոտության համատեքստում խղճի ազատությունը նշանակում է ունենալ կրոնական կամ հակակրոնական հայացքներ փոխել դրանք կամ չունենալ առհասարակ: Կրոնի ազատությունը իրենից ներկայացնում է իրավունք՝ դավանելու կրոն, կատարելու պաշտամունքային ծիսակատարություններ, հետևելու կրոնական կարգադրագրերին, բացահայտորեն տեղեկացնելու այլոց սեփական կրոնական համոզմունքների կամ որևէ դավանաքի պատկանելության մասին:

Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը երաշխավորում է յուրաքանչյուրի ներքին

ազատությունը (forum internum)[168] ունենալու մտքեր և համոզմունքներ կամ փոխել դրանք: Ներքին ազատությունը ոչ մի դեպքում չի կարող սահմանափակվել:

1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը չէր երաշխավորում դավանափոխության (proselytism) իրավունքը: 2005 թվականի փոփոխություններով սահմանադիրը շտկեց Սահմանադրությունում այս բացը և 26-րդ հոդվածում ամրագրեց այն:

Այնուհետև, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով ընդլայնվեց խղճի և կրոնի ազատության իրավունքի սահմանները, ամրագրելով՝ «...կրոնը, դավանանքը կամ համոզմունքը փոխելու ազատությունը...»[169], մինչդեռ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ գործող օրենքով չի նախատեսվում նման հնարավորություն, այն միայն երաշխավորում է ցանկացած կրոն դավանելու կամ չդավանելու քաղաքացու իրավունքը:

Հավելենք նաև, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի արժեքանական նշանակությունը կայանում է ոչ միայն սեփական գիտակցության մեջ այն կրելու, այլ նաև ազատորեն և հրապարակավ արտահայտելու մեջ: Կրոնական կամ ոչ կրոնական համոզմունքների արտահայտումը՝

---

[168]Տե՛ս **M. Todd Parker**, The Freedom to Manifest Religious Belief: An Analysis of the Necessity Clauses of the ICCPR and the ECHR, 17 Duke Journal of Comparative & International Law, vol. 17, iss.1, էջ 93-95:

[169]Տե՛ս «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 4-րդ, 4-րդ կետ:

որպես անհատի արտաքին ազատություն (forum externum) իր արտացոլումն է գտել ներպետական իրավունքում:

ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը վերապահվում է յուրաքանչյուրին: Ընդ որում, «յուրաքանչյուր ոք» եզրույթն իր մեջ ներառում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, այլև օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք օրինական հիմունքներով գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում: Իսկ «այլոց հետ» կրոն դավանելու իրավունքը ենթադրում է հնարավորություն՝ ստեղծելու կրոնական միավորումներ: Յուրաքանչյուրի միավորվելու իրավունքը ընդհանուր ձևով երաշխավորված է նաև Սահմանադրության 45-րդ հոդվածում, իսկ 44-րդ հոդվածում արտացոլված է նաև յուրաքանչյուրի հավաքների ազատության իրավունքը: Ընդհանրապես մտքի խղճի և կրոնի ազատության իրավունքը չպետք է մեկուսացված դիտարկել այնպիսի հիմնարար իրավունքներից, ինչպիսին է հոգեկան անձեռնմխելիության (հոդ.՝ 25) անձնական ազատության (հոդ.՝ 26), օրենքի առջև բոլորի հավասարության (հոդ.՝ 28), հաղորդակցության ազատության (հոդ.՝ 33) կարծիքի արտահայտման (հոդ.՝ 42) ազգային և էթնիկ ինքնության պահպանման (հոդ.՝ 56):

Սահմանադրական հիշատակված նորմերի համակարգային վերլուծությունից անհրաժեշտ է ընդգծել հետևյալը.

Ա. Յուրաքանչյուրի մտքի ազատությունը առաջին հերթին ուղղված է հենց մարդու մտքի՝ որպես մտածողության արդյունքի միջոցով շրջակա աշխարհը ճանաչելու և այդ աշխարհում իր

պատկերացումները, հայացքները, կարծիքները, համոզմունքներն ազատ արտահայտելու հետ: Սակայն, գիտական հետազոտության առարկայի շրջանակում անհրաժեշտ է կարևորել այն, որ սեփական գիտակցության մտքի ազատությունը բնութագրում է հենց մարդու հոգևոր ազատությունը՝ կազմելով նրա հոգևոր կյանքի հիմքը: Անշուշտ, այդ ազատությունը ենթադրում է ազատամտության, այլախոհության և ազատախոհության հնարավորություն և դրանով իսկ երաշխավորում է ոչ միայն բարոյականության, իրավունքի, այլև կրոնի վերաբերյալ ազատ արտահայտվելու վերաբերյալ մարդու իրավունքը:

Բացի այդ, մտքի ազատության սահմանադրական ամրագրումը՝ յուրաքանչյուրի կարծիքն ազատ արտահայտվելու իրավունքի համատեքստում, նույնպես յուրաքանչյուրին երաշխավորում է սեփական կարծիքի ու համոզմունքի ձևավորման ազատություն՝ առանց պետության միջամտության, անձի նկատմամբ ցանկացած գաղափարախոսական բռնության[170]:

Բ. Խղճի ազատությունը պայմանավորված է կրոնի հետ մարդու առնչությամբ, ինչպես նաև խղճի և այս կամ այն կրոնի դավանությունների միջև նրա բարոյական և իրավական ընտրության հնարավորությամբ: Ընդ որում, այդ ազատությունն առաջին հերթին դրսևորվում է Աստծո հանդեպ համոզմունքի ազատության իրականացման միջոցով, սակայն, այն չի կարելի ընկալել բացառապես կրոնի և աթեիզմի միջև ընտրության ազատություն: Աշխարհիկ պետության սահմանադրական սկզբունքի իրականացման

---

[170] Տե՛ս **Վ.Ն. Այվազյան**, Սահմանադրության 26-րդ հոդվածի մեկնաբանություններ // ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, էջ՝ 298-299:

համատեքստում խղճի ազատությունը դրսևորվում է մարդու համոզմունքների բազմազանության և կրոնական համոզմունքների հիման վրա որևէ ձևով անհանդուրժողականության ու խտրականության երևույթներից իրավական միջոցներով պաշտպանվելու հնարավորությամբ:

Գ.Կրոնի ազատությունը՝ որպես ինքնուրույն կատեգորիա, յուրօրինակ իրավաբանական բովանդակություն է ձեռք բերում խղճի ազատության հետ մեկ միասնական ամբողջության միջոցով, և ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը (հոդվ. 41, մաս 1, 2-րդ նախադասություն):

Իսկ աշխարհիկ պետության սահմանադրական սկզբունքի իրացման համատեքստում՝ ինչպես պետության և կրոնական կազմակերպությունների, այնպես էլ մարդու և կրոնի միջև հարաբերակցության հիմքում կրոնի ազատությունն ուղղված է՝ կրոնի տեսակի ազատ ընտրության իրավունքի և կրոնի տեսակը փոխելու ազատության իրականացմանը, ընդ որում, ոչ ոք չի կարող հարկադրված լինել կրոնի ընտրության կամ կրոնը փոխելու խնդրում:

Միաժամանակ մտքի, խղճի և կրոնի ազատության իրականացման հիմքում առկա օրենսդրական կարգավորումները համակարգային առումով փոխկապակցված են միջազգային իրավական նորմերի հետ: Մասնավորապես, խոսքը վերաբերում՝ ՄԱԿ-ի 1948 թվականի Մարդու

իրավունքների համընդհանուր հռչակագրին, ՄԱԿ-ի 1966 թվականի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին, ՄԱԿ-ի 1981 թվականի Կրոնի կամ համոզմունքի վրա հիմնված անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ հռչակագրին, Եվրոպայի Խորհրդի 1950 թվականի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության 1975 թվականի Հելսինկյան եզրափակիչ ակտին, նույն կազմակերպության 1990 թվականի Մարդկային չափանիշի խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթին և այլն:

Անշուշտ, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների, ներառյալ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի պաշտպանության գործում հիմնարար նշանակություն ունի ՄԱԿ-ի 1945 թվականի կանոնադրությունը, որի 55-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ ՄԱԿ-ը նպաստում է «բոլորի հանդեպ բոլորի համար մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների համընդհանուր հարգանքին և պահպանմանը՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ դավանանքից»[171]:

Միաժամանակ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածը հռչակում է, որ «յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու հավատի ազատության իրավունք, այդ իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը, իր հավատը և համոզմունքը ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ մեկտեղ դավանելու, հրապարակավ

---

[171]Տե՛ս ՄԱԿ-ի Կանոնադրություն, ընդունվել է 1945 թվականին: Սկզբնաղբյուրը՝ http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter_arm.pdf:

կամ մասնավոր կարգով ուսմունք քարոզելու, ծիսակատարություն, կրոնական պաշտամունք և արարողություններ կատարելու ազատություն»[172]:

Մարդու իրավունքների և մասնավորապես՝ մտքի խղճի և կրոնի ազատության իրավունքի վերաբերյալ քննարկվող մյուս կարևոր միջազգային փաստաթուղթը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան է, որի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա,այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն»[173]:

Որպես մտքի, խղճի և կրոնի ազատության երաշխիք՝ անհրաժեշտ է կարևորել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, որի 18-րդ հոդվածի առաջին կետով հռչակվում է,որ.«յուրաքանչյուր մարդ ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ միատեղ, հրապարակավ կամ մասնավոր կարգով իր կրոնն ու համոզմունքները դավանելու ազատությունը,

---

[172]Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն: Սկզբնաղբյուրը՝ http://www.ohchr.org/EN/UDHR/Documents/UDHR_Translations/arm.pdf:

[173]Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ.367:

պաշտամունքի իրականացման, կրոնական ու ծիսական արարողությունների և վարդապետությունների իրականացման ազատությունը»[174]: Այս իրավական դրույթները անքակտելիորեն կապված են նշված դաշնագրով հաստատված այլ դրույթների հետ՝ մասնավորապես կարծիքի ազատարտահայտման (հոդ.՝ 19), օրենքի առջև բոլոր մարդկանց հավասարության, (հոդ.՝ 26) կրոնական ատելության օգտին որևէ ելույթ արգելելու (հոդ.՝ 20) և այլ իրավունքների և ազատությունների:

Մտքի, խղճի, կրոնի ազատության վերաբերյալ կարևոր կարգավորում է բովանդակում ՄԱԿ-ի Կրոնի կամ համոզմունքի վրա հիմնված անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ հռչակագիրը, որի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է ցանկացած կրոն կամ համոզմունք ունենալու, ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ հրապարակավ կամ մասնավոր կարգով պաշտամունքի կատարման, կրոնական և ծիսական արարողությունների և ուսմունքի իրականացման ազատություն»[175]:

Այս խնդրին կարևոր բովանդակություն է հաղորդել նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը: Մասնավորապես այդ կազմակերպության Հելսինկյան եզրափակիչ ակտի 1-ին գլխի 7-րդ կետը

[174]Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդվ.՝ 18-րդ: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1997.12.25/29:
[175]Տե՛ս ՄԱԿ-ի «Կրոնի կամ համոզմունքի վրա հիմնված անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ հռչակագիրը» A/RES/36/55 25.11.1981. Սկզբնաղբյուրը՝ http://www.un.org/documents/ga/res/36/a36r055.htm:

սահմանում է, որ. «մասնակից պետությունները կհարգեն մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ ներառյալ մտքի, խղճի, կրոնի կամ դավանանքի ազատությունը բոլորի համար՝ անկախ ռասայի, սեռի, լեզվի կամ կրոնի տարբերության»[176]: Իսկ նույն կազմակերպության կողմից ընդունված Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթղթի 11-րդ կետով սահմանվել է, որ մասնակից պետությունները հաստատում են, որ պետք է հարգեն մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, այդ թվում բոլոր մարդկանց մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքի, անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ կրոնական պատկանելությունից[177]:

Ինչ վերաբերում է Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի Կոպենհագենի խորհրդակցության ժամանակ ընդունված Մարդկային չափանիշների վերաբերյալ փաստաթղթին, ապա անհրաժեշտ է կարևորել այն դիտարկումը, ըստ որի՝ «Յուրաքանչյուր մարդ ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և իր կրոնը կամ հավատը ինչպես անհատապես, այնպես էլ ուրիշների հետ համատեղ, հրապարակայնորեն կամ մասնավոր կերպով դավանելու ազատությունը՝ կրոնական և ծիսական արարողություններ սովորելու և կատարելու միջոցով: Այս իրավունքների իրականացումը ենթակա է սոսկ

---

[176]Տե՛ս Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողով, Եզրափակիչ ակտ, Հելսինկի, Եր., 2005թ.: Սկզբնաղբյուրը՝ http://www.osce.org/hy/mc/39507?download=true:

[177]Տե՛ս Եվրոպայում անվտանգության և համագործակցության կոնֆերանսի մասնակից պետությունների ներկայացուցիչների Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթուղթը: Սկզբնաղբյուրը՝ http://www.osce.org/ru/mc/40885?download=true:

այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և համապատասխանում են միջազգային ստանդարտներին» (կետ՝ 9.4)[178]:

Միջազգային իրավական ակտերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ աշխարհիկ պետության համատեքստում մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը և դրա իրացումը՝ որպես մարդկության քաղաքակրթական առաջընթացի կարևորագույն նվաճում, ժողովրդավարացման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման տեսանկյունից անհրաժեշտ առաջնահերթություն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ իրավունք չէ և առանձին դեպքերում այն կարող է սահմանափակվել:

Այսպես, նույն ՄԱԿ-ի կողմից ընդունված Դաշնագրի 18-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվում է՝ «կրոնին կամ համոզմունքներին դավանելու ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված և հասարակական անվտանգության, կարգուկանոնի, առողջության ու բարոյականության, ինչպես և այլ անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների»[179]:

Իսկ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ «սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի

[178] Տե՛ս ԵԱՀԽ Մարդկային չափանիշների խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթ, 29.06.1990թ.: Սկզբնաղբյուր՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18537:

[179] Տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, հոդված 18-րդ, կետ 3-րդ:

պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների»[180]: Նույնիսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշման մեջ ընդգծել է՝ եվրոպական կոնվենցիայով կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ազգային անվտանգության հիմքով սահմանափակելու անթույլատրելիությունը[181]: Հատկանշական է, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը որևէ կերպ չի սահմանափակում մարդու մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունը՝ առաջնորդվելով Կոնվենցիայի հիմնարար դրույթներով, 2005թ. Սահմանադրության մեջ ամրագրեց այս իրավունքի արտահայտման սահմանափակման նույն հիմքերը՝ բացառությամբ «հասարակական կարգի», իսկ 2015թ. բարեփոխված Սահմանադրությունը սահմանափակման հիմքերի մեջ ներառեց «պետական անվտանգություն» հասկացությունը, որը արտացոլվեց նաև Նախագծում[182]: Սահմանադրության 41-րդ հոդվածի երկրորդ կետը սահմանում է. «Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց

---

[180] Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 9.1, մաս երկրորդ: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.06.05/17(192)Հոդ.367:

[181] Տե՛ս Case of **Nolan and K.v. Russia,** թիվ 2512/04, Ստրասբուրգ, 12.02.2009թ.: Սկզբնաղբյուրը՝ http://legislationline.org/documents/action/popup/id/15785:

[182] Տե՛ս «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, հոդված 5-րդ, 1-ին կետ:

հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»: Այստեղ ուշագրավ է այն փաստը, որ սահմանափակման ենթակա է միայն մտքի, խղճի, կրոնի արտահայտումը, դրա քարոզը կամ տարածումը, իսկ որպես «forum internum»՝ այն բացարձակ է և անձեռնմխելի, քանի որ ոչ ոք չի կարող վերահսկել մարդու միտքը, համոզմունքները կամ հավատը, քանի դեռ դրանք չեն արտահայտվել այս կամ այն կերպ:

Կարծում ենք, որ Սահմանադրության մեջ ավելացված «պետական անվտանգություն» եզրույթը միանգամայն իրավաչափ է և արդարացի: Հայաստանի Հանրապետության նման արտաքին անբարենպաստ պայմաններում գտնվող և երկու հարևան երկրների հետ թշնամական հարաբերություններ ունեցող երկրում կրոնական համոզմունքների հիմքով զինծառայությունից խուսափելը ի՞նչ է, եթե ոչ պետական անվտանգության սպառնալիք: Նախագծի շրջանակներում սույն եզրույթի կիրառումը ունի որոշակի վերապահումներ, այն իմաստով, որ հակասության մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերի հետ: Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների դրույթների միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը[183]: Չնայած որ ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերում՝ որպես մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի արտահայտման սահմանափակման հիմք, չի նշվում «պետական

[183]Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունվել է 06.12.2015թ.: Սկզբնաղբյուրը՝ http://www.president.am/hy/constitution-2015/:

անվտանգություն» եզրույթը, այնդուհանդերձ սույն իրավունքի իրացման հետ անքակտելի իորեն կապված հարակից իրավունքներում այն հստակ ամրագրված է: Այսպես, Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված արտահայտվելու ազատության իրավունքը «կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»[184]:

Նույն կերպ՝ ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 19-րդ հոդվածով նախատեսված է, որ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը կարող է սահմանափակվել՝ «...բ) պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար»[185]: «Պետական անվտանգությունը»՝ որպես կրոնի կամ հավատի դավանության սահմանափակման հիմք

---

[184] Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 10.1, երկրորդ կետ: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ.367:

[185] Տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, հոդված 19-րդ, երրորդ կետ: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1997.12.25/29:

հիշատակվում է նաև ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայում[186]: Այսինքն՝ ինչպես նկատում ենք, սույն խնդրի դիտարկման վերաբերությամբ միջազգային իրավունքում կա երկակի մոտեցում, քանի որ, եթե կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքը կարող է սահմանափակվել պետական անվտանգության հիմքով, ապա մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի արտահայտումը՝ որպես «կարծիքի» կամ առհասարակ «արտահայտվելու ազատության» մի դրսևորում, նույնպես կարող է վերոնշյալ հիմքով ենթարկվել սահմանափակման:

Խղճի և դավանաքի ազատության ինստիտուտի անշեղ իրացումը պահանջում է հավասարության և խտրականության բացառում: Հռչակագրի 2-րդ հոդվածով սահմանվում է. «Յուրաքանչյուր մարդ պետք է ունենա սույն Հռչակագրում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատությունները առանց որևէ տարբերության, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից...»: Հռչակագրի 7-րդ հոդվածը սահմանում է, որ «օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են...»[187]: Եվրոպական կոնվենցիան 14.1 հոդվածում ամրագրում է. «Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից մաշկի գույնից, լեզվից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից

[186] Տե՛ս ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 14-րդ հոդվածի 3-րդ կետը, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1989թ. նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով: Սկզբնաղբյուրը՝ ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում:
[187] Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր: Սկզբնաղբյուրը՝ http://www.ohchr.org/EN/UDHR/Documents/UDHR_Translations/arm.pdf:

կամ այլ դրությունից»[188]: Իսկ Դաշնագրի 26-րդ հոդվածի համաձայն. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ, և առանց որևէ խտրականության, ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք. այդ առնչությամբ որևէ կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից, ըստ որևէ հատկանիշի, այն՝ ըստ ռասայի,մաշկի գույնի,սեռի,լեզվի,կրոնի...»[189]:

Օրենքի առջև բոլորի հավասարությունը, ինչպես նաև խտրականության արգելքի սկզբունքը առկա է ՀՀ ներպետական իրավունքում: Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրվում է. «Խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից,գենետիկական հատկանիշներից,լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է [190]: Սա ուղղակիորեն բխում է օրենքի առաջ բոլոր մարդկանց հավասարության սկզբունքից, առանց տարբերակում մտցնելու քաղաքացիների և ոչ քաղաքացիների միջև:

Օրենքի առաջ բոլոր մարդկանց հավասարության սկզբունքը դառնում է

---

[188] Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.06.05/17(192)Հոդ.367:

[189] Տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, հոդվ.՝ 19-րդ կետ՝ 2-րդ: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1997.12.25/29:

[190] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով) ընդունվել է 06.12.2015թ.: Սկզբնաղբյուրը՝ http://www.president.am/hy/constitution-2015/:

խտրականության ցանկացած դրսևորման վերացման պահանջ՝ հետևաբար այս երկու հիմնարար սկզբունքները անմիջականորեն կապված են միմյանց հետ և բխում են մեկը մյուսից: Անշուշտ, հիշյալ սկզբունքներից շեղում չի կարելի համարել, երբ գործադրվում է դրական (պոզիտիվ) խտրականության սկզբունքը, որի նպատակն է որոշակի խմբերի և կատեգորիայի անձանց համար սահմանել առանձին արտոնություններ և առավելություններ[191]:

**Այսպիսով, ընդհանրացնելով աշխարհիկ պետության սկզբունքի իրացման ու մարդու և քաղաքացու մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրականացման սահմանադրաիրավական ու միջազգային իրավական կարգավորումների վերլուծության արդյունքները, կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումները.**

**1. Պետության աշխարհիկության սկզբունքն ինքնին հանդիսանում է մարդու և քաղաքացու մտքի, խղճի և կրոնի ազատության իրացման կարևոր երաշխիք, քանի որ միայն աշխարհիկ պետության պայմաններում է մարդուն տրամադրվում խղճի ու դավանանքի ազատության հնարավորություն՝ առանց խտրականության, այդ թվում կրոնական բնույթի որևէ դրսևորումների:**

**2. Բոլոր դեպքերում միջազգային իրավական ակտերով ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատության վերաբերյալ իրավակարգավորումները բովանդակային առումով կարող է չհամընկնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով ամրագրված մարդու մտքի,խղճի**

---

[191] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ՝ ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Գ. Հարությունյանի, Ա.Գ.Վաղարշյանի**, Եր.,, 2010թ., էջ՝ 174:

**և կրոնի ազատության իրավունքի իրավական բնորոշման հետ, սակայն, աշխարհիկ պետության սկզբունքի իրացման համատեքստում այդ հասկացությունները օժտվում են իրավական միևնույն նշանակությամբ և բնույթով:**

### 2.3. Կրթության աշխարհիկության հիմնախնդիրները և նշանակությունը Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սկզբունքի իրականացման համատեքստում

Աշխարհաքաղաքական իրադարձությունների կիզակետում կրոնի ունեցած ազդեցության և դրա սահմանների ընդլայնման մարտահրավերներով պայմանավորված՝ կրոնի ինստիտուտը առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է գտնվում պետության և հասարակության հետ ունեցած փոխհարաբերությունների առանցքում: Մարդկային գիտակցության, դաստիարակության և աշխարհայացքի ձևավորման վրա կրոնի ազդեցությունը, նախ և առաջ, սկսվում է կրոնական կրթությունից: Վերջինիս կենսագործումը և դրանով պայմանավորված խնդիրները կարևորվում են հատկապես աշխարհիկ պետություններում, որտեղ կրոնական քարոզչությունից և պարտադրանքից զերծ կրթությունը դառնում է անհատի աշխարհայացքի ազատ ընտրության և իրացման հուսալի երաշխիքներից:

Անշուշտ, կրթության աշխարհիկության սկզբունքը՝ որպես աշխարհիկ պետության հայեցակարգի կարևորագույն բաղադրիչ, փոխկապակցված է կրոնական կրթության հետ: Այդ փոխկապակցվածության հիմքում ամրագրված է այն գաղափարը, որ կրթության աշխարհիկությունը և կրոնական կրթությունը ոչ թե հակադիր բևեռներ են, այլ միմյանց փոխլրացնող և փոխպայմանավորող

գործոններ: Այդուհանդերձ, հիշյալ հասկացությունները դառնում են անհամատեղելի, երբ հանրակրթական միջավայրում դասավանդման հիմքում դրվում են որևէ կրոնի դավանաբանության դոկտրինացման կամ գերապատվության սկզբունքը:

Հայաստանի Հանրապետությունը լինելով աշխարհիկ պետություն, ևս առանձնահատուկ կարևորություն է տալիս կրթության աշխարհիկությանը՝ ամրագրելով այն խնդրո առարկա ոլորտը կարգավորող իրավական ակտերում:

Կրթության աշխարհիկության սկզբունքի ամրագրման և կենսագործման համատեքստում հարկ է հակիրճ դիտարկել որոշ երկրների փորձը, այնուհետև, անդրադարձ կատարելով ոլորտի հայրենական իրավակարգավորումներին:

Այսպես, արտասահմանյան պետությունների ուսումնական հաստատություններում կրոնական ուղղվածության առարկայի դասավանդման հարցը լուծվում է տարբեր կերպ,ինչը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. այսպես, մի շարք պետությունների հանրակրթական դպրոցներում դասավանդվում է կրոնական ուղղվածության առարկա, բայց առանձին պետությունների հանրային դպրոցներում կրոնական առարկայի դասավանդումն ուղղակի արգելված է: Օրինակ, նման արգելք սահմանվել է Չինաստանում, Ճապոնիայում,ԱՄՆ-ում և այլ երկրներում:

Միաժամանակ, կան երկրներ, որտեղ կրոնական կրթությունը պարտադիր կրթական ծրագրերի շրջանակում ներառված է հանրակրթական հիմնական ծրագրերում, մասնավորապես, խոսքը Գերմանիայի, Թուրքիայի, Ավստրիայի և Կիպրոսի մասին է: Անշուշտ, կան նաև երկրներ, որտեղ

կրոնական կրթությունը ֆակուլտատիվ բնույթ է կրում (օրինակ, Ռուսաստանը, Վրաստանը, Իտալիան): Իսկ, Հունգարիայում, Իտալիայում, Լատվիայում և Լիտվայում պետական իրավասու մարմինները՝ կրոնական կրթության իրականացման առանձնահատկությունների մասով, կրոնական կազմակերպությունների հետ համատեղ որոշում են ընդունում[192]:

Ասվածի համատեքստում, առանձին երկրների կրթության աշխարհիկության ոլորտը կարգավորող օրենսդրության համեմատական վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է ներկայացնել հետևյալ նկատառումները.

Այսպես, Բելգիայի Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն. «Պետական իշխանությունների կողմից կազմակերպված դպրոցները մինչև պարտադիր դպրոցական ուսուցման ավարտը ընտրության հնարավորություն են սահմանում ճանաչված կրոններից որևէ մեկի և ոչ կրոնադավանական բարոյականության դասավանդման միջև»[193]:

Գերմանիայում, ինչպես արդեն նշվեց, դպրոցներում կրոնական ուսուցումը պարտադիր է: Ըստ որում, Հիմնական օրենքի 7-րդ հոդվածը ամրագրել է, որ. «Կրոնական ուսուցումը հանրային դպրոցներում, բացառությամբ ոչ կրոնադավանական դպրոցների, պարտադիր առարկա է: Առանց պետության հսկողության իրավունքին վնաս պատճառելու, կրոնական ուսուցումն իրականացվում է կրոնական համայնքների սկզբունքներին համապատասխան: Ոչ մի ուսուցիչ չի կարող պարտավորված լինել իր կամքին հակառակ

---

192 Տե՛ս **Е.А. Степанова,** Религия и образование в Европе: дебаты о взаимной совместимости «Известия Уральского федерального университета». Серия 1: «Проблемы образования, науки и культуры» 2011, էջ՝ 6-15:

193 Տե՛ս Конституция Бельгии, 17.02.1994 года. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=157:

իրականացնելու կրոնական ուսուցում»[194]: Ուշագրավ է սակայն, որ գերմանական որոշ Յողերում սահմանված է կրոնական առարկա ընտրելու հնարավորություն: Մասնավորապես, Բեռլինի հանրակրթական դպրոցներում կրոնական առարկայի ուսուցումը կրում է ֆակուլտատիվ բնույթ, իսկ 2006 թվականից դասավանդվող «Բարոյագիտություն»առարկան՝ արդեն համարվում է պարտադիր:

Այնուհետև,աշխարհիկ պետություն համարվող Ղազախստանը նույնպես ճանաչում է կրթության աշխարհիկության սկզբունքը: Այսպես,«Կրոնական գործունեության և կրոնական կազմակերպությունների մասին» Ղազախստանի Յանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Ղազախստանի Յանրապետության կրթական և դաստիարակության համակարգը, բացառության հոգևոր (կրոնական) կրթական կազմակերպությունների,առանձնացված է կրոնից և կրոնական միավորումներից և ունի աշխարհիկ բնույթ»[195]:

Իսկ, Ռուսաստանի Դաշնության «Կրթության մասին» Դաշնային օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է կրթական գործունեություն իրականացնող պետական և տեղական

---

[194]Տե՛ս Конституция ФРГ от 23 мая 1949 г. с последующими изменениями и дополнениями до 20 октября 1997 года.Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=155:

[195]Բացի այդ, 2010 թվականին Ղազախստանում ֆակուլտատիվ կարգով (ըստ ցանկության) մտցվեց «Կրոնագիտության հիմունքներ» առարկան: Ղազախստանի Յանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանի համաձայն՝ 2016 թվականին Ղազախստանի միջնակարգ դպրոցների 9-րդ դասարաններում պարտադիր կարգով ներմուծվեց «Աշխարհիկությունը և կրոնագիտության հիմունքները» առարկան, որի դասավանդումը վերապահվեց միայն հատուկ պատրաստվածություն անցած պատմության ուսուցիչներին:// Տե՛ս Приказ Министра образования и науки Республики Казахстан от 15 июля 2014 года № 281 О внесении изменения в приказ Министра образования и науки Республики Казахстан от 3 апреля 2013 года № 115 «Об утверждении типовых учебных программ по общеобразовательным предметам, курсам по выбору и факультативам для общеобразовательных организаций» // https://online.zakon.kz/Document/?doc_id=31601763#pos=3;-102:

ինքնակառավարման մարմիններում կրթության աշխարհիկ բնույթը[196]:

Քննարկվող խնդրի վերաբերությամբ հստակ դիրքորոշում է հռչակված Լիտվայի Սահմանադրության 40-րդ հոդվածում, որտեղ նույնպես սահմանվում է կրթության աշխարհիկության սկզբունքը՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կրթադաստիարակչական բնույթի հաստատությունները ունեն աշխարհիկ բնույթ: Այդ հաստատություններում ծնողների ցանկությամբ ուսուցանվում է «Աստծո Օրենքը»[197]:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Հնդկաստանի Սահմանադրության 28-րդ հոդվածը, որը ամրագրում է կրոնի դասերին հաճախելու և որոշ ուսումնական հաստատություններում ժամերգություն կատարելու ազատությունը. «ոչ մի կրոնական դասավանդում չպետք է տեղի ունենա այն ուսումնական հաստատություններում, որոնք գոյատևում են պետական միջոցների հաշվին, պետության կողմից ճանաչված կամ պետական միջոցների հաշվին գոյատևող ուսումնական հաստատություն այցելող որևէ անձի չի կարելի պարտադրել հաճախել այնտեղ անցկացվող կրոնի դասերին կամ ներկա գտնվել ժամերգությանը, եթե

---

196Տե՛ս Федеральный закон от 29.12.2012 N 273-ФЗ Об образовании в Российской Федерации. http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_140174/15956ae575273a483e753fc119fb41fc4c37f84/:Միաժամանակ հարկ է նկատել, որ 2012 թվականին ՌԴ հանրակրթական բոլոր դպրոցներում ներմուծվեց «Կրոնական մշակույթի և աշխարհիկ էթիկայի հիմունքները» ուսումնական առարկան: Վերջինս ներառում է վեց մոդուլներ՝ ըստ ցանկության որևէ մեկն ընտրելու հնարավորությամբ: Դրանք են՝ «Ուղղափառ մշակույթի հիմունքները», «Իսլամական մշակույթի հիմունքները», «Բուդդայական մշակույթի հիմունքները», «Հուդայական մշակույթի հիմունքները», «Համաշխարհային կրոնական մշակույթների հիմունքները», «Աշխարհիկ էթիկայի հիմունքները»:

197Տե՛ս Конституция Литовской Республики 25 октября 1992 года. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=115:

այդ անձը կամ նրա անչափահաս լինելու պարագայում նրա խնամակալը չի տվել իր համաձայնությունը»[198]:

Իսկ Մեքսիկայի Սահմանադրության 24-րդ հոդվածը սահմանում է, որ. «Երաշխավորվում է դավանանքի ազատությունը, որի սկզբունքներով պետք է առաջնորդվի կրթությունը, իսկ վերջինս չպետք է ընդհանրություն ունենալ որևէ կրոնական ուսմունքի հետ, այն պետք է հիմնված լինի գիտության առաջընթացի վրա, ծառայի տգիտության և նրա հետևանքների՝ ստրկության, ֆանատիզմի, և նախապաշարմունքների դեմ պայքարին»[199]:

Աշխարհիկ կրթության ապահովման տեսանկյունից խնդրահարույց է նաև պետական ուսումնական հաստատություններում կրոնական խորհրդանիշների գործածության հիմնահարցը: Պետք է նկատել, որ այս պարագայում էլ պետությունները որդեգրել են տարաբնույթ մոտեցումներ:

Այսպես, օրինակ, կան երկրներ, որտեղ թույլատրվում է հանրակրթական դպրոցներում կրոնական հագուստև այլ խորհրդանիշներ կրելը՝ համաձայն իրենց կրոնական համոզմունքների և ավանդույթների (Ռուսաստան, Չեչնիա, Իսրայել, Իրան):

Միաժամանակ, կան պետություններ, որտեղ արգելվում է ուսումնական հաստատությունների ուսուցիչներին կամ դասախոսներին բացահայտ կրել կրոնական խորհրդանիշներ, իսկ աշակերտներին և ուսանողներին՝ ցուցադրել

---

198Տե՛ս Նույն տեղում:
199Տե՛ս Конституция Мексиканских Соединеных Штатов, 05.02.1917. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=51:

սեփական կրոնական պատկանելությունը (Ֆրանսիայում, Գերմանիայի որոշ Հողերում):

Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ կրոնական խորհրդանիշների գործածության հիմնահարցը արդիական է հատկապես այն աշխարհիկ պետություններում, որտեղ իսլամը ավանդաբար համարվում է հասարակության գիտակցության ազդեցիկ գործոն (օրինակ, Թուրքիան, Ղազախստանը, Ադրբեջանը)[200]:

Հարկ է նկատել նաև, որ կրոնական խորհրդանիշների ակնհայտ առկայության փաստը ինքնին չի կանխորոշում աշակերտների նկատմամբ տվյալ ուսմունքի պարտադրանք կամ քարոզ[201]:

Նպատակ չհետապնդելով ամբողջությամբ քննարկել կրթության աշխարհիկության ոլորտում տարբեր երկրների օրենսդրության

---

[200] 2008 թվականին Թուրքիայի Հանրապետության «Արդարություն և զարգացում» կուսակցությունը ևս երկու կուսակցությունների հետ սահմանադրական փոփոխությունների փաթեթ ներկայացրեց Խորհրդարան՝ մասնավորապես կրթական և այլ պետական հաստատություններում կանանց և աղջիկների գլխաշոր կրելու արգելքը վերացնելու վերաբերյալ: Սահմանադրության մեջ կատարված սույն փոփոխության սահմանադրականության համապատասխանելիության հարցը վիճարկվեց Թուրիքիայի Սահամանդրական դատարանում, որի արդյունքում այն ճանաչվեց Սահմանադրությանը հակասող: Թուրքիայի Սահմանադրական դատարանի այս որոշումը, ըստ էության, բխում էր ժողովրդավարական հասարակարգում աշխարհիկության սկզբունքի իրացումը ապահովելու և նրա դերակատարությունը պաշտպանելու առաջնահերթությունից: Տե՛ս **Ռ. Սաֆրաստյան** և ուրիշներ, Թուրքիայի Հանրապետության պատմություն, բուհական դասագիրք, Եր., 2014թ., էջ՝ 321-322: Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր 10.11.2005թ. թիվ 44774/98 նախադեպային որոշմամբ, հաշվի առնելով Թուրքիայի Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումը, հաստատեց Թուրքիայի ուսումնական հաստատություններում գլխաշոր կրելու արգելքի իրավաչափությունը՝ ելնելով աշխարհիկության սկզբունքի ապահովման՝ Թուրքիայի Հանրապետության ստանձնած պարտավորությունից: Տե՛ս Case of **Leyla Şahin v. Turkey**, (Application no. 44774/98) Strasbourg, France 10 November 2005. Սկզբնաղբյուրը՝ http://www.tjsl.edu/slomansonb/SahinTurk.pdf:

[201] Տե՛ս Case of **Lautsi v. Italy**, 18.03.2011, (Application no. 30814/06): Սկզբնաղբյուրը՝ https://hudoc.echr.coe.int/eng#{"tabview":["document"],"itemid":["001-95589"]}:

վերլուծության փորձը, անհրաժեշտ է ընդգծել, որ հանրակրթական դպրոցներում կրոնի դասավանդման հարցում չկան միասնական մոտեցումներ: Բացի այդ, կրոնական ուսուցումը աշխարհիկ դպրոցներում առավելապես պայմանավորված է տվյալ պետության և հասարակության կյանքում կրոնի ունեցած ազդեցությամբ և պետական իշխանության որդեգրած գաղափարախոսական ռազմավարությամբ:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես աշխարհիկ պետություն, կրթական համակարգի և կրոնի հարաբերակցության տեսանկյունից նույնպես ընդգծում է կրթության աշխարհիկության սկզբունքի կարևորությունը: Այսպես, «Կրթության մասին»՝ ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում են կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, որոնցից մեկն էլ հանդիսանում է ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը[202]: Սակայն, մեկ այլ՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ կրթության աշխարհիկությունը բացարձակ չէ, և օրենքով նախատեսված դեպքերում կարող է սահմանվել ուսումնական հաստատություններում կրոնական քարոզչության բացառիկ թույլատրելիության հնարավորություն[203]:

---

[202] Հայաստանի Հանրապետության օրենքը «Կրթության մասին»՝ 5-րդ հոդվ. (ընդունվել է Ազգային ժողովի կողմից 14.04.1999թ.); Հայաստանի Հանրապետության օրենքը «Հանրակրթության մասին»՝ 4-րդ հոդվ. (ընդունվել է 10.07.2009թ.); Հայաստանի Հանրապետության օրենքը «Նախադպրոցական կրթության մասին»՝ 5-րդ հոդվ. (ընդունվել է 15.11.2005թ.):

[203] Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Հանրակրթության մասին»՝ 4-րդ հոդվ., 8-րդ կետի համաձայն՝ «Կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են,

Սակայն, հիշատակված նորմերի մեկնաբանման տրամաբանության համատեքստում չի կարելի ենթադրել, որ աշխարհիկ կրթությունը, նույնիսկ բացառության կարգով, կարող է կրոնական քարոզչություն ծավալել ուսումնական հաստատություններում:

Կրթության աշխարհիկության սկզբունքի կենսագործման հիմնահարցի ուսումնասիրությունը առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում հատկապես Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու փոխգործակցության համատեքստում: Ընդ որում, պետությունը բարձր գնահատելով ազգային եկեղեցու դերը հայ ժողովրդի մշակույթի զարգացման գործում, բավական սերտ համագործակցության դաշտ է ձևավորել վերջինիս հետ կրթության բնագավառում:

Այսպես, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու մենաշնորհի հանդիսացող առաքելությունների իրագործմանը, մասնավորապես՝ «ազատ քարոզել ու տարածել իր դավանանքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում...»[204]:

Անշուշտ, «Հայաստանի Հանրապետության ողջ տարածք» արտահայտությունը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու դավանանքը տարածելու և քարոզելու իմաստով, չի վերաբերում հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններին, քանի որ, հակառակ

---

բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: // Տե՛ս ՀՀՊՏ 2009.08.05/39(705) Հոդ.901:

[204] Տե՛ս «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված, գ) կետ: Աղբյուրը՝ http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2041&lang=arm):

պարագայում, ակնհայտորեն տեղի կունենա կրթության աշխարհիկության սկզբունքի էության աղճատում, և վերջինս, ինքնին կկրի սոսկ հռչակագրային բնույթ:

Հիմնահարցի քննարկման հայրենական փորձը դիտարկելիս՝ հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում, պաշտոնապես ճանաչված կրոնական առարկա, որպես այդպիսին, գոյություն չունի:

2002 թվականին ՀՀ կառավարության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների դասարանների ուսումնական ծրագրում ներմուծվեց «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան[205]: Ընդ որում, նշված առարկայի դասագրքերի մշակումը, ֆինանսավորումը և հրատարակումը պետք է ապահովեր ազգային եկեղեցին, իսկ դրանց ստեղծման աշխատանքների գիտամեթոդական ղեկավարումը և այլ պարտավորություններ վերապահվեցին ՀՀ կրթության և գիտության նախարարությանը[206]:

---

[205] Համաձայնագիրը կնքվեց ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ի կողմից: Այն վերահաստատվեց Վեհափառ Հայրապետի և ՀՀ ԿԳՆ նախարարի միջև 2005թ. կնքված համաձայնագրով: 2003-2004թթ. ուսումնական տարվա ընթացքում **«Հայոց եկեղեցու պատմություն»** առարկան ներդրվեց 4-րդ և 5-րդ դասարաններում: 2005թ. առարկան ընդգրկվեց հանրակրթական դպրոցների 4-10-րդ դասարանների ուսումնական պլանում:

[206] Սկսած 2005թ. առարկայի ուսուցման հետ կապված խնդիրների վերահսկողությունը ստանձնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, (ՔԴԿ), իսկ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպումը հանձնարարվեց ՔԴԿ-ին, ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը, Ազգային կրթության ինստիտուտին և Հայաստանի աստվածաշնչային ընկերությանը: Տե՛ս, մանրամասն ՀԱՍԵ-ի ինտերնետային կայքէջը՝ http://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=16853&pid=16849: Միաժամանակ հաստատվեցին հանրակրթական հիմնական դպրոցի (5-9-րդ, 10-11-րդ դասարաններ) «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչը և ծրագիրը, ինչպես նաև սահմանվեցին

Ուշագրավ է, որ դպրոցական ուսումնական ծրագրերում տվյալ առարկայի պարտադիր ներառման արդյունքում ազգային պատկանելությունն ինքնին նույնականացվեց կրոնական պատկանելության հետ, ինչը իր հերթին որոշակի նեգատիվ վերաբերմունք հաղորդեց Հայաստանի Հանրապետությունում գործող կրո-նական փոքրամասնությունների նկատմամբ[207]: Այս

---

դասընթացի հետևյալ ընդհանուր նպատակները. ա) ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելու ու հաղորդակից դարձնելու միջոցով նպաստել աճող սերնդի ազգային-հոգևոր նկարագրի ամբողջացմանը, բ) աճող սերնդին հեռու պահել դեստրուկտիվ (ամբողջատիրական, քայքայիչ, ապականռուցողական), միջազգային հեղինակավոր կազմակեր-պությունների կողմից բազմիցս քննադատված կրոնական տարաբնույթ հոսանքներից, որոնք լուրջ նկրտումներ ունեն հանրակրթական ոլորտ ներթափանցելու և արմատավորվելու, գ) մշակել գիտամանկավարժական այնպիսի մոտեցումներ, որոնց հիմքում ընկած են մանկավարժության հիմնարար սկզբունքները՝ մատչելիություն, շարունակականություն, տարիքային առանձնահատ-կությունների հաշվառում, ինտեգրում այլ առարկաների հետ և այլն, դ) ամբողջացնել հայագիտական առարկաների՝ Հայոց պատմության և մշակույթի հետ կապված հարցերի շրջանակը՝ ամրապնդելով այդ առարկաներից սովորողների գիտելիքները, լրացուցիչ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել, ինչպես նաև վեր հանել բազմաթիվ իրադար-ձությունների և երևույթների ընթացքը պայմանավորող հոգևոր-եկեղեցական գործոնները // Տե՛ս ՀՀ կրթության և գիտության նախարարի 17.08.2012թ. թիվ N 708-Ա/Ք հրամանում փոփոխություններ կատարելու մասին 06.09.2013թ. թիվ 1075-Ա/Ք և «Հանրակրթական հիմնական դպրոցի 10-11-րդ դասարանների «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչը և ծրագիրը հաստատելու մասին» 17.07.2012թ. թիվ 709 Ա/Ք հրամանները // http://lib.armedu.am/resource/2176:

[207] Տե՛ս **Հ. Հովհաննիսյան**, **Ա. Դավթյան**, Հայոց եկեղեցու պատմություն դպրոցական դասագրքերի բովանդակային վերլուծությունն ու դրանց ազդեցությունը երիտասարդ սերնդի վրա, Եր., 2013թ., էջ՝ 40: Ավելին, որոշ դեպքերում էլ «Հայ եկեղեցու պատմություն» առարկային վերագրվեցին ծայրահեղական գնահատականներ, այդ թվում՝ շեղում կրթության աշխարհիկության սկզբունքից կամ, չարդարացված ցանկություններ: Առաջարկվում էր «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերում ներառել աշխարհում արդիական դարձած դիակիզարանների, էֆթանազիայի և միասեռամուսնությունների խնդիրները: // Տե՛ս **Հ. Սանասարյան**, Հայոց եկեղեցու պատմությո՞ւն թե՞ հուդայականության ձեռնարկ, Եր., 2010, **Հ. Հովհաննիսյան**, **Ա. Դավթյան**, Հայոց եկեղեցու պատմություն դպրոցական դասագրքերի բովանդակային վերլուծությունն ու դրանց ազդեցությունը երիտասարդ սերնդի վրա, Եր., 2013թ., էջ՝ 29: :

ամենը հանգեցրեց պետության աշխարհիկության սկզբունքի իրագործման թերահավատությանը[208]:

Անդրադառնալով հիմնախնդրին, ՀՀ կառավարությունը 2010 թվականի թիվ 439-Ն որոշմամբ հաստատեց հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը, որի թիվ 2 հավելվածում ամրագրված տարրական և հիմնական կրթության հանրակրթական ծրագրերի բովանդակության ներկայացվող նվազագույն պահանջների մեջ սահմանվեց «հասարակություն, հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառի՝ կրոնական բազմազանության նպատակաուղղվածությունը[209]: Հատկանշական է, որ որոշման հավելվածում միջնակարգ (ավագ) դպրոցի ծրագրային չափորոշիչների մեջ կրոնական բազմազանության մասին որևէ հիշատակում չկա:

Միաժամանակ, անդրադառնալով կրոնական բազմազանության ապահովման մասին հիմնահարցին՝ հարկ է շեշտադրել, որ «Հայոց եկեղեցու պատմություն» դպրոցական առարկայի շրջանակում ազգային եկեղեցու պատմության, դավանաբանական ուղղության և, առհասարակ,

---

[208] Հարկ է ուշադրություն դարձնել «Հայոց եկեղեցու պատմություն» դպրոցական առարկայի ծրագրում շարադրված սկզբունքներին, որտեղ ասվում է. «Առարկայի մշակման հիմքում ընկած է կրթության աշխարհիկ սկզբունքը: Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրությունը ներկայացվող դասընթացի բովանդակության շրջանակներում հանդիսանում է աշխարհիկ կրթություն՝ կոնկրետ էթնոմշակութային, էթնոդավանական և քաղաքակրթական ուղղվածության կրոնագիտական կրթության տեսակ» // Տե՛ս ՀՀ կրթության և գիտության նախարարի 06.09.2013թ. թիվ 1075-Ա/Ք և 17.07.2012թ. թիվ 709Ա/Ք հրամանների հավելվածները:

[209] Տե՛ս ՀՀ կառավարության «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի թիվ 771-Ն և հունիսի 17-ի թիվ 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 08.04.2010թ. թիվ 439-Ն որոշումը: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2010.05.06/19(753) Հոդ.489

քրիստոնեական ուսմունքի վերաբերյալ գիտելիքներից զատ, տեղեկություններ է տրամադրվում նաև կենդանու և բույսի պաշտամունքի (տոտեմիզմ), հին հայկական կամ նախաքրիստոնեական հավատքի, հինդուական, բուդդայական, զրադաշտական, մահմեդական կրոնների, հունահռոմեական դիցարանի մասին՝ այդ կերպ հանդես գալով, նաև, զանազան կրոնների ուսուցման յուրօրինակ աղբյուր:

Ակներև է, որ կրթության աշխարհիկության սկզբունքը ամենևին չի պահանջում կրթության բնագավառում կրոնի ուսուցման անթույլատրելիություն: Աշխարհիկ պետությունը հակակրոնական, աստվածամերժ պետություն չէ: Ավելին՝ կրոնի բացառումը պետական կրթական համակարգից, նույնիսկ, որոշ իմաստով, հակադրության մեջ է մտնում «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունք հռչակված համամարդկային արժեքների առաջնայնության[210], ինչպես նաև 11-րդ հոդվածով սահմանված դրույթների հետ, համաձայն որի՝ «կրթության բովանդակությունն ապահովում է՝ 1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան, 2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը»[211]: Վերջինս անխուսափելիորեն ենթադրում է նաև կրոնների պատմության ուսուցում՝ որպես տարբեր ազգերի հոգևոր կյանքի կարևորագույն բաղադրիչ և մշակութային արժեք: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ կրոնների՝ որպես

---

210 Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվ 1-ին մաս:
211 Տե՛ս նույն տեղում՝ 11-րդ հոդված 2-րդ մաս:

աշխարհընկալման ուրույն համակարգի, ուսուցումը անհրաժեշտ է երեխայի և առհասարակ մարդու լայնախոհության և աշխարհաճանաչման, համամարդկային արժեքներին հաղորդակից լինելու համար:

Այլ հարց է որ, կրոնագիտական առարկայի ուսուցումը՝ ելնելով կրթության աշխարհիկության սկզբունքից, պետք է հիմնված լինի ժողովրդավարության անկյունաքար հանդիսացող բազմակարծության և լայնախոհության վրա և չվերածվի որևէ դավանաբանական ուղղության քարոզչության և կրոնական անհանդուրժողականության սերմանման: Այս իրավաընկալումից բխում է, որ որևէ պարագայում հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում կրոնական քարոզչությունը անհամատեղելի է կրթության աշխարհիկության սկզբունքի էության հետ, նույնիսկ դոմինանտ կամ տիրապետող դավանանքի պարագայում:

Սույն մտահոգություններով պայմանավորված՝ հարկ է հիշատակել աշխարհիկ մոտեցումների վրա հիմնված Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքները (ԹՈՒՍ)[212], որը ԵԱՀԿ անդամ պետությունների համար պարտադիր կատարման փաստաթուղթ չէ և կրում է սոսկ խորհրդատվական բնույթ: Ընդ որում, այդ սկզբունքների համաձայն՝ կարևորվում է կրթության աշխարհիկ բնույթը, առարկաների դասավանդման անկողմնակալությունն ու

[212] Իսպանիան ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կրոնի կամ հավատքի ազատության խորհրդատվական խորհրդի հետ համատեղ նախաձեռնեց Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքների միասնական ձեռնարկի մշակումը, որը հիմնարար սկզբունքներ է սահմանում ԵԱՀԿ մասնակից երկրների հանրային դպրոցներում ուսուցանվող կրոնական ուղղվածության առարկաների դասավանդման չափանիշների վերաբերյալ:

օբյեկտիվությունը, ինչպես նաև ուսումնական ծրագրերի կազմման, ուսուցիչների վերապատրաստման, համապատասխանությունը կրթության աշխարհիկության, ժողովրդավարության և մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին[213]:

Հարկ է շեշտադրել այն փաստը, որ ՀՀ կառավարությունն իր 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշմամբ, հաստատել է «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը», որը հանրակրթական դպրոցներում տարբեր կրոնների և դավանանքների նկատմամբ հանդուրժողականության ապահովման համար նախատեսում էր տպագրել Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքները և այն տարածել հատկապես «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդող պատասխանատուների շրջանում[214]:

Այստեղից հետևում է այն ողջամիտ հարցադրումը, որ եթե «Հայոց եկեղեցու պատմությունը» հայագիտական ուղղվածության աշխարհիկ բնույթի առարկա է, ապա ինչո՞ւ է կրոնների և հավատքների դասավանդմանը և ծրագրերին վերաբերող «Ձեռնարկի» տպագրումը և տարածումը կարևորվում այդ ոլորտի

[213]Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքների հիման վրա սահմանվել են կրոնների դասավանդման և ուսումնական ծրագրերի պատրաստման մեթոդաբանական ուղենիշները, որոնց հիմքում դրված է կրոնի կամ հավատքի ազատ դավանության համընդհանուր իրավունքը՝ հիմնված փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության և միջդավա-նական կոնֆլիկտների բացառման վրա // Տե՛ս Toledo Guiding Principles on Teaching about Religions and Beliefs in Public Schools OSCE/ODIHR 2007:

[214]Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության *թիվ N 303-Ն* որոշումը, ընդունվել է 27 փետրվարի, 2014թ.: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2014.04.02/16(1029) Հոդ.239:

պատասխանատուների համար: Խնդիրը, ըստէության, կայանում է նրանում, որ հոգևոր կազմակերպությունների վերաբերյալ պատմական տեղեկանքը, ինչպիսին էլ որ այն լինի, կարող է իր մեջ կրոնական քարոզչության, խտրականության դրսևորման հնարավոր վտանգներ պարունակել: Հետևաբար՝ Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքների տեղայնացումը աշխարհիկ կրթության անշեղ իրացման համատեքստում օգտակար առաջնահերթություն է:

Համակարծիք ենք այն դիտարկումներին, որ դասավանդող ուսուցիչների մասնակագիտական որակներով, դավանած համոզմունքներով և արժեքներով պայմանավորված՝ ազգային հոգևոր կառույցի պատմության ուսուցումը իր սահմանած սկզբունքներից և նպատակներից կարող է շեղվել՝ կանխորոշելով կրոնաքարոզչական տարրի գերակայությունը: Անշուշտ, «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական գործընթացների կազմակերպման ու վերահսկողության գործառույթների իրականացումը առավել արդարացված կլինի, եթե դրանք վերապահվեն բացառապես պետական իրավասու մարմնին: Այդկերպ, հնարավոր կլինի ապահովել ուսուցման դասընթացի չեզոքությունը և օբյեկտիվությունը:

Միաժամանակ պետք է արձանագրել այն փաստը, որ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը՝ որպես «Հայոց եկեղեցու պատմություն» առակայի դասավանդման խնդիրների առնչության վերահսկողություն իրականացնող մարմին, պարբերաբար այցելություններ է կատարում դպրոցներ, մասնակցում դասալսումների, բարձրացնում անհամապատասխան ուսուցչի փոխարինելիության հարցը:

Անշուշտ, դասագրքերի մշակման, դրանց հետագա բարելավման աշխատանքներում ազգային եկեղեցու ներգրավվածությունը ողջունելի է, և իրապես բխում է պետություն-եկեղեցի հարաբերությունների ամրակայման անհրաժեշտությունից, սակայն, աշխարհիկ կրթական հաստատություններում հոգևոր սպասավորների կողմից որևէ դասընթացի վերահսկողության իրականացումը, մեր կարծիքով, համատեղելի չէ կրթության աշխարհիկության սկզբունքի էության հետ:

Ասվածի համատեքստում հարկ է նշել, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի նպատակների մեջ, լայն իմաստով, մտնում է ազգային եկեղեցու պատմության փոխանցումը աշակերտներին, այլ ոչ թե կրոնական հավատի կամ հակակրոնական աշխարհայացքի սերմանումը: Այդ պատճառով հրատապ է այնպիսի կառուցակարգերի ներդրումը, որպեսզի առարկայի ֆորմալ գործառույթը փաստացի կիրարկման մեջ չվերածվի կրոնական քարոզչության, և դրանով իսկ, չխոչընդոտի պետության աշխարհիկության գաղափարի կենսագործմանը, որը անառարկելիորեն պահանջում է աշխարհիկ կրթական հաստատություններում զերծ մնալ մի կողմից՝ աթեիստական գաղափարներ սերմանելուց, մյուս կողմից՝ կրոնական դոկտրիններ տարածելուց և քարոզելուց:

Հաջորդը կարևոր հարցադրումը վերաբերում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի պարտադիր ուսուցմանը: Արդյո՞ք դասընթացից հրաժարվելու ընթացակարգի բացակայությունը խախտում է սեփական համոզմունքներին համապատասխան կրթության իրավունքի իրացումը:

Թերևս, անհրաժեշտ է նկատել, որ «Հայոց եկեղեցու պատմությունը» պաշտոնապես աշխարհիկ առարկա է, այդու հանդերձ արտաքին դիտարկումն էլ բավարար է նկատելու դասագրքերում առկա քրիստոնեական ուսմունքի ճնշող գերակայությունը:

Հայաստանի Հանրապետությունում կրթության աշխարհիկության սկզբունքի հետազոտման շրջանակներում հարկ է դիտարկել տվյալ հիմնախնդրին առնչվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան՝ ստորև ներկայացված գործերի շրջանակում: Մասնավորապես՝

**Ա) «Ֆոլգերն և այլք ընդդեմ Նորվեգիայի»** գործով 29.06.2007թ. կայացրած որոշումը[215], որի նախապատմությունը հետևյալն է. 1997 թվականին Նորվեգիայի տարրական դպրոցներում պարտադիր կարգով, ներմուծվեց «Քրիստոնեություն, կրոն և փիլիսոփայություն» միասնական առարկան, որը չէր նախատեսում դասընթացից ամբողջական հրաժարվելու ընթացակարգ: Նորվեգիայի «Մարդասիրական ասոցացիայի» անդամ հանդիսացող մի խումբ ծնողներ դիմում էին ներկայացրել դպրոցի տնօրինությանը՝ իրենց երեխաներին դասընթացից ազատելու համար, որը սակայն մերժվել էր: Հայցվորները ներպետական դատական ատյանները սպառելուց հետո հայց էին ներկայացրել Եվրոպական դատարան հայտնելով, որ առարկայից ամբողջական հրաժարվելու հնարավորության բացակայությունը խախտում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով

[215]Տե՛ս Case of **Folgero And Others v Norway**: ECHR 29 Jun 2007. December 12, 2017, (Application no. 15472/02): Սկզբնաղբյուրը՝ http://hudoc.echr.coe.int/eng?i=001-81356:

սահմանված իրենց մտքի. խղճի և կրոնի ազատության, ինչպես նաև Կոնվենցիայի թիվ 1-ին արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը[216]: Նույն դատարանի պալատը քննելով գործը եզրակացրել է, որ առկա է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 2-րդ հոդվածի խախտում՝ միաժամանակ արձանագրելով, որ առարկան ինքնին հենվել է հիմնականում քրիստոնեության ուսուցման վրա և չի ապահովել համընդհանուր չեզոքություն:

**Բ) Հասանը և Էյլեմ Զենգին ընդդեմ Թուրքիայի** գործով 09.10.2007թ. որոշումը[217]: Այս գործի նախապատմությունը հանգում է հետևյալին. Թուրքիայի քաղաքացի Էյլեմ Զենգին՝ լինելով ալևիզմի հետևորդ, սովորում էր Ստամբուլի հանրակրթական դպրոցում, որտեղ պարտադիր կարգով ուսուցանվում էր «Կրոնական մշակույթ և բարոյագիտություն» առարկան: Հայրը՝ Հասան Զենգին խնդրել էր ազատել դստերը հիշյալ դասընթացից, քանի որ այն հիմնականում պարունակում էր սուննիական ուղղվածության գիտելիքներ և, դրանով իսկ, խախտում իր երեխայի համոզմունքներին համապատասխան կրթություն ապահովելու իրավունքը: Դատարանը գործը քննելով՝ միաձայն արձանագրեց Կոնվենցիայի թիվ 1-ին արձանագրության 2-րդ հոդվածի խախտում: Համեմատելով «Կրոնական մշակույթ և

---

[216] Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի արձանագրության 2-րդ հոդված: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ.367:

[217] Տե՛ս Case of **Hasan and Eylem Zengin v. Turkey** 9 October 2007, (Application no. 1448/04): Սկզբնաղբյուրը՝ http://echr.ketse.com/doc/1448.04-en-20071009/view/:

բարոյագիտություն» դասընթացի վերաբերյալ Թուրքիայի կրթության նախարարության սահմանած մեթոդաբանական ուղեցույցները և առարկայի դասագրքերը դատարանը արձանագրել է, որ Թուրքիայի կրթական համակարգը համարժեք մոտեցում չի ցուցաբերում կրոնական կրթությանը, այլ առարկայի ծրագրում առաջնահերթությունը վերապահելով իսլամին՝ անտեսում է մյուս կրոնական ուղղությունները:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումները փաստում են, որ մեկ կրոնի գերապատվության վրա հիմնված պարտադիր կրոնական ուսուցումը անհամատեղելի է Կոնվենցիայի հռչակած ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքի հետ:

Անհրաժեշտ է հավելել, որ կրոնական և փիլիսոփայական համոզմունքները հարգելու իրավունքը պատկանում է երեխայի ծնողներին, այլ ոչ թե իրեն՝ երեխային: Այդ համոզմունքները հարգելու պարտականությունը, այդուհանդերձ, ենթակա է երեխայի՝ կրթություն ստանալու ուղղակի իրավունքին[218]:

Բնավ, չարժեզրկելով քրիստոնեության դերը հայ ժողովրդի և պետության քաղաքակրթական առաջընթացի ապահովման գործում, հարկ է շեշտադրել, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի պարտադիր ուսուցումը Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում չի կարող իր բովանդային իմաստով համատեղելի լինել երեխայի ծնողների կրոնական

[218]Տե՛ս **Զ. Մուրդոք**, Մտքի, խղճի և կրոնի ազատություն: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իրականացման ուղեցույց, խմբ.՝ Վ. Ենգիբարյան, Եր.: 2008թ., էջ 70:

համոզմունքներին համապատասխան կրթության իրավունքի հետ, եթե չի սահմանում ֆակուլտատիվ սկզբունքներով սահմանված ընթացակարգեր:

Անշուշտ, «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից հրաժարվելու ընթացակարգի սահմանումը, չի կարող նսեմացնել կրթության բնագավառում ազգային եկեղեցու անգնահատելի դերն ու առաքելությունը: «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան նախ և առաջ հայագիտական ուղղվածության առարկա է, որում արտացոլված է ազգային եկեղեցու պատմությունը, նրա տեղն ու դերը ազգային ինստիտուտների շարքում: Ազգային հոգևոր կառույցի 1800 տարվա պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն է և, անշուշտ, հրամայական է առանձին առարկայի շրջանակներում այդ պատմության դասավանդումը:

Իրավացի է այն տեսակետը, ըստ որի՝ Հայ եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման անհրաժեշտությունը, ըստ էության, պայմանավորված է ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման եկեղեցու առաքելությամբ[219]:

Անշուշտ, հարկ է կարևորել ազգային ավանդույթների, նկարագրի, աշխարհայացքի դերը նաև կրթության բնագավառում՝ դիտարկելով ազգային մշակույթը և կրոնը՝ որպես կրթության և դաստիարակության բաղադրիչ[220]: Այս առումով,

---

[219]Տե՛ս **Տ. Շահե վարդ. Անանյան**, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և ՀՀ օրենսդրությունը (քննարկման նյութեր) Սբ. Էջմիածին, 2013թ., էջ՝ 15:

[220]Տե՛ս Խմբագրական, (2007) «Կրթություն-մարդու իրավունքներ. հասարակություն. հիմնախնդիրներ և հեռանկարներ» թեմայով գիտաժողով Երևանում, Էջմիածին. Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, ԿԳ (Դ). էջ՝ 123-127:

անշուշտ, արդարացված է նաև, թե՛ ազգային եկեղեցու պատմության, թե՛ քրիստոնեական գաղափարախոսության նկատմամբ պետական իշխանության հոգատար վերաբերմունքը, որը բխում է ազգային եկեղեցու մատուցած ազգանվեր ծառայություններից:

Սակայն, պետք է կարևորել նաև այլադավան փոքրամասնության իրավունքներն ու շահերը, որոնց կրոնական համոզմունքները տարբերվում են «Հայոց եկեղեցու պատմության» շրջանակներում հռչակված կրոնաքարոզական մոտեցումներից: Այս իմաստով, անհրաժեշտ է նկատել, որ պետք է ողջամտորեն համադրել աշխարհիկ պետության նվազագույն պահանջները՝ ազգային եկեղեցու հետ սերտ փոխգործակցության հայեցակարգի համատեքստում:

Սույն հիմնախնդրի քննարկման համատեքստում հարկ է հիշատակել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հանձնաժողովի 2013 թվականի ամփոփիչ դիտարկումները Հայաստանի Հանրապետության երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի վերաբերյալ, որում Հանձնաժողովը, մասնավորապես, արտահայտել է այն մտահոգությունը որ, «երկրում առավել տարածված կրոնի ուսուցումը պարտադիր առարկա է դպրոցների ուսումնական ծրագրերում» և առաջարկվել է «վերանայել դպրոցների ուսումնական ծրագիրը՝ դրանում արտացոլելով բոլոր երեխաների կրոնի ազատությունը և վերացնելով «Հայոց եկեղեցու պատմության» առարկայի պարտադիր դասավանդումը»[221]:

[221]Տե՛ս Committee on the Rights of the Child, Concluding observations on the combined third and fourth periodic reports of Armenia, adopted by the Committee at its sixty-third session, 27.05-14.06 2013, CRC/C/ARM/CO/3-4: Սկզբնաղբյուրը՝ http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf:

Բացի այդ, ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով» հաստատվում է. «կրթությունը պետք է նպաստի փոխըմբռնման, հանդուրժողականության և բոլոր ժողովուրդների, ռասայական և կրոնական խմբերի միջև բարեկամությունը…»[222]: Հռչակագրի սույն դրույթները թույլ են տալիս հանրակրթական դպրոցներում դասավանդել կրոնի և էթիկայի ընդհանուր պատմություն, եթե այն անցկացվում է անկողմնակալ և օբյեկտիվ[223]:

Բացի այդ, ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի համաձայն՝ «…մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և համապատասխան դեպքերում օրինական խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան»[224]: Իսկ ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 14-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «մասնակից պետությունները հարգում են մտքի, խղճի և կրոնի ազատության՝ երեխայի իրավունքը: Մասնակից պետությունները հարգում են ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների պարտականությունները՝ իր իրավունքներն իրականացնելիս երեխային ղեկավարելու նրա զարգացող

---

[222] Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվ. 2-րդ կետ, ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն: Սկզբնաղբյուրը՝ http://www.ohchr.org/EN/UDHR/Documents/UDHR_Translations/arm.pdf:

[223] Տե՛ս CCPR General Comment No. 22: Article 18 (Freedom of Thought,Conscience or Religion) Adopted at the Forty-eighth Session of the Human Rights Committee, on 30 July 1993. Սկզբնաղբյուրը՝ http://www.refworld.org/docid/453883fb22.html:

[224] Տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, 18-րդ հոդված 4-րդ կետ: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1997.12.25/29:

ընդունակություններին համապատասխան մեթոդով...»[225]:

Հիմք ընդունելով սույն Կոնվենցիայի հիշյալ դրույթները «Մտքի, խղճի, կրոնի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ որպես մտքի խղճի և կրոնի ազատության երաշխիք սահմանվել է ծնողների և խնամակալների իրավունքը՝ սեփական համոզմունքներին համապատասխան ապահովելու համապաատսախանաբար իրենց երեխաների և անչափահաս խնամարկյալների կրոնական դաստիարակությունը[226]:

Միաժամանակ, ՄԱԿ-ի «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» Շրջանակային կոնվենցիայի համաձայն՝ «կողմերը պետք է խրախուսեն հանդուրժողականություն և մշակույթների միջև երկխոսության մթնոլորտը և պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց միջև, անկախ նրանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելությունից, փոխադարձ հարգանքը, փոխըմբռնումը և համագործակցությունը խթանելու համար, մասնավորապես կրթության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառներում»[227]:

---

[225] Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1989թ. նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով և ուժի մեջ է մտել 1990թ. սեպտեմբերի 2-ին: Սկզբնաղբյուրը՝ ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում:

[226] Տե՛ս Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, հոդված 4-րդ կետ 5, 6: Սկզբնաղբյուրը՝ https://www.e-draft.am/projects/246/justification:

[227] Տե՛ս «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» Շրջանակային կոնվենցիա, 6-րդ հոդվ.

Այսպիսով, ամփոփելով սույն ենթագլխում կատարված վերլուծության արդյունքները, ամփոփ ձևով կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումները՝

1) աշխարհիկ պետության սկզբունքի կարևոր բաղադրիչներից է կրթության աշխարհիկությունը: Այն հանդիսանում է աշխարհիկ պետությունում կրթական միջավայրի չեզոքության, կրոնական համոզմունքների հիմքով խտրականության բացառման անհրաժեշտ նախապայման, որը ենթադրում է կրոնական քարոզչության, կրոնական պատկանելությամբ պայմանավորված խտրականության և պարտադրանքի անթույլատրելիություն,

2) կրոնական կրթության վերաբերյալ առանձին երկրներում որդեգրվել են տարաբնույթ դիրքորոշումներ. մի դեպքում՝ արգելելով դրա ուսուցումը ուսումնական հաստատություններում, մեկ այլ դեպքում՝ նախատեսելով դասընթացի դասավանդման համար անհրաժեշտ ֆակուլտատիվ ընթացակարգեր, իսկ առանձին դեպքերում՝ ամրագրելով կրոնական կրթության պարտադիր դասավանդման անհրաժեշտությունը,

3) Հայաստանի Հանրապետությունում կարևոր նշանակություն վերապահելով կրթության աշխարհիկության սկզբունքին, ինչպես նաև հաշվի առնելով Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի իրավական կարգավորման այն պահանջը, ըստ որի՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել

---

1-ին կետ, ընդունվել է 01.02.1995թ.: Սկզբնաղբյուրը՝ ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, այնուամենայնիվ, անհրաժեշտ է՝ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի գծով ուսումնական գործընթացների կազմակերպման ու վերահսկողության գործառույթները վերապահել բացառապես պետական իրավասու մարմնին, իսկ այդ առարկայի պարտադիր ուսուցումը և դրանից հրաժարվելու ընթացակարգերի բացակայությունը կարող է խղճի ու կրոնի ազատության իրացման պատնեշ հանդիսանալ այլադավանների շրջանում և աղճատել ինչպես պետության աշխարհիկության, այնպես էլ՝ կրոնական բազմակարծության սկզբունքի նշանակությունը:

# ԳԼՈՒԽ III.
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԻԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

## 3.1. Աշխարհիկ պետությունը սահմանադրական կարգի հիմունքների համակարգում. հարաբերակցության հիմնախնդիրները

Աշխարհիկ պետության հայեցակարգը հասարակության պատմության կարևորագույն ձեռքբերումներից է: Արդի ժամանակներում պետության աշխարհիկության սկզբունքի բացակայության պայմաններում դժվար է ակնկալել ժողովրդավարական հասարակարգի լիարժեք հաստատում, որը հիմնված կլինի մարդու և քաղաքացու ազատ կամարտահայտման, նրա կենսագործունեության բոլոր ձևերի ազատության վրա:

Որպես համամարդկային արժեք՝ աշխարհիկ պետության սկզբունքը իր առանձնահատուկ դերն ու նշանակությունն ունի Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքների համակարգում և փոխկապակցված է այդ համակարգի մյուս բաղադրատարրերի հետ: Սույն հետազոտության շրջանակում առանցքային նշանակություն ունի աշխարհիկ պետության տեղի ու նշանակության ուրվագծումը սահմանադրական կարգի հիմունքների համակարգում՝ բացահայտելով դրա փոխադարձ կապը այդ համակարգի մյուս բաղադրատարրերի հետ[228]:

[228] Սահմանադրական կարգի վերաբերյալ արդարացի է ենք համարում պրոֆեսոր Օ.Ե. Կուտաֆինի տեսակետը, ըստ որի «սահմանադրական կարգ» հասկացությունը բնութագրվում է որպես. «պետության կազմակերպման որոշակի ձև, տեսակ, որն ամրագրված է նրա Սահմանադրությունում»: Միաժամանակ, ասվածի համատեքստում, նա ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ. «պետության մեջ Սահմանադրության առկայությունը դեռևս բավարար պայման չէ տվյալ պետությունը սահմանադրական համարելու»: Ուշագրավ է այն, որ հիշատակված դիրքորոշման շրջանակում առաջ քաշած «սահմանադրական պետության» մեջ իրոք առկա է պետության սահմանադրական կարգի վերաբերյալ ձևակերպումը, որտեղ իրավական երաշխիքների պահպանման հաշվին պետական իշխանության կառուցակարգը ենթարկվում է իրավական

Ասվածի համատեքստում, նախև առաջ, անհրաժեշտ է նշել, որ սահմանադրական կարգը գոյություն ունի ոչ թե յուրաքանչյուր պետությունում, այլ այնտեղ, որտեղ կա իրական գործող Սահմանադրություն: Ավելին, մեր կարծիքով, սահմանադրական կարգը բնորոշ է միայն ժողովրդավարական պետություններին, որտեղ հստակ մշակված է սահմանադրաիրավական նորմերի համակարգը, առկա է հասարակության իրավագիտակցության բարձր մակարդակ, որը նպաստում է հասկանալու Սահմանադրության դերն ու տեղը անհատի, հասարակության և պետության կյանքում: Բացի այդ, սահմանադրական կարգ գոյություն ունի միայն իրավական պետությունում, որտեղ ճանաչվում, պահպանվում և երաշխավորվում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իսկ Սահմանադրությունը հանդիսանում է ոչ միայն սոսկ իրավական փաստաթուղթ, այլ նաև պետության կառուցման և գոյության բարոյական հիմք:

Այդու հանդերձ, անհրաժեշտ է կարևորել, որ սահմանադրական կարգի բոլոր հիմքերը միմյանց հետ գտնվում են համակարգային սերտ փոխկապակցվածության մեջ: Դրանցից ոչ մեկը

---

նորմերին: / Տե՛ս **О.Е. Кутафин, Е.И. Козлова**, Конституционное право России, учебник для студентов ВУЗ, 3 изд., М., 2003, էջ` 55-57, 121:

Իսկ պրոֆեսոր Մ.Վ. Բագլայը «սահմանադրական կարգ» եզրույթը սահմանում է որպես. «կարգ, որի ժամանակ պահպանվում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իսկ պետությունը գործում է Սահմանադրությանը համապատասխան»: / Տե՛ս **М.В. Баглай**, Конституционное право РФ, Учебник для юридических вузов, 2 изд., М., 1999, էջ` 99: Այնուամենայնիվ, սահմանադրական իրավունքի մի շարք մասնագետներ (Ս. Ավագյան, Մ. Բագլայ, Ե. Կոզլովա, Օ. Կուտաֆին, Օ. Ռումյանցև և ուրիշներ), «սահմանադրական կարգի հիմունքները» բացահայտում են «սահմանադրական սկզբունքներ» հասկացության օգնությամբ, որոնք իրենցից ներկայացնում են անհատի իրավական կարգավիճակի, առաջնային, ղեկավար, համակարգաստեղծ հիմքերի, պետության ժողովրդավարական կառուցվածքի, ամրագրված սահմանադրաիրավական նորմերի համակարգ:

չպետք է դուրս մնա հիմքերի ընդհանուր համակարգից, քանի որ որևէ հիմքի բացակայությունը կարող է բերել ողջ պետական համակարգի փլուզմանը:

Հարկ է նկատել, որ աշխարհիկ պետության սկզբունքը՝ հանդիսանալով Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմք, չի կրում այնպիսի լայն և համապարփակ բնույթ, ինչպիսին, որ հանդիսանում է, սահմանադրական կարգի մյուս հիմքը՝ ժողովրդավարական պետությունը:

Պետության աշխարհիկությունը որոշում է պետության և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների հիմքերն ու սահմանները՝ հանդիսանալով պետություն-կրոն հարաբերությունների գործընթացում որպես ուղեցույց:

Այստեղ, սկզբունքային կարևորություն ունի նաև իշխանությունների բաժանման սկզբունքը: Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը բաժանված է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի, որոնք զսպումների և հակակշիռների մեխանիզմի օգնությամբ պետք է ապահովեն կամայականության և չարաշահումների բացառումը որևէ իշխանության ճյուղի կողմից: Իշխանությունների բաժանման սկզբունքը նպաստում է տարբեր կրոնական կազմակերպությունների իրավահավասարության ապահովման խթանմանը:

Հետևաբար, այն պետությունում, որտեղ ոչ միայն հռչակվում, այլ նաև փաստացի պահպանվում է իշխանությունների բաժանման սկզբունքը, կրոնական դոգմաները և կարգադրագրերը չեն կարող փոխարինել նորմատիվ իրավական ակտերին,

իսկ կրոնական կազմակերպությունները՝ պետական իշխանության մարմիններին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է[229]: «Բարձրագույն արժեք» եզրույթի իրավական բովանդակությունից բխում է, որ որևէ այլ արժեք կամ համակարգ չի կարող ավելի բարձր դասվել, քան ինքը՝ մարդն է[230]: Հետևաբար «բարձրագույն արժեք» հասկացությունը վերաբերելով մարդուն, նրա արժանապատվությանը, հիմնական իրավունքներին և ազատություններին կանխորոշում է մարդու գերակայություն, այլ ոչ թե պետության: Այս սկզբունքային մեկնակետից ելնելով՝ Սահմանադրությունը ամրագրում է ժամանակակից աշխարհի համամարդկային սկզբունքը, այն է՝ մարդը իր արժանապատվությամբ, իրավունքներով, ազատություններով և դրանց անշեղ իրացմամբ, հանդիսանում է ժողովրդավարական պետության բարձրագույն նպատակը: Ուստի պետական իշխանության բոլոր գործողությունները պետք է ուղղված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրագործմանը և պահպանմանը:

Մարդուն՝ որպես բարձրագույն արժեքի սահմանադրական ճանաչմամբ, Հայաստանի Հանրապետությունը ճանաչեց ժողովրդավարական հասարակարգի միջազգային պահանջները, հանձինս այնպիսի համաճանաչ միջազգային իրավական

---

[229] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 06.12.2015 փոփոխություն, ՀՀՊՏ 2015.12.21 /հատուկ թողարկում, Հոդ.1118:

[230] Տե՛ս **Մ.Հ. Մուրադյան**, Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր, Մաս 1, Եր., 2016թ. էջ՝ 51:

ակտերի, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միջազգային դաշնագիրը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ մարդու՝ որպես բարձրագույն արժեքի, նրա հիմնական իրավունքների և ազատությունների ճանաչումը ձևավորված է որպես նորմ-սկզբունք և նորմ-նպատակ: Ներկայումս ՀՀ Սահմանադրությունը հավասարապես պաշտպանում և երաշխավորում է ինչպես հավատացյալների, այնպես էլ աթեիստների իրավունքները՝ հռչակելով պետության աշխարհիկության սկզբունքը և տրամադրելով յուրաքանչյուրին խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը՝ որպես ժողովրդավարական հասարակարգի անկյունաքար, կանխորոշում է մարդու կրոնահավատամքային և կրոնամերժ գաղափարների ընտրության հնարավորությունը՝ դառնալով անհատի ինքնաճանաչման, ինքնադրսևորման, նրա ինքնության հաստատման անքակտելի տարրը: Այս իմաստով լիարժեք գաղափարական ազատություն կարող է երաշխավորել միայն աշխարհիկ պետությունը, որտեղ մարդը չի կարող ենթարկվել որևէ հետապնդման սեփական կրոնական պատկերացումների և համոզմունքների պատճառով:

Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է պետություն-կրոն հարաբերությունների միանական

հայեցակարգի մշակում[231], որը հաշվի կառնի հայ իրականության մեջ կրոնական և հակակրոնական ուղղվածության կառույցների ներգրավվածությունը, որոնք փաստացի կարևոր դերակատարություն ունեն պետության հասարակական կյանքում, նրանց ներուժի օգտագործմամբ կամրապնդի հասարակության բարոյական առողջացումը, ինչպես նաև սոցիալական, մշակութային և այլ խնդիրների համակողմանի լուծումը:

Սահմանադրական կարգի հոգևոր հիմքերի ոլորտում խղճի ազատությունը հանդիսանում է պետության՝ քաղաքացու հանդեպ հարգալից վերաբերմունքի համակարգաստեղծ պայման՝ անկախ նրա աշխարհայացքից: Աշխարհիկ պետությունում խղճի ազատության իրավունքի երաշխիքները հանդիսանում են տարբեր այլադավանների հանդեպ հանդուրժողական և հարգալից վերաբերմունքի գրավական:

Աշխարհիկ պետության սկզբունքը, որպես սահմանադրական կարգի հիմք, լրացնում է սահմանադրական այնպիսի սկզբունք, ինչպիսին է գաղափարախոսական բազմակարծությունը: Վերջինս իր իրավական ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդված 1-ին մասում. «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը»[232]: Այս իրավական նորմի բովանդակությունից հստակ երևում է, որ

[231]Տե՛ս **Ա. Լուսյան**, Հոգևոր-կրոնական դաշտի խնդիրները Հայաստանում, Կրոն և հասարակություն № 9, դեկտեմբեր, 2009թ., էջ՝ 10-22:
[232]Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 06.12.2015թ. փոփոխություն, ՀՀՊՏ 2015.12.21 /հատուկ թողարկում, Հոդ.1118:

Հայաստանի Հանրապետությունում արգելվում է պարտադիր գաղափարախոսության գոյության հնարավորությունը և երաշխավորվում է մարդու աշխարհայացքի ազատությունը:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում աշխարհիկ պետության երաշխավորումը անմիջականորեն առնչվում է մարդու՝ որպես բարձրագույն արժեքի այնպիսի հիմնարար իրավունքների և ազատությունների իրականացման համատեքստում, ինչպիսիք են հաղորդակցության ազատության, կարծիքի արտահայտման ազատության, ստեղծագործության ազատության, հավաքների ազատության, միավորումների ազատության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և ազգային ու էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքները:

Միաժամանակ, անհրաժեշտ է կարևորել աշխարհիկ պետության և գաղափարախոսական բազմակարծության սկզբունքների հարաբերակցության հիմքում ընկած դրանց փոխազդեցությունը և, միաժամանակ, փոխկապվածությունը բնութագրող ընդհանրությունները: Դրանք են.

1) հասարակության մեջ տարբեր կրոնական հայացքների բնականոն և խաղաղ գոյակցության հնարավորության ապահովում, երբ յուրաքանչյուր ոք իրավասու է ինքնուրույն կամ այլոց հետ ազատորեն ստեղծել և տարածել իր կրոնական հայացքները,

2) որևէ կրոնի նկատմամբ պարտադիր վերաբերմունք սահմանելու անթույլատրելիությունը՝ որպես գաղափարախոսական բազմակարծության սկզբունքի անհրաժեշտ երաշխիք,

3) հասարակական և կրոնական կազմակերպությունների գործունեության ազատության երաշխավորում,

4) կրոնական ատելություն և թշնամանք առաջացնող քարոզչության անթույլատրելիություն:

Անշուշտ, ներկայացված ընդհանրությունները բխում են ՀՀ Սահմանադրության 17, 41, 42 և այլ հոդվածների բովանդակությունից:

Ինչ վերաբերում է Սահմանադրության 1-ին անփոփոխ հոդվածով ամրագրված Հայաստանի Հանրապետության որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության բնութագրիչների և աշխարհիկ պետության սկզբունքի հարաբերակցության ու փոխգործակցության շրջանակներին, ապա անհրաժեշտ է նկատել, որ դրանք առանցքային նշանակություն ունեն ոչ միայն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կառուցման համար, այլև՝ աշխարհիկ պետության հռչակման համար:

Այսպես, աշխարհիկ պետության սկզբունքի փոխկապակցվածությունը Հայաստանի Հանրապետության հիմնական բնութագրիչներից մեկի՝ իրավական պետության սկզբունքի հետ բավական ակնհայտ է: Իրավական պետությունը՝ պետություն է, որտեղ ամրագրված է իրավունքի գերակայության սկզբունքի իրագործման կառուցակարգը: Որպեսզի պետությունը լինի իրավական, բավարար չէ միայն սահմանել իրավական օրենքներ, պետք է նաև ձևավորել հասարակության անդամների իրավագիտակցության մակարդակ, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի կհասկանա իրավունքի կենսագործման կարևորությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ճանաչված աշխարհիկ պետության սկզբունքը կարող է իրացվել, «միս ու արյուն» ստանալ միայն իրավական պետությունում:

Պրոֆեսոր Ս.Ա. Ավագյանի կարծիքով կրոնական կազմակերպությունների պետությունից առանձնացվածությունը և օրենքի առջև հավասարությունը ձեռնտու է ոչ միայն պետությանը, այլև հենց իրենց՝ կրոնական կազմակերպություններին: Նման իրողության պայմաններում է ապահովվում նրանց իրավահավասար դիրքը հասարակության և պետության մեջ»[233]:

Ղեկավարվելով օրենքի առջև կրոնական կազմակերպությունների հավասարության սկզբունքով, պետությունը նրանց համար ստեղծում է միասնական իրավական դաշտ՝ սահմանելով որոշակի իրավունքներ և պարտավորություններ: Օրենքը հանդիսանում է կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակի միակ կարգավորողը:

Ընդգծենք նաև, որ կրոնական կազմակերպությունների և պետության տարանջատումը լիովին թույլատրում է երկկողմանի համագործակցությունը պետության և տարբեր դավանաբանական ուղղությունների միջև:

Հայաստանի Հանրապետության հաջորդ կարևոր բնութագրիչը դա պետության ինքնիշխանությունն է, որն ընկալվում է նաև որպես սահմանադրական կարգի հիմնարար սկզբունք: Այն արտահայտվում է պետական

---

[233] Տե՛ս **С.А. Авакьян**, Свобода вероисповедания как конституционно-правовой институт // Вестник Московского университета. Серия 11: Право. – 1999. № 1. էջ՝ 7:

իշխանության գերակայության, անկախության և ինքնուրույնության մեջ: Միևնույն ժամանակ, պետական իշխանությունը պարտավոր է իր գործունեությունը իրականացնել՝ ղեկավարվելով օրենսդրությամբ: Այս իմաստով, եթե կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը երաշխավորվում է Հայաստանի Հանրապետությունում, ապա այդ կազմակերպությունների ստեղծման ու գործունեության կարգը պետք է սահմանվեն օրենքով: Հետևաբար, Հայաստանի Հանրապետությունում բացված տարբեր օտարերկրյա կրոնական կազմակերպությունների ներկայացուցչությունները պետք է ենթարկվեն ոչ թե օտար պետության, այլ Հայաստանի Հանրապետության իրավական կարգադրագրերի պահանջներին: Հակառակ պարագայում, կխախտվի Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան պետության սահմանադրական կարգի կարևորագույն սկզբունքի իմաստն ու նշանակությունը:

Հիմնվելով վերը նշվածի վրա, պետության ինքնիշխանության և աշխարհիկ պետության սկզբունքների հարաբերակցության տեսանկյունից, անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ մոտեցումները. ա) արտաքին ինքնիշխանության դրսևորում, երբ օտարերկրյա պետություններում գրացված կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը երաշխավորվում է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդված) և բ) ներքին ինքնիշխանության դրսևորում, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում կրոնական կազմակերպությունների ստեղծման ու գործունեության կարգը

սահմանվում է օրենքով (ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի 4-րդ մաս):

Այնուամենայնիվ, պետության ինքնիշխանության և աշխարհիկ պետության սկզբունքների հարաբերակցության հիմքում անհրաժեշտ է կարևորել դրանց փոխգործակցությունը բնութագրող հետևյալ հիմնական հատկանիշները, որոնք բխում են Սահմանադրության 1, 17 և 41-րդ հոդվածների բովանդակությունից՝

ա) կրոնական կազմակերպությունների գործունեության նկատմամբ ինքնիշխան պետության իշխանության գերակայությունը,

բ) կրոնական կազմակերպություններից պետության ինքնիշխան իրավունքների իրացման անկախության առկայություն,

գ) կրոնական կազմակերպությունների իրավահավասարությունը՝ անկախ այդ կազմակերպության ստեղծման ու գործունեության վայրից,

դ) սահմանադրական կարգավորումների մակարդակում կրոնական կազմակերպությունների ինքնավարությամբ օժտվածությունը:

Աշխարհիկ պետության սկզբունքը սերտ փոխգործակցության մեջ է նաև Հայաստանի Հանրապետության հաջորդ կարևոր բնութագրիչի՝ սոցիալական պետության սահմանադրական կարգի սկզբունքի հետ: Այս առնումով,հարկ է ընդգծել,որ պետության և կրոնական կազմակերպությունների միջև համագործակցությունը տեղի է ունենում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բարեգործությունը, տարբեր սոցիալական ծրագրերի իրականացումը, մշակութային և պատմական ժառանգության վերականգնումն ու հարստացումը, ընտանիքի, մայրության և

մանկության սատարումը, ազատազրկման վայրերում խղճի ազատության ապահովումն ու խթանումը և այլն:

Անհրաժեշտ է նկատել, որ սոցիալական պետության ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում բավականին սերտ կապված է կրոնական կազմակերպությունների բարեգործական գործունեության հետ: Անկախության նվաճումից ի վեր ներպետական իրավունքում տեղ են գտել այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են՝ «Բարեգործության մասին», «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքները:

Կրոնական կազմակերպությունները զբաղվելով բարեգործությամբ, ներգրավված լինելով տարբեր սոցիալական նախաձեռնություններում, օգնելով հասարակության կարիքավոր անդամներին, զարգացնում և ամրապնդում են սոցիալական պետությունը՝ որոշակի դեր խաղալով սոցիալական անհավասարության զսպման գործում: Այս իմաստով, հատկապես ողջունելի են Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու իրականացրած բարեգործական աշխատանքները, բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելուն ուղղված ջանքերը[234] և այլն[235]:

---

234 Օրինակ, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին իրականացնում է «Մենք մեր զինվորի կողքին ենք» խորագիրը կրող ծրագիրը, որի շրջանակներում նյութական և բարոյական աջակցություն է ցուցաբերվում հայրենյաց զինվորների ընտանիքներին և հատկապես մարտական գործողությունների ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին: Ծրագրին իր մասնակցությունն է ցուցաբերում ՀՀ Պաշտպանության նախարարությունը:

Հայաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների բարեգործության ծավալման միջոցով սոցիալական պետության կառուցումը կարող է իրականացվել հետևյալ պայմանների դեպքում.

1) գաղափարախոսական և քաղաքական նպատակներով բարեգործության ծավալման անթույլատրելիությունը,

2) պետության կողմից վերահսկողական կառուցակարգերի գործադրում՝ բարեգործության բնագավառում իրավախախտումները բացառելու և կանխարգելելու նպատակով,

3) բարեգործության ընթացքում կրոնական հայացքների թելադրման, ինչպես նաև կրոնական համոզմունքի հիմքով սոցիալական օգնություն չտրամադրելու անթույլատրելիությունը,

4) կրոնական կազմակերպությունների կողմից ցանկացած տեսակի բարեգործության ծավալման հրապարակայնության ապահովում:

Այսպիսով, ընդհանրացնելով սահմանադրական կարգի մյուս սկզբունքների հետ աշխարհիկ պետության հարաբերակցության հիմնախնդիրների վերաբերյալ կատարված վերլուծության արդյունքները, կարելի ներկայացնել հետևյալ մոտեցումները.

ա) ՀՀ իրավական համակարգի արդիականացման պայմաններում դժվար է հաստատել աշխարհիկ պետության սկզբունքի ամբողջական իրացումը՝ տվյալ եզրույթի ամբողջ իմաստով, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում պետության և կրոնական կազմակերպությունների միջև պետական

---

[235] Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու իրավահարաբերությունների հիմնահարցերին կանդրադառնանք հետազոտության հետագա պարագրաֆներում:

քաղաքականության հստակ ուրվագծման բացակայությամբ,

բ) աշխարհիկ պետության և սահմանադրական կարգի տարբեր սկզբունքների միջև փոխգործակցությունն ու իրականացումը պահանջում է համակարգային մոտեցում հատկապես սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում:

## 3.2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների իրավական հայեցակետերը պետության աշխարհիկության սկզբունքի իրականացման համատեքստում

Խորհրդային Միության փլուզումը և Հայաստանի նորանկախ Հանրապետության հիմնադրումը աշխարհաքաղաքական, տնտեսական, իրավական նոր հնարավորությունների և մարտահրավերների մեկնարկ ազդարարեցին: Այս շրջադարձային իրողությունների և դրա արդյունքում ձևավորված նոր իրավահարաբերությունների պայմաններում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին ձերբազատվեց աստվածամերժության սահմանափակումներից և, ի թիվս այլ կրոնական կառույցների՝ ազատ գործունեության հնարավորություն ստացավ:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի անկախության մասին հռչակագրի 9-րդ կետով սահմանվեց, որ. Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է՝ խոսքի, մամուլի, խղճի ազատություն, այդուհանդերձ որևէ կերպ անդրադարձ չկատարվեց Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու առանձնահատուկ

կարգավիճակը բնութագրող տարրերին և, առհասարակ, «եկեղեցի» եզրույթի նշանակությանը:

Միայն, 1991 թվականին ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկայով կարևորվեց Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքի շինության և ազգապահպանության գործում, արդյունքում, ՀՀ Գերագույն խորհուրդը ճանաչեց նրան որպես ազգային եկեղեցի՝ վերապահելով մի շարք արտոնություններ[236]:

Պետության և եկեղեցու հարաբերությունների իրավական կանոնակարգման օրակարգային անհրաժեշտությունը կարևորվեց նաև Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու պաշտոնական դիրքորոշումներում, մասնավորապես՝ Վեհափառ Հայրապետի անդրանիկ Կոնդակում նշվում էր. «Անկախ ազգային պետականութեան պայմաններում անհրաժեշտօրէն նոր որակ են ենթադրում Հայ Եկեղեցու եւ Հայոց պետութեան յարաբերութիւնները՝ իրաւական հիմքերով ամրագրուած»[237]:

Թեև պետություն-եկեղեցի հարաբերություններում ունեցած որոշակի առաջընթացին, այդուհանդերձ, դեռևս շարունակում էր առկախ մնալ 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ

---

236 Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» (ընդունվել է՝ Ն-0333-1, 17.06.1991թ.: Սկզբնաղբյուրը՝ http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2041&lang=arm):

237 Տե՛ս Խմբագրական, (2000) Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անդրանիկ Կոնդակը. Էջմիածին. Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԾԶ (Բ), էջ՝ 3-9:

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու դերի արժևորման և պատշաճ գնահատման խնդիրը:

Ընդգծելով ազգային եկեղեցու նկատմամբ ցուցաբերած պետական ոչ համարժեք վերաբերմունքը՝ առանձին հեղինակներ որպես ակնարկ նկատեցին, որ «ամեն ինչ ազգային է և համազգային, բացի... Հայ Առաքելական Եկեղեցուց»[238]:

Միայն 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը փարատեց հիշյալ մտահոգությունները և սահմանադրական կարգավորումների արդյունքում մասնավորապես հռչակվեց, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում (հոդվ. 8.1, մաս 2), արդյունքում, սկիզբ դրվեց «ազգային եկեղեցու» սահմանադրաիրավական հատուկ կարգավիճակին բնորոշ սահմանադրական ինստիտուտի սահմանմանը[239]:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության նույն հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումների շրջանակում սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով: Սահմանադրական հիշյալ կարգավորման արդյունքում ՀՀ Ազգային ժողովը

---

[238] Տե՛ս **Պ. Սերոբյան**, Հայ առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը, Քրիստոնեություն և իրավունք, Միջազգային խորհրդաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2001թ., էջ՝ 135:

[239] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (փոփոխություններով), ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով: Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005թ. նոյեմբերի 27-ի ՀՀ հանրաքվեով: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2005.12.05 հատուկ թողարկում, հոդ. 1426:

2007 թվականի փետրվարի 22-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը՝ ապահովելով պետություն-եկեղեցի իրավական փոխգործակցության որակապես նոր կառուցակարգերի երաշխավորում (հոդվ.՝ 8.1):

Հարկ է նշել, որ նույն խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 8.1-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված եկեղեցու՝ պետությունից անջատ լինելու սկզբունքը վկայում է Հայաստանի Հանրապետության՝ որպես աշխարհիկ պետության մասին, ինչն իր հերթին նշանակում է հասարակական կյանքի ուղղորդում դեպի աշխարհիկ արժեքները՝ առանց հավատացյալների իրավունքներն ու շահերն անտեսելու[240]:

Նկատենք նաև, որ պետության աշխարհիկության սկզբունքը նախքան սահմանադրաիրավական ամրագրում ստանալը իր արտահայտությունն էր գտել դեռևս «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում, որի համակարգային դիտարկման արդյունքների հիման վրա անհրաժեշտ է կարևորել հետևյալ մոտեցումները, որ պետությունը՝ ա) իրավունք չունի քաղաքացուն հարկադրել դավանելու այս կամ այն կրոնը, բ) չի միջամտում եկեղեցու և կրոնական կազմակերպությունների՝ օրենքին համապատասխանող գործունեությանը և ներքին կյանքին, արգելում է եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների կառուցվածքում որևէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունները կատարող անձի գործունեություն, գ) արգելում է եկեղեցու

---

[240] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ.Գ. Հարությունյանի, Ա.Գ. Վաղարշյանի**, Եր., 2010թ., էջ՝ 123:

մասնակցությունը պետական կառավարմանը, եկեղեցու և կրոնական կազմակերպությունների վրա չի դնում որևէ պետական ֆունկցիա (հոդվ. 17)[241]:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հետ հարաբերությունները կառուցեց, մի կողմից՝ անջատական մոդելի սկզբունքով, այսինքն՝ Սահմանադրության մեջ ամրագրելով պետության աշխարհիկության սկզբունքը, մյուս կողմից՝ նույն եկեղեցու հետ սերտ համագործակցության ձևաչափ որդեգրեց՝ վերապահելով նրան իր կարգավիճակին համապատասխան իրավասություն (կոոպերացիոն մոդել)[242]:

Սույն աշխատանքի շրջանակում մեր հետազոտության հիմնական նպատակն է պետություն-եկեղեցի հարաբերությունների համալիր վերլուծության խորապատկերում վերարժևորել Հայաստանի Հանրապետությունում աշխարհիկ պետության հայեցակարգի անհրաժեշտությունը:

Ասվածի համատեքստում անհրաժեշտ է առաջադրել հետևյալ խնդիրները՝

ա) հստակեցնել սահմանադրական նոր կարգավորումների լույսի ներքո պետություն-եկեղեցու նոր հարաբերությունների շրջանակը,

բ) առաջադրել «ազգային եկեղեցի» եզրույթի սահմանման հեղինակային ձևակերպումը:

---

[241] Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», հոդ.՝ 17-րդ, (ընդունվել է՝ Ն-0333-1, 17.06.1991թ., Սկզբնաղբյուրը՝ http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2041&lang=arm):

[242] Տե՛ս **Վ.Հ. Սայադյան**, Կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն ԺԲ.00.02 եր., 2015թ., էջ՝ 119: Տե՛ս, նաև **М.А. Булавина,** К вопросу о правовом содержании понятия «светское государство» Известия МГТУ «МАМИ» № 2(20), 2014, т. 5, էջ՝ 168:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական հետագա գործընթացների շրջանակում Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների արդյունքում «պետություն-եկեղեցի» եզրույթի փոխարեն շրջանառության մեջ դրվեց «պետություն-կրոնական կազմակերպություններ» բառակապակցությունը, որի սահմանադրական ձևակերպումը ունեցավ հետևյալ բովանդակությունը, որ՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը, և կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից (հոդվ.17,մասեր 1-2):

Կարծում ենք,որ այս փոփոխությունն առավել արդարացված է այն հիմնավորումից ելնելով,որ՝ ոչ բոլոր կրոնական ուսմունքներն են փոխկապակցվում «եկեղեցի» եզրույթի հետ: Անշուշտ, նախկին սահմանադրաիրավական ձևակերպումների շրջանակում՝ «եկեղեցի» եզրույթի տակ նկատի էր ունեցվում ինչպես Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին, այնպես էլ մնացած բոլոր կրոնական կազմակերպությունները:

Սակայն, այդպիսի իրավակարգավորումների պարագայում «եկեղեցի» հասկացությունը բովանդակային իմաստով վերացական բնույթ ուներ,քանի որ ավանդույթի ուժով փոխառվել էր Խորհրդային Միության հասկացութային ապարատից, որտեղ չկային կրոնական կազմակերպություններ, այլ կային միայն կրոնական տարբեր ուղղություններ դավանող «եկեղեցիներ»: Հետևաբար, այս պարագայում, «կրոնական կազմակերպություն» եզրույթի

գործածությունը «եկեղեցի» եզրույթի փոխարեն ավելի արդարացված էր:

Հարկ է նշել, որ մասնագիտական հետազոտությունների շրջանակում տեսակետներ են արտահայտվել, որ սահմանադրաիրավական կարգավորումների մակարդակում «եկեղեցի» եզրույթի փոխարինումը «կրոնական կազմակերպություններ» հասկացությամբ, ինքնին կարող է նախադրյալներ ստեղծել հենց պետության աշխարհիկության սկզբունքի վերացման համար[243]: Ավելին, փորձագիտական եզրահանգումներում, նույնիսկ կասկածի տակ է դրվում Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության առկայությունը[244], կամ անհարկի վերլուծությունների արդյունքում հիմնավորվում այն թեզը, ըստ որի՝ եկեղեցին չի կարող անջատ լինել պետությունից[245]:

Այս համատեքստում հարկ է նկատել, որ 2017 թվականի հունիսի 1-ից իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում շրջանառության մեջ դրված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերում կատարվել են հիմնարար փոփոխություններ, որոնց արդյունքում որոշակի

[243] Տե՛ս, օրինակ Կրոնի և հավատամքի ազատության իրավունքի հիմունքներով խտրականությունը Հայաստանում, զեկույց, 2015թ.: Սկզբնաղբյուրը՝ http://religions.am/article/:

[244] Տե՛ս Ս. Դանիելյանի «Հայաստանն այլևս աշխարհիկ երկիր չէ» վերտառությամբ հոդվածը (27.01.2018թ.): Սկզբնաղբյուրը՝ http://religions.am/article/:

[245] Տե՛ս ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդության 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսության ժամանակ ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հայտարարությունը: Սկզբնաղբյուրը՝ https://news.am/arm/news/425532.html:

իրավական նորմեր նոր բնույթի ձևակերպումներ են ստանում:

Այսպես, օրինակ, նոր վերտառությամբ շրջանառված «Մտքի, խղճի, կրոնի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է,որ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները պետք է կարգավորվեն բացառապես «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով»:

Իսկ, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին»գործող օրենքի 6-րդ հոդվածից առաջարկվել է հանել «Եկեղեցին համարվում է կրոնական կազմակերպություն» դրույթը: Այս փոփոխությանը համարժեք փոփոխություն է առաջարկվում կատարել «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին»ՀՀ օրենքում՝ ուժը կորցրած ճանաչելով՝ «Հայաստանի Հանրապետության և Եկեղեցու միջև ընդհանուր հարաբերությունները կարգավորում էր «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով» դրույթը[246]:

Այս նոր իրավակարգավորումների համատեքստում վիճահարույց է դարձել այն հարցը, թե արդյո՞ք Հայաստանյայց առաքելական սուրբ

[246] Տե՛ս ՀՀ օրենքի նախագիծը «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին: Սկզբնաղբյուրը՝ https://www.e-draft.am/projects/246/about:

եկեղեցին համարվում է կրոնական կազմակերպություն, թե ոչ: Այս հարցադրումը ինքնին փոխկապակցվում է Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սահմանադրական կարգի սկզբունքի հետ: Ավելին, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես կրոնական կազմակերպության իրավական կարգավիճակը համահավասար է մնացած կրոնական կազմակերպությունների հետ[247]:

Ելնելով պետության և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների համատեքստում Սահմանադրության նորմերի համարժեք մեկնաբանման հրամայականից՝ պրոֆեսոր Գ. Դանիելյանը արտահայտել է այն տեսակետը, ըստորի «կրոնական կազմակերպություն» եզրույթը ունի երկակի բնորոշում՝ այն է. ա) «կրոնական կազմակերպությունը» պետք է դիտարկել բառի հավաքական իմաստով՝ անկախ տվյալ «կրոնական կազմակերպության» կարգավիճակից և բ) սույն եզրույթը հարկ է մեկնաբանել առավել սահմանափակ իմաստով՝ որպես կազմակերպաիրավական տեսակ[248]:

Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես «ազգային եկեղեցու» սահմանադրական կարգավիճակը չպետք է նեղ իմաստով նույնականացնել «կրոնական կազմակերպություն» հասկացության իրավական բովանդակության և

---

[247] Տե՛ս Եվրասիահամագործակցության հիմնադրամի տնօրեն Գ. տեր-Գաբրիելյանին ուղղված Արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ն. Խաչատրյանի 24.07.2017թ. գրությունը: Սկզբնաղբյուրը՝ http://am.epfarmenia.am/wp-content/uploads/2017/07/FoRB-Law_-MoJ-clarification-letter.pdf:

[248] Տե՛ս **Գ. Դանիելյան**, Մտքի, խղճի և կրոնի ազատության կառուցակարգային և իրավական երաշխիքները ՀՀ Սահմանադրությունում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Եր., 2017թ., № 3 (24), էջ՝ 25-41:

կազմակերպաիրավական տեսակի հետ: Լայն իմաստով, այո, ազգային եկեղեցին կրոնական կազմակերպություն է՝ իր գործունեության հիմքում ունենալով հոգևոր (կրոնական) նպատակներ և գործառույթներ:

Այս մոտեցմամբ պայմանավորված՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին մյուս բոլոր կրոնական կազմակերպությունների հետ միասին առանձնացված է պետությունից՝ ուղղակիորեն հաստատելով վերջինիս աշխարհիկ բնույթը: Սակայն, անընդունելի է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես Սահմանադրությամբ արդեն իսկ ճանաչված ազգային եկեղեցու իրավասուբյեկտությունը և հայ ժողովրդի հոգևոր կյանքում դրա բացառիկ առաքելությունը պայմանավորել ու կախման մեջ դնել օրենքով նախատեսված ընթացակարգերից՝ մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է նույն եկեղեցու ստեղծման իրավահարաբերության՝ օրենքի ուժով կարգավորվելու հնարավորության մասին (Սահմանադրության 41-րդ հոդվ.,մաս 4):

Այստեղից կարելի է եզրակացնել, որ կրոնական կազմակերպությունների ստեղծման կարգն օրենքով սահմանելու սահմանադրաիրավական պահանջը (41-րդ հոդված, 4-րդ մաս), չպետք է վերաբերի Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն, քանի որ վերջինս՝ որպես «ազգային եկեղեցու» սահմանադրական կարգավիճակ ունեցող ինստիտուտ, չի դիտարկվում «նեղ իմաստով» կամ դասական իմաստով որպես կրոնական կազմակերպություն:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ վերոհիշյալ սահմանադրական կարգավորման մեջ տեղ գտած կրոնական կազմակերպությունների իրավահավասարության սկզբունքը, ըստ էության,

նույնպես չի վերաբերում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն:

Թերևս, անհրաժեշտ է հաշվի առնել կրոնական որևէ կազմակերպության պատմական դերի ճանաչման վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի, Եվրախորհրդի մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Կրոնի կամ համոզմունքի ազատության հարցերով խորհրդատվական խորհրդի համատեղ եզրակացության պահանջը, ըստ որի՝ նման ճանաչումը անթույլատրելի չէ, եթե այն խտրականություն չի առաջացնում հատուկ դերակատարում չունեցող այլ կրոնի հետևորդ համայնքների համար[249]: Ընդ որում, անկախ այն հանգամանքից, թե կրոնական կազմակերպությունների իրավահավասարության սահմանադրական սկզբունքը վերաբերում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն, թե ոչ, այնուամենայնիվ, տվյալ սկզբունքը համարժեքորեն չի կարելի գնահատել որպես խիստ իրավահավասար՝ դոգմատիկ իմաստով, մյուս կրոնական կազմակերպությունների նկատմամբ[250]:

Սակայն, ասվածի համատեքստում հարկ է կարևորել, որ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն՝ որպես ազգային եկեղեցի որակելու սահմանադրական առաքելությունը և նրա հետ առանձնահատուկ ու գործընկերային հարաբերությունների հաստատումը,

---

249 Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի, Եվրախորհրդի մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Կրոնի կամ համոզմունքի ազատության հարցերով խորհրդատվական խորհրդի թիվ 530/2009 համատեղ եզրակացությունը, էջ՝ 11, Ստրասբուրգ, 23-ը հունիսի 2009թ. CDL-AD(2009)036: Աղբյուրը՝ https://www.e-gov.am/u_files/file/kron/1%20Joint-opinion-AJ.pdf:

250 Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ.Գ. Հարությունյանի, Ա.Գ.Վաղարշյանի**, Եր., 2010թ., էջ՝ 129:

գնահատականն է այն իրողության, որ այդ եկեղեցին ավանդաբար կատարել է հայության ազգային դիմագծի պահպանման գործառույթը և այսօր էլ շարունակում է ազդեցիկ հեղինակություն վայելել քրիստոնյա հասարակության արժեբանական և իմացաբանական ընկալումներում:

Դարերի փորձով հաստատված է, որ հատկապես պետության բացակայության պայմաններում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին ստանձնել է պետությանը բնորոշ գործառույթներ՝ անգամ օրենքների մշակումը, դատավարական գործերի ու միջպետական հարաբերությունների իրականացումը և այլն: Միաժամանակ, պետականության բացակայության պայմաններում հայ ժողովրդի փաստացի ղեկավար համարվող Հայոց հայրապետի ընտրությունը կատարվում էր ոչ միայն Հայաստանի, այլև սփյուռքի հայկական գաղթօջախների ներկայացուցիչների կողմից[251]:

Այդ իմաստով, ազգային եկեղեցու սահմանադրաիրավական կարգավիճակի սահմանումը չի խոչընդոտում այլ կրոնական կազմակերպությունների ազատ գործունեությանը, այլ սոսկ ընդգծում է եկեղեցու ազգային բնույթը և բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում:

Անշուշտ, աշխարհի մի շարք պետություններում գոյություն ունեն ազգային եկեղեցիներ, (Բուլղարիայում՝ Արևելյան

---

[251] Տե՛ս **Ծ. վարդ. Անանյան**, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և ՀՀ օրենսդրությունը (քննարկման նյութեր) Սբ. Էջմիածին, 2013թ., էջ՝ 8:

ուղղափառ հավատի եկեղեցին, Ռուսաստանում, Վրաստանում, Հունաստանում՝ Ուղղափառ եկեղեցին, Անգլիայում՝ Անգլիական եկեղեցին, սկանդինավյան պետություններում՝ Ավետարանական-լյութերական եկեղեցին (Folkekirken՝ «Ժողովրդական եկեղեցի») և այլն), որոնք իրավական կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված՝ հստակ տարանջատվում են մյուս կրոնական կազմակերպություններից: Սակայն, այդ պետություններում սահմանադրական ամրագրում չի ստացել «ազգային եկեղեցի» եզրույթը, հետևաբար և դրանից բխող մեկնաբանություններն ու բացատրությունները:

Սահմանադրաիրավական կարգավորումների մակարդակում «ազգային եկեղեցի» եզրույթն առկա է 1963 թվականի Դանիայի Սահմանադրությունում, որտեղ նշվում էր, որ «Ավետարանական-լյութերական եկեղեցին դանիական ազգային եկեղեցի է և պահվում է պետության հաշվին»[252]:

Կամ, առկա են մի շարք աշխարհիկ պետություններ, որոնք իրենց հիմնական օրենքներում ճանաչել և բացառիկ առաքելություն են վերապահել ավանդական եկեղեցիներին: Օրինակ, Արևելյան Թիմորի Սահմանադրության 11-րդ հոդվածում նշվում է, որ «Պետությունը ճանաչում և բարձր է գնահատում Կաթոլիկ եկեղեցու մասնակցությունը Արևելյան Թիմորի ազգային ազատագրության գործում»[253]:

---

[252] Տե՛ս Աթեիզմ և կրոն, հարցեր և պատասխաններ, **Վ.Ն. Բասիլով, Ա.Վ. Բելով, Գ.Ա Գաբինսկի**, և ուրիշներ.- Եր., 1988թ., էջ՝ 46, Տե՛ս, նաև **Վ.Գ. Ենգիբարյան, Ա.Ս. Ղախոյան**, Եկեղեցի պետություն և հասարակություն, Եր., 2009թ., էջ՝ 10:

[253] Տե՛ս Конституция Демократической Республики Восточный Тимор от 20 мая 2002 года. Սկզբնաղբյուրը՝ http://worldconstitutions.ru/?p=336:

Սփյուռքահայ պրոֆեսոր Գ. Տերտերյանը զուգահեռներ տանելով ֆրանսիական և անգլո-սաքսոնյան աշխարհիկ մտածողությունների միջև, նշել է, որ ֆրանսիական աշխարհիկ մտածողությունը գնաց եկեղեցուն հակադրվելու ուղղով, մինչդեռ, անգլո-սաքսոնականը ընտրեց «պետություն-եկեղեցի» հարաբերու-թյունների համադրման լիակատար համաձայնության (կոնսենսուսային) ձևաչափը[254]: Համոզիչ է թվում նաև իրավագիտության դոկտոր Թ. Սամուելյանի արտահայտած տեսակետը առ այն, որ Սահմանադրությունը չէ, որ պետք է կանխորոշի հասարակության վրա եկեղեցու ունեցած ազդեցությունը: Նա զուգահեռներ տանելով եկեղեցին պետությունից անջատելու՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի փորձի միջև եզրակացնում է, որ ԱՄՆ-ի պարագայում աշխարհիկության սկզբունքը նպաստեց և պետության, և եկեղեցու բարգավաճմանը, երկուստեք ազատ գործունեության դաշտի ընդլայնմանը[255]:

Հայաստանի Հանրապետությունը հոգևոր (կրոնական) կազմակերպու-թյունների առանձնացման հետ մեկտեղ «պետություն-եկեղեցի» հարաբերություններում որդեգրել է նաև ավանդույթի ուժով ազգային եկեղեցու հետ հարաբերությունների համադրման ձևաչափը, որը, ինչպես արդեն նշվել է, բնորոշ է արդի ժողովրդավարական, իրավական, աշխարհիկ մի շարք պետություններին: Այս առումով տեղին է

---

[254] Տե՛ս **Գ. Տէրտէրեան**, Եկեղեցի-Պետութիւն յարաբերութիւններ եւ նոր աղանդաւորականներ, ներածական ակնարկ, Պէյրութ, 2003թ., էջ՝ 5:

[255] Տե՛ս **Թ.Զ. Սամուէլեան**, Պետությունից անջատ եկեղեցու ներգործությունը ԱՄՆ-ի հասարակության վրա, Հայոց եկեղեցի և պետություն, 2-5.03.2000թ., Էջմիածին-Օշական-Ծաղկաձոր, Միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2000թ., էջ՝ 384-392:

մեջբերել Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ Կոնդակից մի հատված, ըստ որի՝ «Հայ Եկեղեցին եւ Հայոց պետութիւնը Հայ ժողովուրդն է իր ամբողջութեան մէջ: Ազգային կեանքի հոգեւոր եւ աշխարհիկ երկու այս կառոյցների միմեանց լրացնող ներդաշնակ միութեամբ միայն ի զօրու ենք կերտել բարգաւաճ ու բարօր գալիքը մեր ժողովրդի»[256]:

«Պետություն-եկեղեցի» հարաբերությունների իրավական կարգավորման և դրա հետագա կատարելագործմանն ուղղված ձգտումները արտահայտվում են ոչ միայն վերը նշված պաշտոնական եկեղեցական փաստաթղթերում, այլև դրսևորվում են այդ հարաբերությունների ինստիտուցիոնալ կապի ձևավորման մեջ[257]: Ասվածի տրամաբանությունից ելնելով պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին չի կարող մեկուսանալ պետությունից և հասարակությունից և դասական իմաստով անջատ գործել: Ասվածի համատեքստում արդարացված է պրոֆեսոր Է. Դանիելյանի այն տեսակետը, համաձայն որի. «Հայ Առաքելական եկեղեցու տեղը և նշանակությունը հասարակության կյանքում պետք է դիտել պետությունից ոչ թե անջատ տեսնելու հրամայականով, այլ որպես Հայ ազգի և պետության հոգևոր և բարոյական արժեքների պահպանման երաշխավոր, ելնելով դարեր շարունակ

---

[256] Տե՛ս **Ա. Քալաշյան**, Եկեղեցի-պետություն փոխհարաբերության՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ըմբռնումները, Էջմիածին, 2012թ., Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, ԿԸ (Ձ), էջ՝ 41-70:

[257] Այդ ջանքերը առավել նպատակային և կազմակերպված դարձնելու համար Վեհափառ Հայրապետի 10.11.2008թ. հրամանով Մայր Աթոռում բացվեց «Եկեղեցի-պետություն հարաբերությունների» գրասենյակը:

եկեղեցու հոգևոր ազգապահպան գործունեությունից»[258]:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն է ավանդական կրոնական կազմակերպությանը վերապահել «ազգային եկեղեցու» կարգավիճակ: Սակայն, ոչ ՀՀ Սահմանադրությամբ և ոչ էլ իրավական այլ ակտերով չի հստակեցվում «ազգային եկեղեցի» եզրույթի իրավական իմաստն ու նշանակությունը, որը մեր կարծիքով Սահմանադրությամբ ամրագրված իրավական որոշակիության սկզբունքի ոչ լիարժեք կենսագործման մասին վկայող արատավոր միտում է:

Այդ իմաստով անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու «ազգային» բովանդակության և նկարագրի մասին հարցադրումներ բազմիցս արվել են, որոնք, հիմնականում ունեցել են քաղաքական, կրոնական կամ ազգագրական նշանակություն[259]: Սակայն,

---

[258] Տե՛ս **Է. Դանիելյան**, Հայ նախարարական համակարգի և Հայ Առաքելական Եկեղեցու ազգապահպան նշանակությունը վաղ միջնադարում, Հայոց եկեղեցի և պետություն, 2-5.03.2000թ., Էջմիածին-Օշական-Ծաղկաձոր, Միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2000թ., էջ` 76:

[259] Եկեղեցու ազգային բնույթը միանշանակ չի ընկալվել և երբեմն բանավեճերի ու տարընթերցումների առիթ է տվել: Խնդրի քննարկման վերաբերյալ անհամաձայնությունները սրվել են հատկապես 19-րդ դարի 80-ականներին: Այսպես, «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին տարբերում էր «ազգային» և «տիրապետող» եկեղեցի եզրույթները: Տիրապետող եկեղեցին` կրոնի ճշմարտությունները ժողովրդին քարոզելու իրավունք ունեցող միակ եկեղեցին է: Նրա կարծիքով Հայ եկեղեցին միաժամանակ և տիրապետող է և ազգային, քանի որ եկեղեցական ծեսերը կատարվում են ազգային լեզվով, բացի այդ եկեղեցին ունի իր ազգային կազմակերպությունները: Հակադրվելով այս մոտեցմանը «Մեղու Հայաստանի» թերթը գրում էր, որ ազգային լեզվով ծես անելը դեռևս Եկեղեցու ազգայնացում չէ, ինչպես որ օտար ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները դեռևս ազգային գրականություն չէ: Տե՛ս, առավել մանրամասն **Ա. Սարգսյան**, Ժամանակակից Հայ եկեղեցին (կրոնագիտական-ազգագիտական վերլուծություն) Եր., 1999թ., էջ` 111-112:

հիմնահարցի ուսումնասիրման իրավական կողմն, ըստ էության, մնացել է լուսանցքում[260]: Հարկ է նկատել, որ «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» մասին օրենքը սույն հիմնահարցի վերաբերությամբ, նույնությամբ կրկնել է Սահմանադրությամբ հռչակված ազգային եկեղեցուն վերաբերող իրավանորմը[261]:

Միաժամանակ, կարծում ենք, որ սահմանադրաիրավական ամրագրում ստացած Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու ազգային բնույթը առավել ապես պայմանավորված է հայ ժողովրդի կյանքում ունեցած նրա պատմական առաքելությամբ և ներկայումս այն շարունակական դարձնելու պատրաստակամությամբ: Այն ազգային եկեղեցի է, քանի որ, երբեք իր առջև խնդիր չի դրել սեփական դավանանքը կամ վարդապետությունը այլ ազգիների մեջ սերմանելու, նրանց իր շարքերը ներգրավվելու, այլ միայն ստանձնել է հայ ազգի հոգևոր բարենորոգչական, իսկ պատմական ճակատագրի բերումով՝ նաև ազգային օրակարգային հիմնահարցերի լուծման առաքելությունը:

Հետևաբար, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին սոսկ կրոնական կազմակերպություն չէ,

[260]Թերևս միայն պրոֆեսոր Գ. Դանիելյանն է անդրադարձել «ազգային եկեղեցու»՝ որպես Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն տրված սահմանադրաիրավական կարգավիճակի և առանձին իրավական եզրույթի սահմանման հիմնահարցերին: Տե՛ս **Գ. Դանիելյան**, «Մտքի, խղճի և կրոնի ազատության կառուցակարգային և իրավական երաշխիքները ՀՀ Սահմանադրությունում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Եր., 2017թ. № 3 (24), էջ՝ 25-41:

[261]Տե՛ս «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը, (ընդունվել է 22 փետրվարի 2007թ.): Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2007.03.28/17(541) Հոդ.359:

այլ հոգևոր ու ազգային ինստիտուտ[262]: Ընդ որում, հայ ժողովրդի հոգևոր կյանքում այդ եկեղեցու ունեցած պատմական և ներկա առաքելությունները Սահմանադրությամբ արտահայտվում են միմյանց հետ սերտորեն հանգուցված այնպիսի ազգային ձեռնարկումներում ինչպիսիք են՝ ա) ազգային մշակույթի զարգացումը, բ) ազգային ինքնության պահպանումը (Սահմանադրության հոդվ.18, մաս 1):

Ուշագրավ է, որ ազգային եկեղեցու առաքելությունը ընդգծող համանման հասկացություններ են սահմանված նաև «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախաբանում և 2000 թվականին ՀՀ կառավարության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև ստորագրված Մտադրությունների հուշագրում, որտեղ եկեղեցին ճանաչվում է որպես հայ ժողովրդի հոգևոր կյանքի շինության ու ազգապահպանման կարևոր պատվար[263] և կարևորվում է Հայոց պետականության հետագա զարգացման և ամրապնդման գործում նրա անուրանալի դերակատարումն ու նշանակությունը, ինչպես նաև բացառիկ և առանձնահատուկ դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում ու արդի հայ հասարակության կյանքում[264]:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոշարադրյալը, դրանով պայմանավորված հիմնախնդրին առնչվող վերլուծության արդյունքները՝ անհրաժեշտ է

[262] Տե՛ս **Մ. սարկ. Բեհբուդյան**, Հայաստանյայց եկեղեցին՝ որպես հայրենասիրության օջախ, Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, Էջմիածին, 1959թ., ԺԶ (7), էջ՝ 32-34:

[263] Տե՛ս «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախաբանը:

[264] Տե՛ս «Մտադրությունների Հուշագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև», Ստորագրվել է 17, մարտի, 2000թ.: Սկզբնաղբյուրը՝ http://www.gov.am/u_files/file/kron/mtadrutyunneri%20hushagir.pdf:

ներկայացնել «ազգային եկեղեցի» իրավական հասկացության վերաբերյալ հետևյալ բնորոշումը, ըստ որի. **«Հայաստանի Հանրապետությունում ազգային եկեղեցին՝ Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչված և նրա պաշտպանության ներքո գտնվող Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին է, որը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում շարունակաբար ունեցած իր բացառիկ առաքելությամբ նպաստում է հայ ազգի հարատևմանը և Հայկական պետականության ամրակայմանը»:**

Անշուշտ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետությունում ազգային եկեղեցին կազմակերպաիրավական և համակարգային առումներով ներառում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հոգևոր կենտրոնը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների նվիրապետական աթոռները:

Ընդ որում, «բացառիկ առաքելություն» եզրույթի բովանդակության տակ անհրաժեշտ է նկատի ունենալ հայ ժողովրդին մատուցած հոգևոր, բարոյական, նյութական ծառայությունների որակական, իմացաբանական ու արժեբանական դերն ու նշանակությունը, որի բացառիկությունը պայմանավորված է այն շեշտադրմամբ, որ բացի Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուց, որևէ այլ կրոնական կազմակերպություն երբևէ նման կարևորագույն գործառույթ չի ստանձնել:

Ընդ որում, ազգային եկեղեցու սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն

թույլ է տալիս պետության և այլ կրոնական կառույցների հետ լիարժեք իրավական փոխգործակցության դաշտ ձևավորել՝ առանց այն պետական կրոն (եկեղեցի) ճանաչելու:[265]:

Ասվածի համատեքստում անհրաժեշտ է ընդգծել նաև, որ «ազգային եկեղեցի» եզրույթը ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի բովանդակային իմաստով չի կարելի նույնականացնել՝ ոչ «պետական կրոնի (եկեղեցու)» և ոչ էլ առավել ևս «պարտադիր կրոնի» հասկացությունների էության հետ[266]:

Այնուամենայնիվ, պետություն-եկեղեցի իրավահարաբերությունների վերլուծության շրջանակում անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ նկատառումները. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում ամրագրելով պետության աշխարհիկության սկզբունքը, օրենսդիրը ազգային եկեղեցուն վերապահում է մի շարք մենաշնորհային առաքելություններ, որոնց խնդրահարույց ձևակերպումներով և տարընթերցումներով պայմանավորված հարկ է կարևորել եկեղեցու

---

[265]Առանձին հեղինակներ շեշտադրել են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես պետական եկեղեցի ճանաչելու իրավակարգավորման անհրաժեշտությունը: Տե՛ս, օրինակ **Տ. Սահակյան**, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու իրավական կարգավիճակի մի քանի հարցեր, Հայոց եկեղեցի և պետություն, Էջմիածին-Օշական-Ծաղկաձոր, Միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2000թ., էջ՝ 189-201:

[266] Այսպես, առանձին հեղինակների կարծիքով, եթե «պետական եկեղեցի» («state church») եզրույթն իր բովանդակային նշանակությամբ կապված է եկեղեցական օրենքի («ecclesiastical law») հետ, ապա «ժողովրդական (ազգային) եկեղեցի» («folk church») հասկացությունը ավելի շատ վերաբերում է սոցիոլոգիական բնութագրումներին: Այս մոտեցումը բխում է կառավարման սոցիալական տեսությունից, որի առանցքը սոցիալական ինքնակառավարման գաղափարն է: Այս դիտանկյունից հարցին մոտենալով հարկ է ընկալել Եկեղեցին՝ որպես ազգային-հոգևոր բնույթի քաղաքացիական հասարակության ինստիտուտ // Տե՛ս **Javier Martínez-Torrón, W. Cole Durham,** Religion and the Secular State / La religion et l'Etat laïque, The International Center for Law and Religion Studies Brigham Young University Provo, Washington, D.C. July 2010, էջ՝ 10:

կողմից «բարեգործության և բարեխնամ գործունեության ծավալումը» (հոդվ. 17): Միաժամանակ, նույն Օրենքի 7-րդ հոդվածի «ժ» կետի դրույթի համաձայն՝ «Կրոնական կազմակերպությունների հոգևոր-կրոնական գործունեությունը իրականացվում է հետևյալ իրավունքների հստակ ընդգծված շրջանակներում...՝ ժ) զբաղվել բարեգործությամբ»:

Սակայն, «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ բարեգործություն իրականացնելու իրավունքը կամավորության և նպատակների ազատ ընտրության սկզբունքով վերապահված է բացառապես ֆիզիկական և իրավաբանական անձանց[267]: Այսինքն, օրենսդիրը մի դեպքում, բարեգործություն իրականացնելու իրավունքը վերապահում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, իսկ մեկ այլ դեպքում՝ դիտարկում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու բացառիկ մենաշնորհը:

Օրենսդրական նման հակասությունների առկայության համատեքստում հարկ է նշել, որ ՄԱԿ-ի «Կրոնի կամ համոզմունքի վրա հիմնված անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ հռչակագրի» 6-րդ հոդվածի «բ» կետով սահմանվում է, որ՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը ներառում է նաև բարեգործական կամ մարդասիրական հաստատություններ հիմնելու իրավունքը[268]:

---

[267] Տե՛ս «Բարգործության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, (ընդունվել է 08.10.2002): Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.11.14/49(224) Հոդ.1151:

[268] Տե՛ս ՄԱԿ-ի «Կրոնի կամ համոզմունքի վրա հիմնված անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ հռչակագիրը» A/RES/36/55 25.11.1981: Սկզբնաղբյուրը՝ http://www.un.org/documents/ga/res/36/a36r055.htm:

Ակնհայտ է, որ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուց բացի, Հայաստանի Հանրապետությունում իրենց եկեղեցիներն ունեն նաև կրոնական այլ կազմակերպությունները, որոնք «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի ուժով՝ իրավունք ունեն «կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ աղոթատներում և դրանց պատկանող տարածքում…», ինչը նույնպես հավաստում է այն մասին,որ նման գործունեության ուղղությունները չեն կարող դիտարկվել միայն ազգային եկեղեցու բացառիկ մենաշնորհ:

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին թե՛ ավանդույթի ուժով, և թե՛ իրավունքի ուժով, անշուշտ, իրականացրել և շարունակում է իրականացնել իր պատմական առաքելությամբ պայմանավորված գործառույթները: Սակայն, օրենսդրական կարգավորումների շրջանակում նրան վերապահել «մենաշնորհային» բնույթի գործառույթներ, անընդունելի է հենց Սահմանադրության 17-րդ հոդվածի 1-ին մասով՝ կրոնական կազմակերպությունների գործունեության ազատության երաշխավորման տեսանկյունից:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև 2000 թվականի մարտի 17-ին ստորագրված Մտադրությունների հուշագրով կարևորվեց ոչ միայն այդ առանձնահատուկ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը, այլև մեկնակետ հանդիսացավ պետության կողմից սուրբ եկեղեցու

դերի վերարժևորման ու իրավական կարգավիճակի հիմնախնդիրների գնահատման տեսանկյունից[269]:

Այսպես, առաջնորդվելով Հուշագրի 1-ին մասի պահանջներով, ՀՀ կառավարությունը 2000 թվականի հուլիսի 17-ին ընդունեց «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն վանքեր և եկեղեցիներ անհատույց՝ սեփականության իրավունքով հանձնելու մասին» թիվ 403, իսկ հետագայում՝ 2001 թվականի հուլիսի 9-ին, նաև «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն վանքեր և եկեղեցիներ հանձնելու մասին» թիվ 616 որոշումները: Ընդ որում, այդ որոշումների շրջանակում ՀՀ կառավարությունը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն անհատույց սեփականության իրավունքով հանձնեց պետական սեփականություն հանդիսացող թվով 165 պատմամշակութային հուշարձաններ[270]: Միաժամանակ, ազգային եկեղեցու սեփականությունը հանդիսացող «մշակութային հաստատությունների, հավաքածուների, թանգարանների, գրադարանների և արխիվների պահպանման և հարստացման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական

---

269 Մտադրությունների հուշագիրը ստորագրվեց Մայր Աթոռ ս. Էջմիածնում 2000թ. մարտի 17-ին՝ ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Ճ. Կարամանուկյանի, ՀՀ վարչապետի խորհրդական կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լ. Մկրտչյանի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի և ՀՀ Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տեր Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի կողմից:

270Տե՛ս «Հայաստանյայց առաքելական եկեղեցուն վանքեր և եկեղեցիներ անհատույց սեփականության իրավունքով հանձնելու մասին» 17 հուլիսի 2000թ. N 403 որոշումը: Սկզբնաղբյուրը՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7938; «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն վանքեր և եկեղեցիներ հանձնելու մասին» 9 հուլիսի 2001թ. N 616 որոշումը: Սկզբնաղբյուրը՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=88332:

բյուջեի շրջանակում պետք է պետական աջակցություն ցուցաբերեր[271]:

Հայաստանի Հանրապետությունը ըստ արժանվույն գնահատելով Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու բացառիկ դերն ու առաքելությունը, վերջինիս վերապահել է որոշակի հարկային արտոնություններ՝ սեփականության իրավունքով պատկանող՝ հուշարձանի կարգավիճակ չունեցող եկեղեցիների, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, եկեղեցական և ծիսական պարագաների արտադրության և իրացման համար օգտագործվող շենքերի ու շինությունների, ինչպես նաև՝ սեփականության և անհատույց մշտական օգտագործման իրավունքով պատկանող կրոնական, պաշտամունքային շենքերի ու շինությունների, հուշարձանի կարգավիճակ չունեցող եկեղեցիների, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, եկեղեցական և ծիսական պարագաների արտադրության և իրացման համար օգտագործվող կառույցների, Եկեղեցու ներքին սպասարկումն իրականացնող արհեստանոցների զբաղեցրած, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերի

[271]Եկեղեցու պատմամշակութային ժառանգության պահպանման և ամրակայման համար հատկացվող միջոցները, դրանց նկատմամբ պետական հոգածությունն ու հատուկ ուշադրությունը առհավատչյան են այն համոզման, որ այդ հոգևոր ժառանգությունը հանդիսանում է ոչ միայն եկեղեցական-կրոնական, այլև համազգային ու համապետական ժառանգության մի մասը: Հետևաբար արդարացված է, երբ եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը դիտվում է ազգային ինքնության հենքի կարևոր և անբաժանելի մաս // Տե՛ս «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 7-րդ հոդվածները, ընդունվել է 22 փետրվարի 2007թ.: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2007.03.28/17(541) Հոդ.359:

գծով անշարժ գույքի հարկից ազատելու վերաբերյալ[272]:

Բացի այդ, հարկային արտոնությունների շրջանակում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին ազատվում է հարկերից՝ ստացած նվիրատվությունների ու ընծաների, ինչպես նաև ծիսական նշանակության առարկաների և պարագաների արտադրության և իրացման գործառնություններից[273]: Անշուշտ, պետությունը ազգային եկեղեցու հետ կառուցած իր գործընկերային հարաբերություններում չի սահմանափակվում միայն հիշատակված արտոնություններով:

Պետության և եկեղեցու հարաբերությունների մի շրջանակ վերաբերում է նաև կրթությանը: Ընդ որում, հայոց գրային համակարգի ու դպրության կազմավորման դերում կարևոր դերակատարություն ունեցող Հայ առաքելական եկեղեցին դարձավ հայրենական գիտության գրեթե բոլոր ճյուղերի զարգացման նախաձեռնողն ու շարժիչ ուժը[274]: Այդ առումով անհրաժեշտ է կարևորել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի իրավակարգավորման նշանակությունը, ըստ որի՝ «Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու

[272] Տե՛ս ՀՀ «Հարկային օրենսգիրքը», ընդունվել է 4, հոկտեմբերի, 2016թ.: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ.1038:

[273] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքի 11-րդ հոդվածը: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2007.03.28/17(541) Հոդ.359:

[274] Տե՛ս **Տ. Սարգսյան**, Հայ եկեղեցու դերը երիտասարդ սերնդի դաստիարակման գործում, Էջմիածին. Պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2012թ., ԿԸ (Ձ), էջ՝ 100-110:

զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ Եկեղեցին»:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների օրենքով կարգավորման սահմանադրական պահանջը (Սահմանադրության հոդվ. 18, մաս 2) ինքնին չի հակադրվում կրոնական կազմակերպությունների գործունեության ազատության սահմանադրական երաշխավորման բովանդակությանը (Սահմանադրության հոդվ. 17, մաս 1):

Ընդ որում, հարկ է շեշտադրել, որ պետության և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների շրջանակներում անհրաժեշտ է դիտարկել Հայաստանի Հանրապետության ու Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունների առկայությունը, որոնց արդյունավետությամբ է պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում միջեկեղեցական փոխըմբռնման, կրոնական ոչ միատեսակ համոզմունքներ ունեցող մարդկանց համերաշխության երաշխավորումը[275]:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների համալիր վերլուծության լույսի ներքո անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի 2-րդ մասի «կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից» դրույթն ուղղակի իմաստով չի

[275] Նախաձեռնություն է հանդես բերվել ուղղադավան եկեղեցիների մասնակցությամբ ձևավորել Եկեղեցիների ազգային խորհուրդ, որի վերաբերյալ դեռևս վերջնական հստակեցում չկա: Տե՛ս **Ա.Լուսյան**, Հոգևոր-կրոնական դաշտի խնդիրները Հայաստանում, Կրոն և հասարակություն № 9, դեկտեմբեր, 2009թ., էջ՝ 10-22:

ենթադրում բացահայտ կրոնամերժության առկայություն, ինչն իր հերթին չի նշանակում, որ պետության աշխարհիկությունը դահանգեցնում է ապակրոնականության:

Սակայն, աշխարհիկ պետության հետ իր հարաբերությունները վերարժևորելու առումով կարևոր դերակատարություն ունի հենց Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին՝ «...մենք մեծապես կկորցնենք մեր վստահելիությունը, եթե չխոսենք այսօրվա աշխարհի լեզվով և եթե չօգտագործենք կյանքի ժամանակակից մշակույթի ոճերը: Մեզ շրջապատող սեկուլյար աշխարհն այնքան հզոր է դարձել, որ մենք ուրիշ այլ ընտրանք չունենք, քան հարմարվել դրան մեր քրիստոնեական կյանքում»[276]:

Ասվածից, բնավ, չի հետևում, որ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները գտնվում են ինստիտուցիոնալ սերտաճման գործընթացում, այլ, ընդհակառակը, այդ փոխգործակցության մեջ կարևորվում է կրոնական բազմակարծության հենքի վրա ինտեգրման նոր ձևաչափը, այդ թվում՝ իրավական գործընթացների շրջանակում:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ միջազգային իրավունքը չի արգելում որևէ կրոնի առանձնահատուկ դերի ընդգծումը[277]: Այս իմաստով Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների ընդլայնված դաշտի

---

276Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս**, Դեմ առ դեմ ինքներս մեզ հետ, Էջմիածին, 1997թ., Զ-Է, էջ՝ 36-41:

277Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի, Եվրախորհրդի մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Կրոնի կամ համոզմունքի ազատության հարցերով խորհրդատվական խորհրդի թիվ 530/2009 համատեղ եզրակացությունը, էջ՝ 16, Ստրասբուրգ, 23.06.2009թ. CDL-AD(2009)036: Սկզբնաղբյուրը՝ https://www.e-gov.am/u_files/file/kron/1%20Joint-opinion-AJ.pdf:

ձևավորումը լիովին համատեղելի են պետության աշխարհիկության սկզբունքից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների հետ[278]:

**Այսպիսով՝** ամփոփելով աշխարհիկ պետության սկզբունքի իրականացման համատեքստում Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների հիմնախնդիրների վերլուծությունը, կարելի ներկայացնել հետևյալ ամբողջական եզրահանգումները.

1. Ժամանակակից իրավունքի արդիականացման պայմաններում քարացած պատկերացումներով և կարծրատիպերով մեկնաբանել պետության աշխարհիկության սկզբունքը ոչ միայն անընդունելի է,այլ և խիստվնասակար է՝ հատկապես այն պետությունների համար, որտեղ հոգևոր-կրոնական աշխարհայացքը ազգային դիմագծի ինքնուրույն բաղադրիչ է հանդիսանում:

Պետության և եկեղեցու առանձնացումը, որը լայն հաշվով ընկած է աշխարհիկ պետության հայեցակարգի հիմքում, չպետք է ընկալել բացահայտ կրոնամերժության կամ ապակրոնականության իմաստով:

2. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես «ազգային եկեղեցու» սահմանադրական կարգավիճակը չպետք է նեղ իմաստով նույնականացնել «կրոնական կազմակերպություն» հասկացության իրավական բովանդակության և կազմակերպաիրավական տեսակի հետ,սակայն,լայն իմաստով,այն նույնպես

---

[278]Տե՛ս **Գ. Մկրտչյան**, Պետություն-Եկեղեցի հարաբերությունների օրենսդրական առանձնահատկությունները արդի Հայաստանում, Էջմիածին. Պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2017թ., ՀԴ (Ը), էջ՝ 129-138:

կրոնական կազմակերպություն է՝ իր գործունեության հիմքում ունենալով հոգևոր (կրոնական)նպատակներ և գործառույթներ:

Միաժամանակ, այս մոտեցմամբ պայմանավորված՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին մյուս բոլոր կրոնական կազմակերպությունների հետ միասին առանձնացված է պետությունից՝ ուղղակիորեն հաստատելով վերջինիս աշխարհիկ բնույթը, սակայն, անընդունելի է Սահմանադրության 41-րդ հոդվածի ուժով արդեն իսկ ճանաչված ազգային եկեղեցու իրավասուբյեկտությունը և հայ ժողովրդի հոգևոր կյանքում դրա բացառիկ առաքելությունը պայմանավորել ու կախման մեջ դնել օրենքով նախատեսված ընթացակարգերից՝ մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է նույն եկեղեցու ստեղծման իրավահարաբերության՝ օրենքի ուժով կարգավորվելու հնարավորության մասին:

3. «Պետություն-եկեղեցի» հարաբերությունների իրավական կարգավորման և դրա հետագա կատարելագործմանն ուղղված ձգտումները արտահայտվում են այդ հարաբերությունների ինստիտուցիոնալ կապի ձևավորման մեջ: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին չի կարող մեկուսանալ պետությունից և հասարակությունից ու դասական իմաստով գործել անջատ: Ավելին, Հայաստանի Հանրապետությունը այդ կազմակերպությունների առանձնացման հետ մեկտեղ, «պետություն-եկեղեցի» հարաբերություններում որդեգրել է ազգային եկեղեցու հետ հարաբերությունների համադրման ձևաչափը,որը,ինչպես արդեն նշվել է,բնորոշ է նաև

արդի ժողովրդավարական, իրավական, աշխարհիկ մի շարք պետությունների:

4. Հաշվի առնելով հետազոտության վերլուծության արդյունքները՝ անհրաժեշտ է ներկայացնել «ազգային եկեղեցի» իրավական հասկացության վերաբերյալ հետևյալ բնորոշումը, ըստ որի. «Հայաստանի Հանրապետությունում ազգային եկեղեցին՝ Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչված և նրա պաշտպանության ներքո գտնվող Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին է, որը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում շարունակաբար ունեցած իր բացառիկ առաքելությամբ նպաստում է հայ ազգի հարատևմանը և Հայկական պետականության ամրակայմանը»: Ընդ որում, կազմակերպաիրավական և համակարգային առումներով ազգային եկեղեցու կազմում անհրաժեշտ է ներառել՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հոգևոր կենտրոնին, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությանը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների նվիրապետական աթոռներին:

Հիշյալ իրավաընկալումների դիրքերից անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունը իրապես աշխարհիկ պետություն է, որտեղ մի կողմից, սահմանադրական կարգավորումների մակարդակում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի հենքի ներքո, իսկ, մյուս կողմից՝ անգնահատելի դերակատարում ունի Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային

ինքնության պահպանման գործում: Այս իմաստով աշխարհիկ պետության հայեցակարգի ներդրումը՝ որպես կարևորագույն համամարդկային արժեք, պետք է ներդաշնակորեն համաձայնեցվի ազգային արժեհամակարգի, անցյալի փորձի և ապագա տեսլականի հետ՝ առ հզոր, իրավական, ժողովրդավարական ու բարեկեցիկ Հայաստանի Հանրապետության կառուցման:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված հետազոտության արդյունքներով պայմանավորված պատեհ ենք համարում անել հետևյալ եզրակացությունները.

1. Աշխարհիկ պետության գաղափարը վաղ միջնադարից հասունացած և էվոլյուցիոն զարգացման ուղի անցած քաղաքակրթական արժեք է, որի շնորհիվ մշակույթը, գիտությունը, իրավունքը, հասարակական կյանքը ձերբազատվեցին կրոնական միակողմանի մոտեցումներից և վերջինիս՝ պետական կառավարման, ինչպես նաև քաղաքականության վրա ունեցած ահռելի դերակատարությունից:

2. Թեև աշխարհիկ պետության առաջացումը, մեծ մասամբ, նախանշվեց եկեղեցու դեմ պայքարով, որոշ դեպքերում վերածվելով նույնիսկ աստվածանարգության, այդուհանդերձ, իր էությամբ, այդպիսի պետությունը չդիտարկվեց աստվածամերժական, այլ սահմանազատելով պետական և կրոնական ոլորտները՝ դարձավ մտքի և խղճի ազատության իրավունքի ապահովման հուսալի պատվար:

3. Պետության և եկեղեցու առանձնացումը՝ որպես աշխարհիկ պետության գաղափարի կենսագործման հիմք, առաջին անգամ ամրագրվեց Ֆրանսիայի Հանրապետության իրավունքի նորմերում՝ կանխորոշելով դրա հետագա տարածումը աշխարհի բազմաթիվ երկրներում:

4. Հայկական պետությունը անցել է միմյանց տրամագծորեն հակադրվող շրջափուլեր՝ դրանցից յուրաքանչյուրում ունենալով իր ձեռքբերումները և կորուստները: Քրմապետության տարանջատումը արքայի պաշտոնից առաջին կառուցվածքային տեղաշարժը եղավ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առնչություններում, որով և ավարտվեց աստվածապետության երկարատև շրջանը: Վերլուծելով Հայկական պետության և կրոնի հարաբերակցության հիմնախնդիրներն ու էվոլյուցիոն զարգացման առանձնահատկությունները, պայմանականորեն սահմանվել են այդ հարաբերությունների պատմաիրավական հետևյալ շրջափուլերն ու դրանց նշանակությունը՝

ա) Հին Հայաստանի աստվածապետական շրջան (մ.թ.ա. XXVII դ.- մ.թ.ա. VI դ.), երբ պետությունը սերտաճում էր կրոնական դասի հետ, բայց լինելով նրանից անջատ: Այդ շրջանը վկայում էր թագավորական իշխանության հովանավորությունը վայելող քրմական դասի կողմից միապետի բացարձակ իշխանության ընդունման մասին:

բ) Թագավորի և քրմապետի պաշտոնների առանձնացման շրջան (սկսած՝ մ.թ.ա VI դ.), երբ պետությունը վերահսկողության տակ էր վերցնում ամբողջ հոգևոր դաշտը սահմանելով կրոնը՝ որպես իշխանության լծակներից մեկը, պայքարում այլախոհության դեմ: Այս շրջանում

խոսք չէր կարող գնալ աշխարհիկ պետության ժամանակակից իրավաընկալման մասին, սակայն քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու քաղաքական ակտի արդյունքում էլ ավելի խորացավ պետության ազդեցությունը կրոնի նկատմամբ, ինչն իր հերթին աշխարհիկ պետության զարգացման վրա հետագայում էական նշանակություն ունեցավ:

գ) Քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ճանաչման շրջան (մ.թ. IV դ.- XIV դ.), երբ պետությունը իր հովանու տակ առնելով քրիստոնեությունը, որոշ բացառություններով, իսկ եկեղեցու հետ հաստատեց գործընկերային հարաբերություններ՝ պայքարելով կրոնական բազմակարծության և այլախոհական դրսևորումների դեմ: Միաժամանակ, պետական մակարդակով սկսվեց քրիստոնեության տարածումը, եկեղեցին դարձավ տաճարական սեփականության իրավահաջորդը՝ ներպետական և արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործում տիրապետելով առանցքային դերակատարության: Սակայն, դա ոչինչ չփոխեց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններում: Այս շրջանում, նույնպես խոսք չէր գնում աշխարհիկ պետության ժամանակակից իրավաընկալման մասին, քանի որ, եթե կրոնի նկատմամբ պետության ազդեցության շրջանակներն էլ ավելի էին մեծանում, ապա դա ենթադրում էր միայն աշխարհիկ պետության զարգացման վրա բարենպաստ գործոնների ու պայմանների առկայություն:

դ) Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակաշրջան (1918-1920 թթ.), երբ պետության, կրոնի և իրավունքի հարաբերակցության մասով որակապես նոր իրադրություն ստեղծվեց, երբ վեցդարյա պետության բացակայությունից հետո

վերստին հիմնադրվեց հայոց պետականությունը: Միաժամանակ, այս ժամանակաշրջանում, առաջին անգամ փորձ արվեց պետության և եկեղեցու իրավական հարաբերությունների կարգավորման համար մշակել «Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև դաշնագրի» նախագիծը, որի բովանդակային տրամաբանությունից էր բխում հենց եկեղեցու և պետության փոխգործակցության անհրաժեշտությունը: Միաժամանակ, այս շրջանը նախանշվեց պետաեկեղեցական փոխհարաբերությունների ակտիվ կառուցմամբ, և այսօր՝ առավել քան երբևէ, կարևոր գործնական նշանակություն ունի այս շրջանի պետաեկեղեցական ոլորտում կուտակված փորձի և ձեռքբերումների վերարժևորումը և արտացոլումը պետություն-եկեղեցի հարաբերությունների արդի հայեցակարգում:

